



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1891

Մ Ա Ր Տ

1891 № 3

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Էրես

1	ՆԱՄԱԼԵԱՆ, Ա.	295	Նւագած կեանքը:
2	ՄԱՆՈՒՂԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	305	*** (բանաստեղծութիւն):
3	"	306	Թիթևա. և Շուշան (բանաստ.)
4	ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ	308	Սափրիչների մասին:
5	ԾԱՏՈՒՐԵԱՆ (Արծիւհան)	313	Չեմ նախանձում:
6	ՊՈԷ, ԷԳԳՍՐ	315	Կենդանի պատկեր:
7	ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.	319	Բառփորի արկերում:
8	ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	341	*** (բանաստ.):
9	ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼԵԲՍԱՆԳՐ.	342	Բոլորի մեծարանքը:
10	ՇՐՈՒՄՊՅ, Գ. Ա.	356	Հողաբանութիւնը Աւրաղայում:
11	ՍԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	367	Բանաստեղծ հրապարակարար I:
12	ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐԻԱՆԳ.	375	Հողի իշխանութիւն. Վլ. Աւագեհովի:
13	Մ., ՔԷ., Բ., ՔԷ.	387	Գրականութիւն:
14	ԼՈՐՍԻՆԻ	392	Ամուսնի քրոնիկ:
15	Շ.	395	Քաղաքական Տեսութիւն:
16	ԽՄԲ.	411	Խմբագրութեան կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинянца, на Гол. просп. соб. д. № 41.

1891

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1891

Մ Ա Ր Տ

1891 № 3

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Ա. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1891

კ 9 4 0 0

საქართველო, საქართველოს, საქართველოს

კ 9 4 0 0

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Февраля 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ՆՒԱԶԱԾ ԿԵԱՆՔԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

Բազումն էր, եթանասուն թւականների սկիզբներում: Աշունը արդէն կիսել էր և երեկոները ցուրտ էր անում: Մարդիկ սկսում էին սովորել դռները փակել և աշխատում էին սենեակների մէջ տաքութիւն պահպանել:

Անշուք և կիսախարխուլ քարանսարաչի սենեակներից մէկում զետեղւած էր մշակների մի խումբ: Սենեակը դատարկ էր ամբողջ ցերեկը, որովհետև մշակները զրտում զանազան զործերի վերայ էին լինում: Նա կենդանանում էր երեկոները, երբ մշակները ժողովւում էին միմեանց տեսնելու և գիշերելու:

Նորեկ պանդուխտ Օվանէսը, այսօր աւերանում էր այդ խմբին: Նա մշակներից մէկի հետ էր ծանօթ միայն և սորա միջոցով նա ընդունւեց խմբի մէջ: Նորա մասնակցութիւնը մինչև անգամ ջանկալի էր խմբի համար, որովհետև նա բան հասկացող էր համարւում և զրազէտ էր:

Օվանէսը իւր ծանօթ մշակի հետ եկաւ սենեակ, երբ արդէն մութն ընկած էր: Մտնելով սենեակը, նոքա թէև մթութեան մէջ, ոչ ոքի չը նկատեցին, բայց և այնպէս բարեւեցին:

— Բարի իրիզուն:

— Ատուծու բարին, պատասխանեցին կամաց մի քանի ձայներ:

Օվանէսը իւր ծանօթին հետևելով փոքր ինչ առաջ գնաց սենեակի մէջ, վայր դրաւ իւր կապոցը և նստեց վերան:

Այդ ժամանակ սենեակի մի անկիւնում վառւեց մոմ, որից աղօտ լոյս սփռւեց շորս կողմը: Օվանէսը այդ ժամանակ կարողացաւ տեսնել սենեակը և նորա մէջ նստածներին:

Սենեակի մէջ հաւաքւած էր մինչեւ տասն-տասներկու մշակ։ Ամեն մարդ տարածել էր իւր անկողինը և վերան ու մօտին նստել։ Մի քանիսի անկողինը կառարեալ էր, ունէր և՛ վերմակ ու զոշակ. միւսներինը — մի կարպետ էր զոշակի փոխարէն. իսկ մի քանիսը ոչինչ չունէին ամենեւին։ Սենեակի մի անկիւնում դրած էր մի ջրի կուժ։ Մի քանի փոքրիկ արկղներ էլ ընկած էին այս ու այն մշակների կողքին։ Օվանէսի վերայ այս անշքութիւնը և աղքատութիւնը ծանր տպաւորութիւն արաւ։

Մշակները պատրաստուում էին՝ ըստ երեւոյթին՝ մի կտոր հաց ուտելու և յետոյ քնելու։

Օվանէսը մանրամասն տնոգելով՝ ման էր ածում իւր աչքերը։ Յանկարծ նորա ուշքը զրաւեց ցնցոտի հագած մի մարդ, որ նստած անկիւնում թէյ էր խմում՝ թիթեղեայ թէյամանից։ Նա ժամանակ ժամանակ ինքը իւր հեռ խօսում էր կամաց փնթփնթալով։

— Փառք Քեզ, Տէր, փառք, որ ինձ այս ուրախութիւնը տուել ես. փառք քեզ, զանգատի տեղ չունեմ։

Օվանէսը նայեց թշւառին և չք հասկացաւ թէ՛ ի՞նչու մն է նորա ուրախութիւնը։

Նա նման չէր միւս մշակներին։ Նա չունէր սոցա բնական, միամիտ, բարի կերպարանքը։ Նա ճնշւած, սաստիկ տանջւած, ճմլածի մի հայեացք ունէր, որից երևում էր, որ նա շատ ծանր օրեր է է տեսել իւր կեանքում։ Նա բոլոր իւր կազմւածքով, իւր շարժումներով, իւր սովորութիւններով սաստիկ տարբերւում էր շրջապատողներին։

Ո՛վ պէտք է լինի այս օտարտուն, մտածեց Օվանէսը։

Թշւառը ածեց բաժակի մէջը շատ բաց թէյ. կծեց հացի մի կտոր և սխեց կում-կում թէյ խմել։

— Փառք Քեզ, Տէր, կրկնեց նա, լի եմ լի, փառք Քեզ, Քո շնորհքով կենդանի եմ, ո՞վ գիտէ, որքան կան զժքազղ, անտուն մարդիկ. ես շնորհակալ եմ, տեսնում եմ, որ հանդիստ չունչ եմ քաշում, առանց ցաւի սպրում եմ, փառք Քեզ։

Որչափ տանջւած հալածւած պէտք է լինի այս մարդը, որ իւր ներկայ թշւառ գոյութեան համար այնպէս սրտասուչ փառք է տալիս։ Օվանէսը սխեց աւելի զննաբար նայել և ինչ տեսաւ. տեսաւ

որ խեղճը դուրի է մի ականջից: Այդ բանը նորան բոլորովին զարմացրեց և ցնցեց.

— Ո՞վ է դա, հարցրեց նա իւր ծանօթից, մշակ է՞:

— Ձէ, մշակ չէ, բայց մէկ-մէկ մշակութիւն էլ է անում:

— Ի՞նչ մարդ է:

— Գերի է, ազատւած զերի է: Թիւրքմենաստանից է եկել: Ռուսը երբ դնացել է աջնոեղի հողը առել, գերիներին ազատել է... սա էլ աջն ազատւածներիցն է:

Օվանէսին սկսեց աւելի ու աւելի հետաքրքրել այդ մարդը: Օվանէսը նկատեց նորա մօտ ընկած մի պատառոտւած գիրք և օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ հարցրեց:

— Այն ի՞նչ գիրք է, կարելի՞ է տեսնել, զիմեց նա աղքատին բարձր ձայնով:

— Սա ի՞նչ է: Սա սուրբ գիրք է, սա անհաւատներից ազատւած սրբութիւն է: Աւետարան է՝ հին՝ ձեռագիր:

Մշակներից մէկը ջանձնեց Օվանէսին գիրքը, որ խկապէս դուրս եկաւ մի հին ձեռագիր աւետարան. բայց քրքրւած, պակաս թէ զլիսից, թէ միջից և թէ վերջից:

Ինչպիսի դժւարութեամբ ձեռագիրն էր ազատուել, աչնպէս էլ նորա խեղճ տէրը: Նրկունն էլ պատառոտւած, աղտոտւած, ճզմւած, չարշարւած:

— Ինքդ կարդալ զիտե՞ս, հարցրեց Օվանէսը:

— Ո՛չ, սիրելիս, չեմ իմանում: Բայց իմացողի կարդացնել տւած եմ: Ողորմած հոգի ներսէսը, Աստուած նորա հոգին լուսաւորի, դուք չէք ճանաչիլ, խեղճը նահատակ եղաւ, ա՛հ թէ մի երկու տարի էլ կապրէ՛ր... հա՛, նա կարդալ իմանում էր:

— Ինչպէս երևում է, կեանքումդ ծանր օրեր շատ ես տեսել, ասաց Օվանէսը կարեկցաբար:

Խեղճը գլուխը թափ տուեց, աչքերը երկինք բարձրացրեց և տնքալով արտասանեց.

— Ես նորից ծնւել եմ. ես նորից աշխարհք եմ ընկել: Գժոխքից արքայութիւն եմ փոխւել: Ե՛հ... դուք չէք կարող հասկանալ: Աստուած ոչ ոքի աջն օրին չը հասցնի... խեղճ ներսէս, նահատակւեց սուրբի պէս:

—Անունդ ի՞նչ է, հարցրեց Սվանէսը:

—Ստեփան:

—Ստեփան աղբէր, մի քանի բան պատմիր քո քաջած օրերիցդ:

—Ի՛նչ պատմեմ: Ինչ պատմելու բան է, որ պատմեմ: Կատարեալ անասունի կեանք էինք վարում: Իմ առաջնայ տէրս լաւ մարդ էր. մի քիչ խղճում էր, իսկ երկրորդը և երրորդը աֆսիսի անգութներն էին, որոնց հաւասարը հազիւ թէ մէկ էլ պատահի աշխարհումս: Հազիւ մէկ տիրոջ սովորում էինք, մէկ էլ տեսար մի ուրիշի ձեռքն էինք ընկնում:

—Ինչպէ՞ս:

—Մտնում էին էլի, ուղիղ ծախում բազարում, ինչպէս մէկ ապրանք: Սակարկութիւն էր լինում շատ մեծ: Առնողը չէր հաւանում ապրանքը, փուռ էր զնում, ծախողն էլ, զլխին զիպչի, իւր կերպ գովում էր: Մէկ անպիտան հարուստ (ամեն անգամ, որ միտքս է դալիս, կատաղում եմ) մօտեցաւ ինձ, բացեց առամներս նայեց, ձեռքերիս ափերը բաց արաւ, մատներս տնդեց, մէջքս մի բռնեցքով փորձեց և կարծես հաւանեց. բայց էլի չ'առաւ, ինչ որ մի դատարկ հաշի պատճառով:

—Ի՛նչ էիք անում այդ տէրերի մօտ:

—Ամեն բան, ինչ հրամայում էին. տան ծառայութիւն էինք անում, բեռն էինք կրում, պահապան էինք դառնում: Խեղճ Ներսէսին բեռնակիր էլի պէս չարչարում էին: Բեռը զնում էին, մէջքին և քշում: Եթէ յօգնում էր, կանգ էր առնում, մորսկով նորան զգաստացնում էին: Ատուած հոգին լուսաւորի:

—Ո՛ւրտեղից, ի՞նչպէս ընկաք այդ անգութների ձեռքը:

—Դա անվերջ պատմութիւն է: Դա մի քանի օրւայ ասելիք է: Հէնց այն բաւական համարիր, որ երբ գերի ընկայ, ինձ տանողը ինքը ձիաւոր էր, իսկ ես ոտքով: Նա թոկը գծել էր վիզս ու ձիու վերայ նստած՝ քաշում էր ինձ իւր ետեւից անապատների միջով:

Ստեփանը խոր հոգոց հանեց և կանգ առաւ: Բաժակում թէյը հովացել էր: Նա սխեց՝ զլուխը թափ տալով՝ թէյ խմել: Սվանէսը նայեց նորա անձոռնիացած, կիսաապուշ երեսին, խոր ընկած աչքերին, կնճռոտած երեսվերքին, կախ ընկած շրթունքին և զգացւեց:

—Խեղճ մարդ, խեղճ աղամորդի, մտածեց նա, այս ինչ

Թշառ. վիճակի մէջ է մարդս ապրում. զեռ ստրկութիւնը վերացած չէ եղել աշխարհքիցս...

II

Ստեփանը թէյի բաժակը շուտով դատարկեց, թեքով սրբեց բերանը, շուտ եկաւ Օվանէսի կողմը և շտապով ու անհանգիստ կերպով պատմեց հետեւեալը:

«Շատ բան հարկաւոր չէ պատմել. ես ձեզ մէկը կ'ասեմ. նորա համեմատ էլ ուրիշ բաները հասկացէք:

Մի անգամ իմ աէրը մի խնջոյք էր կազմել. հրաւիրել էր պատուաւոր մարդիկ. պատրաստել էր տւել կերակուրներ... Մի խօսքով ամեն բան կարգին էր, ինչպէս հարկաւոր էր:

Խնջոյքի ղլխաւոր զարդը մի նորեկ հաշակաւոր թառածող էր, որ Պարսկաստանից անցել էր մեր կողմերը: Գովաճ էր թէ նորա երգը, թէ նորա թառը: Ժողովուրդի մէջ խօսում էին՝ թէ այդ թառին շատ ոսկի կն տւել. բայց երգիչը չի ծախել նորան, ասելով որ նա ինչպէս չի կարող իւր ձայնը ծախել, այնպէս էլ իւր թառը:

Տեղացի երգիչները նախանձից կատաղել էին, բայց ինչ կարող էին անել: Նոցա բամբասանքը տեղ չէր հասնում, նոցա խօսքերի վերայ ուշք զարձնող չէր լինում:

Խնջոյքը երկայն տւեց: Ամենքս ոտքի էինք. տանում էինք բերում, այս կողմ այն կողմ վազվզում: Հիւրերը հիացած էին երգչի ձայնից և երգերից:

Բայց ամեն բանին վերջ կայ. հիւրերը յօգնեցին, կամաց կամաց տուն ցրւեցին:

Երգիչը մնաց տիրոջ տանը: Նորան իւր ընկերների հետ ցոյց տւին մի առանձին սենեակ, որ հանգստանան գիշերը:

Զը նայելով, որ ամբողջ օրը և գիշերը ոտքի վերայ էի ես. բայց էլի պէտք է արթուն մնայի և պահապանութիւն անէի:— Դէ ես էլ մարդ եմ, երկաթ չեմ, քար չեմ, յօգնել էի, ինչպէս եղաւ քոնս տարաւ և մի քանի ժամ հանգիստ քնեցի: Բայց էլի ժամանակին զարթնեցի, այնպէս որ քնած լինելս ոչ ով չէր նկատել:

Առաւօտը յանկարծ մէկ էլ տեսնեմ՝ մի ինչ որ աղմուկ է ընկել տունը: Երգիչը որոնել է իւր թառը, որ զրած է եղել իւր կողքին

և չի դառել: Դէս, դէն, սորան նորան հարց ու փորձ անել, ոչինչ չեն գտնում: Եկան իմ զլխին կանգնեցին, ինձնից հաշիւ պահանջեցին: Ես ի՞նչ իմանամ, ես ո՞րտեղից թառ. գտնեմ: Տէրս բարկացաւ, փոքրաւորները բարկացան, ինձ հարւածներ տւին, ապտակներ հասցրին: Եւ սկսեցին շարունակել խուզարկութիւնը:

Մի քանի ժամանակից յետոյ լուր եկաւ բազարից, որ իբր թէ ինձ տեսնող է եղել թառը փախցնելիս: Թէ ի՞նչպէս և ո՞րտեղից էր ծագել այդ բամբասանքը — ո՞վ կարող էր հասկանալ: Քաջց եկէ՛ք, իմ զրութիւնը տեսէք:

Տիրոջս կատաղութիւնը անասելի էր. նա առաւ ձեռքը մտրակը ու ընկաւ ջանիս. էլ չէր նայում թէ որտեղին է խփում: Նա յոգնեց ու յանձնեց մտրակը իւր զլխաւոր սպասաւորին, որ նա շարունակի ծեծելը: Ենչքան հաւատացնում էի, որ ես ամենեւին տեղեակ չեմ այդ բանից, ոչինչ չէր օգնում: Երկայն ծեծւելուց ու ջարդւելուց՝ դեռին զորւեցի: Քաջիները լրացրին, ինչ որ պակաս էր մնացել մտրակահարելուց:

Որտեղ գնացին, ում հետ ինչ խօսեցին, ես չը գիտեմ. միւս օրը յայտնեցին ինձ, որ եթէ թառի տեղը ես ցոյց չը տամ, պէտք է զրկւեմ մի ականջիցս և մի աչքիցս: Տէր Աստուած, այս ի՞նչ ցաւ է, այս ի՞նչ դժոխք է, որ ընկել եմ մէջը, ի՞նչ անեմ, ինչպէ՞ս ինձ արդարացնեմ, ինչպէ՞ս թառի հետքը գտնեմ:

Անցաւ երկու օր էլ. ոչինչ չը գոհնեց: Ենձ չարչարում էին անողորմաբար, թողնում էին ծարաւ, քաղցած, ծեծում էին փաշտով և ձեռքով, քաղցահարում էին: Ես իրաւունք չունէի ոչ ոքի ոչինչ ասել:

Վերջապէս ինձ հրապարակ հանեցին, որ տաճ սպառնալիքները կատարեն՝ մի ականջս կտրեն, մի աչքս հանեն:

Այնպէս մի դող բռնեց, որ կարծես թէ սաստիկ տենդի մէջ լինէի. սառն քրտինք սրտիկ էր մարմինս: Ես գիտէի, որ անգութները իրանց ասածը անելու են, որ ասանց խղճալու ինձ կորստեղու են:

Ո՞ւմ զիմէի, ի՞նչ ասելի:

Նայեցի երկինք, Աստուծուն աղօթելու, բայց մի հարւած ինձ սթափեցրեց ու վարկնի մի ձայն խօսեց.

— Աստակները ու խորամանկութիւնները թող, թառի տեղը ասա. ո՞ւմ ես ծախել՝ յայտնիր:

—Այ մի տեղեկութիւն չունեմ, պատասխանեցի ես, հաւատացնում եմ, որ մեղաւոր չեմ։ Աստուած, երկինք, զեօին, սուրբերը վկայ, արեւս վկայ, ես զժոխքի, սատանայի բաժին լինեմ—ոչինչից տեղեակ չեմ։

—Քո ձեռքին տեսնող է եղել, դուային վերաս։

—Ո՞վ է, ո՞վ է տեսել, թող զայ՝ իմ երեսիս ասի էլի։

—Ձայնդ կարիր, քեզ հետ պէտք է երկայն զրոյցներ սկսենք. քո բանը վերջացած է։ Ե՛յ, Ահմադ։

Ես ինքս ինձ կորցրել էի. հրապարակը մարդկանցով լիքն էր, մեծաւորների կային, ես ոչինչ չէի տեսնում, կարծես թէ զոքաբոլորը երազի մէջ էին. ես միայն զգում էի, որ զահիճներս անողորմ կերպով իրանց սպառնալիքները գլուխ են բերելու։

—Ահմա՛դ, որտաց մի գլխ ձայն, սորա ականջը թռցրո՛ւ։

Աւրեմն սկսեց, ուրեմն իմն ինձ հասաւ։ Յուսահատութիւնս կատարեալ էր. էլ ամեն բան վերջացաւ։ Թէ ինչպէս Ահմադը մօտեցաւ ինձ և ինչպէս ականջս կորեց—եւ համարեա չը նկատեցի։ Նւցաւը թէև մեծ էր, բայց ես սարսափից քարացել էի։

Դողս վերջացաւ, ես անզգայի՝ նման դարձայ։ Միայն մի միտք աչքիս առաջին էր, որ շուտով տեսողութիւնս էլ պէ՛տք է խաւարւի։ Ինձ սթափեցրեց չժողովուրդի մէջից լսող մի ընդհանուր խուլ տեքոց։

—Ուհ, օհ, ըըհըը, հասա՛ցեց ամբօխը։

Իմ մազերը կարծես բիզ-բիզ կանգնեցին։ Աչքերումս երևաց արտասունք, որ յորդ կերպով սկսեց հոսել երեսովս։ Ես երեխայի պէս լաց էի լինում։

—Կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, լսեց յանկարծ մի յուսահատ բղաւոց հեռուից։

—Ո՞վ է, ո՞վ է, հարցրին շատերը։

—Ո՞վ է, հարցրի ինքս ինձ, որովհետև ձայնը ծանօթ էր երևում։ Զը լինի՞ թէ ես սխալւում եմ, չը լինի՞ իմ ականջիս սուտ ձայներ են գալիս, եւ արդէն ցնորւել եմ։

—Կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, լսեց կրկին։

Արտասունքներս ցամաքեցին. ես սիրտ արի, սկսեցի նայել շորս կողմս։ Տեսայ, որ բոլորը դարձրել են երեսները զէպի փողոցից

վազող մի մարդ: Ես էլ այն կողմը նայեցի. և ի՞նչ եմ տեսնում:
Մէկը վազում է թառը ձեռքին բռնած: Տէ՛ր Աստուծա՛ծ: Դա Ներսէսն է: Ահա մօտեցաւ: Եւ իսկ Ներսէսն է:

— Թառը բերին, թառը բերում են, լսեց չորս կողմից:

Ամենքը իրարով եղան: Ներսէսը արագ անցնում էր՝ շատ կոպիտ կերպով հրելով ժողովրդին և վերջապէս գալով դատաւորների մօտ՝ հեալով, խօսքերը կիսատ և շտապ-շտապ արտասանելով՝ ասաց.

— Գողին գտայ. անգութ գողին: Այս խեղճի արեւը պէտք է խաւարէր... առէք և մի ջան ազատեցէ՛ք:

— Ո՞վ է գողը, հարցրին մի քանի ձայներ:

— Մէկը... այդ յետոյ:

— Ո՞վ է, ասում եմ քեզ, ո՞վ է գողը, մռնչաց իմ տէրը:

— Գողը—երդիշ Սադըղն է. նա է նախանձից գողացել թառը և նա էլ տարածել է՝ թէ գողը—Ստեփանն է: Ես Սադըղի տնից եմ դուրս քաշել թառը:

— Դու ո՞րակզից իմացար, որ նորա մօտ պէտք է լինէր թառը, հարցրեց մի ձայն:

— Մէկը խղճաց Ստեփանին և ինձ յայտնեց:

— Ո՞վ, ասա շուտ, թէ չէ...

— Սադըղի ծառան, ասաց կամացուկ Ներսէսը և լռեց:

— Մեղապարտը ազատ է: Ահմադ հեռացի՛ր.

Հենց որ լսեցի իմ մասին ազատ խօսքը. ես ցնցուեցի և ուշաթափւեցի ընկալ: Ի՞նչ կատարեց հրապարակում, էլ չը տեսայ:

Ե՛հ, էլ ի՞նչ պատմեմ: Սիրտ չունեմ: Հիմի էլ տանջւում եմ, երբ չիշում եմ: Մեռած տեղից կենդանացել եմ, նորից ապրում եմ: Բայց խեղճ իմ Ներսէս: Խեղճը ինձ ազատեց ու ինքը նահատակւեց: Երկու օրից յետոյ գտան Ներսէսին մօրթւած և կորաւում: Ի՞նչ կեանք էր ի՞նչ.— դժոխք էր:

Ես որ փառք եմ տալիս հիմիկալ իմ կեանքին, ամենքը զարմանում են. բայց փառք, հազար փառք հիմիկալ օրերիս:— Ամեն բան կը մոռանայի, բայց Ներսէսին չեմ մոռանում: Վերջին անգամ գնացի ու նորա գերեզմանի վերայ խաչակնքեցի այս աւետարանով և հողը համբուրելով՝ հեռացայ: Աստուծո՛ւ ձեզ ազատ պահի իմ տեսածներից ու կրածներից:

Ստեփանը պատմելու շատ բան ունէր, բայց անցեալի տխուր ցիշողութիւնը նորան կաշկանդեց: Նա յանկարծ կրճատեց իւր պատմութիւնը անսպասելի կերպով:

Նորա երեսը այնպէս ցաւոտ կերպարանք ընդունեց, աչքերը այնպէս մարեցին, ինքը այնպէս կուշ եկաւ, որ նորան այդ դրութեան մէջ տեսնելը մի տանջանք էր:

— Աստուած հոգին լուսաւորի, ասաց յանկարծ մշակներից մէկը:

— Աստուած հոգին լուսաւորի, կրկնեցին շատերը:

Ստեփանը այդ ընդհանուր ձայնից դատուեց, բայց մնաց լուռ: Երկայն ժամանակ նա մի խոր մտատանջութեան մէջ գլուխը շարժում էր: Յանկարծ նա մի ինչ որ բան մտաբերեց, ձեռքը տարաւ ձակատին, բարկացած տրորեց ունքերի վերեւը և սկիզբ արաւ մի պատմութեան՝

— Մի անգամ էլ փախցրել էին մի գեղեցիկ Փարսի աղջիկ, որ լինկաւ իմ տիրոջ ձեռքը... Ձէ չեմ կարող պատմել, չեմ կարող պատմել, սիրտս հանդարտ չէ... մի ուրիշ անգամ:

Մշակները աչքով արին Օվանէսին:

— Մի խօսացնիլ, մեղք է. ինքը չի համբերիլ, էլի կը պատմի. թող այժմ հանգստանայ:

Մի առ ժամանակ լուռութիւն տիրեց: Ստեփանը գլուխը քաշ դէնց կրծքի վերայ և երեսը փակեց ձեռքերով:

Այդ ժամանակ մտաւ մշակների խմբապետը, որ այդ երեկոյ ուշացել էր: Օվանէսին ներկայացրին: Խմբապետը, որ արդէն ընդունել էր նորան, այժմ մի երկու խօսքով բացատրեց նորա անելու հարկաւոր գործերը: Յետոյ դառնալով մշակներին՝ նա մի քանի հարց աւ փորձեր արաւ և յաշտնեց հետեւեալ օրւայ համար վերցրած մի գործի մասին, ուր պէտք է աշխատէր ամբողջ դոցա խումբը:

Երբ խօսակցութիւնները դադարեցին՝ Օվանէսը, որ չէր կարողանում մոռանալ Ստեփանին, հարցրեց իւր ծանօթից՝

— Ի՞նչով է ապրում այս խեղճը:

— Մշակներն են մի բան տալիս, ինքն էլ մի քիչ աշխատում է: Մենք օգնում ենք. ընկերովի գործ պատահելուց, նորան մի թեթեւ յանձնարարութիւն ենք տալիս, որ հսկի, նայի հակերին, հաշիւը պահի: Իէ, նա շատ բանի պէտք չունի: Նստ է սիրում թէյ խմել: Նորա

Համար գնել ենք մի թեյաման: Սրը երկու անգամ տաքացնում է ու թեյ խմում:

— Լաւ, ազգական, բարեկամ՝ չո՛ւնի:

— Ննքն էլ չէ խմանում: Դորա կորչիլը մօտ երեսուն տարի է: Կամակ ենք գրել տւել — սպասում ենք պատասխանի: Մի քիչ փող էլ հաւաքել ենք, որ իրան տանք:

— Խեղճ մարդ:

— Խեղճ մարդ է, աւելացրաւ Օվանէսի ծանօթը, կեանքի վերան ուրախ է, ամեն բանից գոհ է. ամեն մի օրը ու ժամը օրհնում է: Ի հարկէ՝ քարի վերայ քնողը, փայտին փափուկ բարձ կ'ասի: Օվանէս, զեռ շատ կը լսես. — սարսափելի բաներ է պատմում: Շատ փորձանքների մէջ է եղել: Այժմ կարծես նորից է ծնւել ու սկսում է նորից ապրել աշխարհում:

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԼԻԵԱՆՑԻ

I

Տեսէք—ցըրտաշունչ, դաժան ձրմեռը
Գետի երեսին կապանք է ձրգում.
Կապուտակ, վըճիտ նորա ջրերը
Պայծառ արևից ծածկել է ուզում.
Բայց ալիքներն ազատ, անվեհեր
Մեթէ կը կըրեն անարբ շրջթաներ:
Եւ կոհակները չը հանդուրժեցին.
Նախ խուլ տըրջունջի ձայներ հանեցին
Եւ մի օր չ'անցած՝
Նոքա կատաղած
Մէջք, գըրտա տըւին
Խոչընդոտներին,
Եւ արագընթաց նոցա հոսանքը
Փռչընց, խորտակեց ամուր կապանքը.
Ապա յաղթական տղաղակներով
Զօրեղ ալիքներն
Գընգակի նըման խաղացընելով
Սառցի բեկորներն՝
Տարան լանձնեցին
Մըռընչող ծովին:

ԼԵՒՈՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

II

Արևը գարնան
Այրեց թիթեռին—
Թիթեռը սիրեց
Բացւած շուշանին:
Եւ ահա վառւած
Սիրոյ տենչանքով
Թըռչում է այգին՝
Ուրախ ճախրելով:
Այնտեղ գոյնըգոյն
Անթիւ ծաղիկներ
Բուրում են անոյշ
Յերեկ ու գիշեր:

Թիթեռն ընտրեց
Չըքնաղ շուշանին
Եւ իւր սիրուհուն
Իստակ երեսին
Դողդոջ դըրռշմեց
Համբոյր սիրային
Ու երկա՛ր երկա՛ր
Աշխարհ մոռացած՝
Մընացին նոքա
Իբար ընդգըրկած:

Բայց երբ յագեցաւ
Թիթեռը ծաղկից,
Սևա՛ղ, հեռացա՛ւ,
Փախա՛ւ նորանից:
Փոքրիկ ըստահակ,
Դո՛ւ, նենգ սիրահար,
Սիրուն շուշանին
Ինչո՞ւ մոռացար,
Ինչո՞ւ մեխակին
Քո սէրը տարար:

Գիշերը եկաւ—
Ծաղիկը մենակ
Լալիս է, ողբում
Տըխուր իւր վիճակ:
Եւ խեղճի վերայ
Ամբողջ գիշերներ
Էլ չեն ցամաքում
Յոլուն արցունքներ...

Թիֆլիս. 1891 թ., 27 յունւարի:

ՍԱՓՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԿ ՏՈՒԿՆԻ

Ամեն բան աշխարհումս փոխուում է, բայց սափրիչներից, նոցա վարենցողութիւնից և սովորութիւններից: Դա երբեք չի փոխուում: Ինչ որ մարդ սափրասնեակում տեսել է առաջին անգամը այնտեղ մտնելուց, այն միւլնոյնն էլ, առանց առաջադիմութեան, նա կը տեսնի և յետոյ, մինչև իւր կեանքի վախճանը:

Այսօր առաւօտեան ես գնում էի, ըստ իմ սովորութեան, երեսս ածիլել տալու: Ես տեսայ, որ սափրատանը մի մարդ է արդէն մօտենում միւս փողոցից, մի հանգամանք, որ զարմանալի կերպով միշտ պատահում է: Աս քայլերս մեծացրի. բայց նպատակիս չը հասայ: Պարոնը մտաւ զոնամէջը հէնց այն բոլէին, երբ ես հասել էի նոյն պէս զոանը: Աս մտայ նորա ետեւից. բայց նա արդէն բռնեց միակ ազատ փնացած աթոռը, որի մօտ կանգնած էր սափրիչը:

Եւ այդ միշտ այդպէս է պատահում: Աս նստեցի սպասելու, յուսալով, որ կը կարողանամ միւս երկու սափրիչներից բռնել նոցանից աւելի վարպետի աթոռը, որովհետեւ այդ «աւելի վարպետը» սկսել էր արդէն իւր մուշտարու մագերը սանրել, մինչդեռ նորա ընկերը զեռ օծում էր իւր յաճախւորի մազերի խոպոպները:

Աս մեծ հետաքրքրութեամբ հետեւում էի սափրիչների գործողութեան: Երբ ես նկատում էի, որ № 2 սափրիչը առաջ էր ընկնում, իսկ № 1-ը կանգ էր առնում մի բոլէի, խօսքի բռնելով խանութը մանող ապրանք առնողների հետ և թողնում էր իւր ձեռքի գործը, ես հասարակ կասկածից անցնում էի վրդոված զրութեան: Իսկ երբ № 1-ը վերջապէս դարձաւ իւր գործին իւր ընկերին հաւա-

տարւեց և արդէն բաց էր անում յաճախորդից սրբիչը և նորա թշերից սրբում էր պուզրը, որից յետոյ նոցանից մէկը աւելի վաղ պէտք է տսէր «զայ հետեւեալը», — ես անյայտութիւնից սկսեցի կարծես խեղդւել:

Իսկ երբ ամենավճռական վայրկեանում՝ № 1-ը սկսեց խողանալով ուղղել իւր պարոնի ունքերը, ես իմացայ, որ այդ վայրկեանով նա կորցրաւ իւր առաջնութիւնը և ես այնպէս սաստիկ զայրացայ այդ բանից, որ զուրս եկայ սափրասնեակից, որպէս զի չընկնեմ № 2-ի ձեռքը, որովհետեւ ես այնքան ամուր բնաւորութիւն չունեմ, որ սափրիչին ասեմ՝ թէ ես նորան չեմ ուզում, այլ սպասելու եմ, մինչև միւս սափրիչը ազատուի:

Ես փողոցում կանգնեցի մօտ տասնեւհինգ րոպէ և զարձայ չուսալով, որ այժմ ցանկացածիս կը հասնեմ իսկոյն: Սակայն այժմ բոլոր տեղերը բռնած էին և դեռ մի չորս պարոն էլ նստած սպասում էին, լուռ, անխօս, բարկացած և տխուր, ինչպէս որ լինում են սափրատանը նստած և հերթին սպասող յաճախորդները:

Ես նստեցի մի կոշտ, հին դահաւորակի վերայ և զբաղւեցի ընթերցանութիւնով: Ես կարդում էի շրջանակներում դրած զանազան յայտարարութիւնները, որոնք անխիղճ կերպով փառաբանում էին մազեր ներկելու չը գիտեմ ինչ դեղերը, նայում էի շիշերին կպցրած ցուցադրերը, ուսումնասիրում էի պատերին կպցրած, աժան պատերազմական պատկերների աղտոտած և պատռոտած մնացորդները, նախազահների, հեշտասէր թեք ընկած սուլթանների, անհամ և միշտ երիտասարդ ազջիկների պատկերները և անիծում էի ուրախ դեղձանիկին և բարձրագոյն թուլթակին, որոնք համարեա ամեն մի սափրատան անհրաժեշտութիւնն են կազմում: Նրբ այդ բոլորից զգւեցի, սկսեցի թերթել անցեալ տարւայ պատկերազարդ թերթի քիչ պատռոտած համարները, որոնք անկարգ թափւած էին աղտոտ կոշոր սեղանի վերայ և խորատուզեցի հին, անցած-զնացած եղելութիւնների անձոռնի պատկերների աշխարհը:

Վերջապէս հասաւ և իմ հերթը: Աւելց սափրիչի ձայնը, «զայ հետեւեալը» և ես ընկայ հէնց էլի № 2-ի ձեռքը: Այդ միշտ այդպէս է պատահում: Ես համեատ ձայնով նկատեցի, որ շտապում եմ. բայց նա իսկի այնումը չը զցեց: Յետ տարաւ զլուխս և վզիս տա-

կից կապեց անձեռոցիկը: Յետոյ մասներով կոխեց սրբիչը օձիքիս տակը: Նոյն մասներով նա խառնեց իմ մազերը և յայտնեց, որ պէտք է նորանց խուզել: Նստառասխանեցի, որ չեմ ուզում խուզել տալ: Նա դարձեալ մասներով վերի վայր արաւ մազերս և ասաց, որ ներկայ հանգամանքներին նայած՝ չափազանց երկայն են և պէտք է կարճացնեն. նա մանաւանդ ետեւի կողմից: Նստառասխանեցի, որ միայն մի շաբաթ է, ինչ ես խուզել եմ տեղ մազերս: Ստորից մի վայրկեան տխուր մտածմունքի մէջ ընկաւ և յետոյ մի տեսակ նախանձոտ արհամարհանքով հարցրեց.

— Ո՞վ է խուզել:

Ես նորան իսկոյն հանդատացրի՝

— Հէնց դուք ինքներդ:

Յետոյ սկսեց փրփրացնել սապոնը, երբեմնապէս կանգ առնելով և հայելուն մօտենալով, որպէս զի լաւ տնտղի կամ իւր կերպարանքը կամ մի որ և է պուզուկ: Յետոյ սապոնեց վերից մինչև ներքեւ երեսիս մէկ կէսը և ուզում էր սապոնել միւս մասն էլ, երբ յանկարծ նորա ուշքը գրաւեց շների մի կռիւ: Նա վազեց լուսամուտի մօտ և կանգնեց այնտեղ, զւարճանալով կռիւ տեսքով, մինչև որ գրաւ չեկաւ միւս երկու ստորիչների հետ և երկու շիլինդ տանուլ չը տաւ: Այս դէպքը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց: Նա վերջացրեց սապոնելը և աւելորդ փրփուրները սկսեց ձեռքով թռցնել դէն:

Նորանից յետոյ սկսեց երկայն ժամանակ ածելին սրել մի ինչ որ հնացած կաշու վերայ և շարունակելով այդ սրելը՝ նա պատմեց նախընթաց երեկոյի ժողովրդական զիմակահանդէսի մասին, որտեղ նա ինքը եղել է՝ վերան դցած կարմիր ծիրանի, որի շրջակարը սպիտակ աքիտի մօրթից է եղել, ինչպէս այդ վայել է թաղաւորներին: Նորա ընկերները ակնարկներ արին՝ թէ մի տիկին հիացած է եղել զիմակաւոր թաղաւորից. ստորից՝ թէ և ասաց, որ նորա ընկերները նորան ձանձրացրին այդ ակնարկներով, բայց ինքը շատ ուրախ էր այդ վայրահայուլութիւնից և ուզում էր, որ նա շարունակէ:

Այս հանգամանքը նորան զրդեց մի անգամ ևս նայելու հայելուն: Նա ածելին վայր դրաւ և իւր մազերը սանրեց, ճակատի վերայից մի խոպոպ յետ տանելով և մի նուրբ զուգաշափութեամբ քունքի մազերը սանրեց ականջների վերայ: Մինչ այս մինչ այն՝

իմ թշերին քսած սապոնը չորացաւ, և ըստ երևութին, ծծւեց կաշւիս մէջ:

Վերջապէս սափրիչս սկսեց ածիլել, նախօրոք մատները պարզելով իմ երեսի վերայ, որ տարածի կաշին, և անդադար զլուխս պտտեցնելով այս ու այն կողմ, ինչպէս նա յարմար էր դատում: Քանի որ նա երեսիս կողքի մասերումն էր, ես չարչարւում չէի: Իսկ երբ նա սկսեց ծնօտս քերել, քերթել և մաշկել, պէտք է խոստովանեմ, արտասուքը լքցրաւ աչքերս:

Յետոյ սափրիչը բռնեց քթիցս, որպէս զի ապահով կերպով կարողանայ ածիլել վերի շրթունքիս անկիւնը: Այս հանգամանքի շնորհիւ, ես մի գիւտ արիւ ես համոզւեցի, որ սափրիչիս պարտաւորութիւնների մէջն է եղել և նա թի լամպարների սրբելը (նա թի հոտը ես կարողացայ ճանաչել): Իսկ առաջ ես թեթեամաբար ինձ հարց էի տալիս, արդեօք ո՞վ էր այդ բանը կատարում՝ սափրիչները թէ նոցա տէրը:

Միւսնոյն ժամանակը ես զուշակութիւններ էի անում, թէ որտեղ է սափրիչս բարեհաճելու երեսս կտրելու, բայց նա իմ վճռից առաջ ընկաւ և նախ, քան ես կը կարգաւ որէի մտածմունքներս, նա թռցրաւ ծնոտիս կաշու մի կտորը:

Դորանից յետոյ՝ սրեց ածելին, որ ի հարկէ՝ նա կարողէր կտրելուց առաջ անել: Պէտք է ասեմ, որ ես չեմ սիրում շատ տակուց ածիլելը և չէի ուզում թոյլ տալ, որ նա երկրորդ անգամ ինձ քերթի: Ուստի համոզում էի նորան, որ նա թողնի անտանելի զործիքը: Ես երկիւղ էի կրում, որ նա ածելին պատրաստում է իմ ծնօտի այն մասի համար, ուր մի փոքրիկ բշտիկ կար, որի ածելիլը կրկնելուց շատ պէտք է ցաւէր: Բայց սափրիչը հանգստացրաւ, ասելով, որ նա պէտք է միայն փոքր ինչ հաւասարեցնի և հէնց այդ վայրկեանին զխաւարզելւած տեղին: Ինձ վախեցնող կտրւածքը տեղի ունեցաւ և սկսեց սաստիկ ցաւ:

Այդ ժամանակ իմ չարչարողը թաթախեց սրբիչը դափնեաբալի հեղուկի մէջ և սկսեց նորանով սւաղել երեսս, կարծես թէ երբ և իցէ մէկը աշխարհումս այդ տեսակ լւացել է իւր երեսը: Յետոյ սկսեց սրբիչի չոր մասով հարել երեսս, կարծես թէ երբ և իցէ աշխարհումս մէկը այդ տեսակ սրբել է իւր երեսը: Բայց սափրիչները քիչ զիտեն քրիստոնէաբար երես սրբելը:

Այնուհետև նա նորից թացացրեց կտրած տեղը, ամեն վերան պուզր, կրկին թացացրեց և երևի անվերջ կը թացացներ և պուզր կ'ածէր, եթէ ես վճռողաբար չը բողոքէի: Այն ժամանակ թշառականը վերջին անգամ պուզր ամեն երեսիս, յետոյ բռնեց մազերս խորքի նման և սկսեց խառնինթորել, վերիվայր անել: Յետոյ առաջարկեց ինձ, որ լւանալ տամ՝ զլուխ սաարնաջրով և սկսեց հաւատացնել, որ իմ մազերի համար դա շատ կարևոր է: Ես պատասխանեցի, որ երեկւայ օրը ինքս լաւ լւացել եմ՝ բաղնիսումը: Աւերմն կրկին նորա խօսքը կտրեցի:

Բայց սափրիչս ձեռք չը վեր առաւ և առաջարկեց ինձ մի ինչ որ մազերի համար կախարդական հեղուկ: Ես մերժեցի: Այն ժամանակ նա սկսեց գովել «տուալիտի հրձեանք» անունով նոր մի օժանդակ, որ ուզում էր ինձ վերայ կոցնել: Կրկին մերժեցի: Բայց նա յետ չը կացաւ ինձնից և առաջարկեց մի ինչ որ իւր հնարած անպիշտան ատամնադեղ: Երբ որ այդ էլ չը զնեցի, նա ինձ առաջարկեց, որ գոնէ մի զմեկի զնեմ:

Այս առուտուրի անաշտուրութիւնից յետոյ, նա չը լսելով բողոքիս՝ ինձ ոտից մինչև գլուխ սրսկեց հօտաւ էտ հեղուկով, մազերս տեղահան արաւ և բաւական էլ զւերս հանեց արմատից, իսկ մնացածները սանրեց, կարգին ձգեց և հարթեց:

Այնպէս երբ նա սկսեց իմ նոր ունքերս էլ սանրել և շարունակել իւր լեզւագարութիւնը—եւ լսեցի կէսօրեայ զանգը և այդտեղ սրտի ցաւով իմացայ, որ հինգ րոպէ ուշացել եմ երկաթուղու գնացքից: Այդ ժամանակ միայն նա հանեց վզիցս սրբիչը, զգոյշ թափ տաւ երեսիս վերայ եղածը, մի անգամ էլ խոզանակը խաղացրեց ունքերիս վերայով և ուրախ բացականչեց:

—Գաց հետեւալը:

Այս միևնույն սափրիչը երկու ժամից յետոյ յանկարծ ուշաթափւեց և մեռաւ կաթածից:

Ես չարախնդացութեամբ ուզում եմ վրէժս առնել նորանից, ուստի վճռել եմ՝ զնալ նորա թագման:

ԶԵՄ ՆԱԽԱՆՁՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏՈՒՐԵԱՆԻ

Ո՛չ, ընկեր իմ, չեմ նախանձում
Ես կոյր բաղդի ընտրեալին,
Որի փառքը այս աշխարհում
Մեծ տներն են ու ոսկին...
Նորա համար կեանքը չունի
Ո՛չ մի վսեմ նպատակ.
Նա ըստրուկ է ժանգ-մետաղի,
Ըստրուկ հարուստ ու անարգ:

Չեմ նախանձում ես երջանիկ
Ե՛ւ սիրավառ պատանուն,
Որին սիրոյ ժամեր քաղցրիկ
Վառ եղեմ են խոստանում:
Նորա համար կոյսը չքնաղ
Ե՛ւ հրեշտակ է, և՛ Աստուած.
Կուսի սիրուն նա իւր մտառը
Կեանքն ու սիրտն է նւիրած:

Ո՛չ, ընկեր իմ... ո՛չ կոյր բաղդի
Ինձ պարգեւած այդ փառքին
Եւ ո՛չ սիրոյ փափուկ կեանքի
Սիրտ կախարդող վայելքին
Չե՛մ նախանձում... Այդ վիճակում

Չնչին է կեանքն իմ աչքին.
Այլ իղձեր են սիրտս յուզում,
Եւ ձգտում եմ այլ փառքին:

Փառք ծանրողին, փառք վշտալից
Թող մարդկանցից անարգւած.
Փառք տատասկոտ, փառք փշալից՝
Ազնիւ գործով վաստակած—
Այդ փառքին եմ, ո՛վ ընկեր իմ,
Ես նախանձում ողջ հոգով,
Եւ կուզէի մտնել շիրիմ
Անմահացած այդ փառքով...

Մոսկւա. 1890 թ. 4 դեկտեմբերի

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ

ԷՊԻԳՐԱՐ ՊՅԵ-ի

Ապենին լեռներումն էր:

Նա վիրաւորւած էի խոր խոցով: Իմ ծառան չէր կամենում, որ ես գիշերը անցկացնեմ բաց օդում: Նա ինձ քաշեց մի ամրոց, որ մի հիւսքանչ և միւսնոյն ժամանակը տխրաշունչ շինութիւն էր: Այնպէս էր երևում, որ ամրոցը նոր էին թողել նորա տէրերը ժամանակաւորապէս:

Մենք տեղաւորւեցինք ամենափոքր և սակաւաշուք կահաւորւած սենեակներից մէկում: Նա գտնւում էր մի աշտարակում, որ հեռու էր գլխաւոր շինութիւնից: Նորա զարդարանքը թէև հին էր և մաշւած, բայց հարուստ էր:

Պատերը պատած էին պաստառներով և զարդարւած ամենայն տեսակի դրոշմակիր զարդերով, նոյնպէս բազմաթիւ ժամանակակից, նուրբ արւեստագործ պատկերներով՝ արաբական ճաշակի, ոսկեզօծ շրջանակներում:

Նրբի տենդը սաստկանում էր և ես մօտ էի դել տալուն, որովհետև ես չափից դուրս եռանդով սկսեցի զբաղւել այս պատկերներով: Սուքա զետեղւած էին ոչ միայն գլխաւոր պատերի վերայ, այլ և զանազան խորշերում, որոնք աւաջացած էին ամրոցի մի օտարոտի ճարտարասկողութիւնից: Նա պատկերեցի ծառայիս, որ լուսամուտների փեղկերը փակի, որովհետև արդէն մութը ընկել էր, վառի իմ գլխատակի մօտ դրւած բազմաճրագ մեծ աշտանակը և յետ տանի իմ անկողինը շրջապատող սև թոււիշեայ վարագոյրները: Նա այդ արիւնքն ուղիւստեմով, որ կարողանամ ազատ նայել բոլոր կողմերի պատկերներին,

որոնց բացատրութիւնները և զնահատութիւնը ամփոփւած էին զլիսատակումն զրաժ մի դրքոյկում, որ ձեռքս առի և սկսեցի մեծ ուշադրութիւնով կարդալ:

Աս երկացն ժամանակ կարդում էի: Աս զննում էի պատկերները բարեխղճօրէն և պատկառանքով: Անցնում էին ժամերը արագընթաց և երջանիկ կերպով: Վերջապէս հասաւ կէս դիշերը: Աշտարակի դիրքը ես չէի հաւանում. բայց որպէս զի ծառային անհանգիստ չանեմ. ինքս պարզեցի ձեռքս և բաւականին դժարութիւնով աշտանակը տեղափոխեցի աջակէս, որ նորա լոյսը ուղիղ ընկնէր դրքոյկի վերայ:

Այս գործողութիւնը մի անպատեւի հետեանք ունեցաւ: Շատ ճրագներինց ճառագայթներ ուղղւեցին մի պատկերի վերայ, որ մինչև այդ ժամանակը մնացել էր սխեմերից մէկի տուէրում:

Պաշտաւ լուսաւորութեան շնորհիւ՝ ես այժմ լեռաց մի պատկեր, որ առաջ խուսափել էր իմ աչքերից: Պատկերը ներկայացնում էր մի ջահիլ աղջկաց, որ նոր միացն կին էր դարձել: Աս մի արագ հայեացք զցեցի պատկերի վերայ և աչքերս փակեցի: Քէ ինչո՞ւ — ինքս էլ չկղբում չը կարողացայ ինձ բացատրել:

Բայց աչքերս փակւած միջոցին ես շատով կարողացայ հասկնալ իմ արածի պատճառը: Դա անդիտակցական մի շարժում էր, որ ես արել էի մտածելու համար ժամանակ գրաւելու և ինձ հանդրստացնելու աւելի սառն և ուղիղ խորհրդածութիւնների համար:

Մի քանի վայրկեանից յետոյ՝ ես նորից նայեցի պատկերին ուշադրութիւնով: Այժմ այլ ես չէր կարելի կասկածել (թէկուզ այդ ես ցանկանայի)՝ պարզ կերպով տեսածիս վերաբերմամբ: Աս սկսեցի յանկարծակի ինձ պատած ցնորքից անցնել իրականութեան:

Պատկերը ներկայացնում էր, ինչպէս ասացի մի ջահիլ աղջկաց: Դա այն ձևի ու ռճի պատկեր էր, որ յատուկ է վիշիե տ անւանւածներին և որ յաճախ բնատրոշում է Սիւլլիի նկարած գլուխները:

Նկարւած էր մի զլուխ: Վիզը, ուսերը, ձեռքերը նոյն իսկ փալլուն մաղերի վերջաւորութիւնները միանում էին անորոշ, բայց մեթ սուէրի հետ, որ կազմում էր պատկերի սկիզբը: Նրջանակը ձուածիր էր, շքեղ ոսկեղօծած և մայր-արաբական ճաշակի դրւագներով զարդարած: Իբրև գեղարւեստի գործ՝ անկարելի էր աւելի զարմանալին ճարել, քան այդ էր:

Պէտք է ենթադրել, որ ինձ վերայ յանկարծ և ուժեղ ազդողը նկարի լաուրէթիւնը, նորա անմահ գեղեցկութիւնը չէր և ոչ իմ երեւակացութիւնը, որ իբր թէ թմրութիւնից արթնած՝ ընդունած լինէր նկարը իսկական զլխի տեղ: Առաջին ակնթարթից՝ իմ մէջ տպաւորւեցին նկարի մանրամասնութիւնները, շրջանակի ձեւը և ես չէի կարող հետունելը գնալ և ցնորքի աշխարհքը ընկնել:

Անձնատուր եղած այս խորհրդածութիւններին՝ ես ամբողջ ժամ՝ կիսաապուրկած, կիսանստած դիրքում նայում էի պատկերին: Յետոյ երբ ինձ համար պարզեցի իմ տպաւորութեան ինչութիւնը — նորից զլուխ իջեցրի բարձի վերայ: Նս հասկացայ, որ պատկերի կախարհանքը կայանում է նորա ուժեղ իրական արտայայտութեան, նորա զարմանալի կենսականութեան մէջ, որ ինձ սկզբում ցնցեց, իսկ յետոյ շփոթեց, վրդովեց և ճնշեց:

Խոր և երկիւղած սարսափով ես դրի աշտանակը իւր ատշւայ տեղը: Այդպիսով հեռացներով աչքերիցս իմ մեծ վրդովմունքի պատճառը՝ ես շտապով առի ձեռքս զբքոյկը, որի մէջ զրւած էր նկարների գնահատութիւնը և նոցա պատմութիւնը: Գտնելով ձուածիր պատկերի համարը՝ կարդացի հետեւեալ մութ և օտարոտի պատմութիւնը:

Սա մի ջահիլ, հազւագիւտ գեղեցկութիւնով, շնորհալի, անհոգ և ուրախ աղջիկ էր: Նւ անիծւած լինի այն ժամը, երբ նա հանդիպեց և սիրեց նկարչին և դարձաւ նորա կինը: Նկարիչը — բուն զլացմունքով լի, հարցասէր, խտաբնոյթ մի մարդ էր, որ սիրահարւել էր իւր գեղարւեստի վերայ: Իսկ կինը — չքնաղագեղ մի աղջիկ էր՝ ուրախսրտանի և սիրալիր. նա ինքը՝ լոյս էր և ժպիտ և մատաղ եղջերուի աշխոյժ. նա սիրում էր ամեն բան և տոտում էր միայն գեղարւեստը, որ նորա հակառակորդն էր. նա վախենում էր միայն վրձինից և ներկից և բոլոր այն նղովւած գործիքներից, որոնց շնորհիւ նա զրկւում էր իւր նշանածից:

Այս կինը սարսափով լսեց նկարչից, որ սա կամենում է նորան նկարել: Բայց նա պարկեշտ էր և հեզ և հնազանդ նստում էր ամբողջ շաբաթներ շարունակ աշտարակի մութ և բարձր մի սենեակում, ուրտեղ օձուքի ծակից միայն՝ թափանցում էր լոյս նկարչի սպիտակ կտաւի վերայ: Բայց նա, նկարիչը, իւր բոլոր փառքը կեղ-

րոնացրել էր այդ գործի վերայ, որ ամեն մի ժամ, ամեն մի օր նկատելի կերպով առաջ էր գնում:

Նա կրքոտ, օտարոտի և մտքերի զնացած մի մարդ էր, որ այնքան ընկղմւած էր իւր ցնորքների մէջ, որ չէր նկատում թէ ինչպէս աշտարակի ծայրից թափանցող այդ մռայլ լոյսը՝ չորացնում էր նորա կնոջ առողջութիւնը: Կինը ցամաքում էր և նւազում. և այդ բանը բոլորին տեսանելի էր, բացի նորա ամուսնուց: Չը նայելով դորան, նա շարունակում էր ժպտալ և երբէք չէր դանդաւում, որովհետեւ տեսնում էր, որ արդէն մեծ հուշակ ստացած նկարիչը իւր ներկայ գործի մէջ մեծ և անբաւ հրճւանք էր զգում և օր ու գիշեր աշխատում էր նկարելու նորան, որին նա այնքան սաստիկ սիրում էր և որը օրէցօր դառնում էր աւելի ու աւելի տկար և դունատ:

Նւ արդարեւ՝ նոքա, որոնք բաղդ էին ունենում տեսնելու նկարը՝ շնչում էին միւսների ականջներին պատկերի անպատմելի նմանութեան մասին: Դա ապացուցանում էր տաղանդի ոյժը և սիրոյ այն մեծ խօրութիւնը, որ ունէր նկարիչը դէպ իւր մտածմունքների առարկան:

Քայց վերջերումը, երբ գործը արդէն աւարտւելու վերայ էր, ոչ ոքի ալ ևս թոյլ չէին տալիս աշտարակի մէջը, որովհետեւ նկարիչը մինչև խելագարութիւնը սաստիկ զրաւուած էր իւր գործով և չէր հեռացնում իւր աչքը կտաւից մինչև անգամ կնոջ վերայ նայելու նպատակով: Նա կարծես չէր տեսնում, որ այն ներկերը, որ նա թափում էր կտաւի վերայ, նա քաղում էր իւր կնոջ թարմ այտերից:

Նւ երբ շատ շաբաթներ անցնելուց յետոյ՝ միայն մնում էր վերջին գիծը վրձինով քաշելու նկարի շրթունքների վերայ և աչքերին փալլը աւելացնելու, որպէս զի նկարը բոլորովին պատրաստ լինէր, այդ ժամանակ կեանքը վերջին անգամ խաղած կնոջ մարմնում, ինչպէս հանդող կանթեղի մէջ վերջին բոցը:

Սհա և պատրաստ է պատկերը ինքը:

Նկարիչը մի քանի վայրկեան կանգնած նայում էր հիացմունքով իւր գործին, որի վերայ այնքան ջանք էր թափել: Նւ մի րոպէից յետ նա յանկարծ դողաց կարծես սարսափահար եղած և բարձրաձայն աղաղակեց՝

— Նւ յիշաւի, դա կեանքը — ինքն է:

Նա արագ լուռ եկաւ, որ նայի իւր սիրուհուն, բայց սա մեռած էր:

ՐՈՍՖՈՐԻ ԱՓԵՐՈՒՄ

(Կ. ՊՈԼՍՈՅ ԶԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՅ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅԻ

Ա

ԶԻԱՔԱՐՇԻ ՄԷՁ

Աշնան մի երեկոյ, երբ ձիաքարշը Կ. Պոլսի ասիական ավի Դիւան-եօլից դէպի կամուրջն էր գնում, Կէտիկ-փաշայի գլխին կանգնած մի երիտասարդ փայտով նշան արեց կառապանին, կանգնեցնել տւեց վագոնը, առաջնորդեց դէպի նա մի օրիորդի, օգնեց նրան ներս մտնել և ինքն էլ ցատկելով հետևեց նրան:

Լևոնը և Վիրժինն էին Կոքա—եղբայր և քույր, որոնք Թատրոն էին գնում, որովհետև երկար տարիներից յետոյ, առաջին անգամն էր, որ Խիզանի ուսումնասիրաց ընկերութիւնը մեծ զժւարու-թեամբ հրաման ձեռք բերելով, հայերէն լիզւով մի ներկայացում էր տալիս Բերայի Վերդիի Թատրոնում:

Լևոնը մի կարճահասակ նիհար երիտասարդ էր, զժգոյն դէմքով. գեղարուեստական համալսարանի ուսանող էր. այդ տարի նա աւարտում էր ճարտարապետական ֆակուլտետը, որից յետոյ նա մտադիր էր ճարտարապետ դառնալ ուղղակի:

Վիրժինը, նրա քույրը—ինչպէս ասեմ ձեզ—տասնևչորս տարեկան էր. գեղեցիկ դէմքով, զժգոյն թշերով, մեծ սև աչքերով և դէմքի միւս մասերի կանոնաւորութեամբ: Վիրժինը միշտ լաւ էր հագնւում, միշտ ամենալաւ կոորներից էր ընտրում իւր շրջագլխոյ համար. քան-

դաժնապատ կոթով հովանոցը ձեռքին, ձեռնոցները մինչև արմունկը քաշած, կոշիկները փայլուն կաշիից և սրճագոյն ժապավենով կապած: Ի լրումն ամենայնի՝ նորա թևերի վերայ սփռում էր երկար սև մազերի մի մետաքսանման հիւս, որը մէջտեղից թուլում թեամբ կապւած էր վարդագոյն ժապավենով:

Վագոնի մէջ ազատ տեղ շատ կար: Այնտեղ միայն հինգ մարդ էին նստել. նրանցից մէկը մի պտտող դերվիշ՝ էր, իւր բաց-սրճագոյն երկար վերարկուով և բաժակաձև թաղեաց երկար զլխարկով. նա զլուխը վագոնի լուսամուտից դուրս հանած՝ մինարէթների ծայրերին էր նայում: Երկուսը թիւրք արհեստաւորներ էին, որոնք Նզիկուէի գաղի դործարանից վերադառնում էին տուն իրանց կեղտոտ դէմքով ու հագուստներով: Միւս երկուսը, ըստ երևոյթին, հայեր էին. մէկը հասարակ հագուստով և ճմրտկած կեղտոտ ֆէսով, իսկ միւսը փայլում էր իւր շքեղ հագուստների մէջ: Սիրուն ձեռնոցներ, ձեռքին սև փայլուն գաւազան, ձերմակ փողպատ, եւրոպական փափուկ և ամենամոտ լայնաշուրթն զլխարկ. ահա ինչ աչքի էին ընկնում ասաջին տեքից: Երիտասարդը սիրուն էր, կարծես օրիորդ լինէր, ընչաքիչ չունէր, իսկ մօրուքը նոր դերձել էր և ծնոտը սպիտակեցրել պուդրով. իրաւ է, պէնսընէ ևս ունէր, սակայն խաղում էր նորա հետ և միայն այն ժամանակ ցցեց քթի վրայ, երբ Վիրժինը ներս մտաւ:

— Օհօ՛, գոչեց Վեռնը, երբ տեսաւ այդ ֆրանտին — բարեւ, մնիս Վահրամ, ասանկ ո՞ւր կերթանք կոր:

Նւ հեղնօրէն ժպտելով նստեց նորա կողքին:

— Փերա, պատասխանեց Վահրամը կիսովին Վիրժինին նայելով ընդմէջ... բայց, ներեցէք, փարդօ՛ն, դուք զիս փրէզան [է՛ 1) շրթեք ձեր...

— Քոյրս, չարեց Վեռնը և դառնալով քրոջը ասաց — մնիս Վահրամ՝ Քաջբերունեան:

— Քաջբերունի, ուղղեց Վահրամը — իսկ դուք ո՞ւր կերթաք ձեր մա... մա... փարդօ՛ն, ձեր քոյրը:

— Ամուսնացած չէ, ժպտեց Վեռնը:

1) Ներկայացնել:

—Ուրեմն, ո՞ւր կերթաք կոր ձեր մազմազել քրոջը հետ այս պահուս։

—Փերա, Վերդիի թատրոնը։

—Ա՛յ, իրա՞նք, հոն Կարմե՞ն կամ Վա բէլ-էլէ՞ն և կամ Վէ քլօշ դէ քօրնը՞լից...

—Ո՛հ, միջահասակ Վեոնը—հայերէն են ներկայացնելու։

—Հը՛մ, դէմքը ծոմակեց Վահրամը—հայերէ՞ն... զիտէ՞ք մտիւ Վեոն, քաղցր չէ՞ք դտնար Ֆրանսիերէն լեզուով փիէսները և քօմէդիները, ա՛հ, նա մանաւանդ սա օփերաները, որք կըզմայլեցունեն իրանց լեզուով ու մեղիքովին։

—Ճաշակից է կախաճ, զիտեց Վեոնը, ևս աւելի կը սիրեմ հայերէն լեզուով լսել, որովհետեւ չեմ հասկնար Ֆրանսերէն լեզուն։

—Հա՛, հա՛, հա՛... քրքջաց մտիւ Վահրամը—տեսա՞ր մի, իսկ մազմազե՛լը, դարձաւ նա Վիրժինին—իսկ դո՞ւք, մազմազէլ, կը սիրէ՞ք Ֆրանսերէնը, անշուշտ զիտէք ալ։

—Դիտեմ, պատասխանեց Վիրժինը։

—Եւ ո՞վ է ան, գուցեց խրոխտ ձայնով Վահրամը—ո՞վ է ան, որ զիտնալով Ֆրանսերէնը, չը սիրէ, ևս կը կարծեմ, մազմազէլ, որ դուք ալ ինձ նման մեծ հաճոյքով կը լսէք կոր Ֆրանսերէն լեզուով փիէսները։

—Կը սիրեմ լսել, պատասխանեց Վիրժինը։

—Ա՛հ, տեսա՞ք, մտիւ Վեոն, բացականչեց Վահրամը ուրախութեամբ—ձեր քոյրը համամիտ է ինձի հետ։

Եւ նա Վիրժին նայեց մի աջնալիս ժպտով, որ խեղճ աղջիկը կարմրեց և ակնարկը դարձրեց մի ուրիշ կողմ։

Ձիաքարչը այդ միջոցին հասել էր Գիւլհանէի առջև. տաճիկ արհեստագործները արդէն իջել էին, դէրվիշը զլուխը լուսամուտից չէր հեռացնում, իսկ միս հայը նստած տեղում քնել էր։

—Եմն մարդ իւր ձաշակը ունի, զիտեց Վեոնը—քոյրս սիրում է Ֆրանսերէնը, իսկ ես ոչ։

—Ս, yes ¹⁾... մամուաց Վահրամը և չանկարծ դառնալով Վիրժինին, հարցրեց Ֆրանսերէն։

¹⁾ Այո, այո։

—Mademoiselle préfère la langue française, n'est-ce pas? j'en suis enchanté... (օրիորդը նախադասում է ֆրանսերէնը, այնպէս չէ՞, հիացած եմ):

—Merci, համարեա ականաց պատասխանեց օրիորդը:

—Եւ ձեր պարոն եղբայրը, շարունակեց Վահրամը նոյն լեզուով-գիտէ՞ ֆրանսերէն, գոնէ մի քանի բառեր հասկանո՞ւմ է:

—Ո՛չ, այս անգամ աւելի վստահութեամբ պատասխանեց Վերժինը — եղբայրս հազիւ սովորական փարդօն, մերսի եւ բօն-ժուր բառերը գիտէ...

—Շօ կեցցէ՛ք, գոչեց Վեռնը ծիծաղելով — այդ ինչ լաւ կոոր-տում էք ֆրանսերէն:

—Փարդօն, մսիու Վեռն, միթէ զուք այդչափ լա՞ւ կը հաս-կնաք, որ քրիտիք ¹⁾ ալ կընէք:

—Ո՛չ, բայց տեսնում եմ որ կմկմալով չես խօսում:

Վահրամը ժպտելով Վերժինին նայեց:

—Եղբայրս միայն հայերէն եւ տաճկերէն գիտէ, արդարացրեց Վերժինը:

—Օ՛, oui, oui, ça ne fait rien ²⁾... գիտէ՞ք, ես ամբողջ երեք տարի Փարիզում եմ եղել, իսկ այդ հայերէն ներկայացումները իմ ականջս ծակում է այդ լեզուի բառերը:

—Հայերէնը մեր մայրենի լեզուն է, գիտեց Վերժինը:

—Ս՛հ, այո, sans doute... ³⁾ այդ շատ ճիշտ է, ամեն մարդ պիտի սիրէ իւր լեզուն, իւր հայրենիքը, ֆրանսացիները որչա՛փ հայրենասէր են, տեսնէք նոցա, երբ գոչում են, o'h, ma chère patrie... ⁴⁾ նոցա բոլոր հեղինակները, գիտունները, Վիկտոր-Իւգօն, Դիւման, անմահ Մէօթէն, Շիլլերը... զուք կարգացել էք այդ գրածքները. ես միշտ կարդում եմ. quelle esprit ⁵⁾, սքանչելի՛ են, ի՛նչ վսեմ դադափարներ... բայց ներեցէ՛ք, զուք այժմ Վերդիի թատրո՞նն էք գնում ուղիղ:

—Այո՛, պատասխանեց Վերժինը, որը կարծես սկսում էր հե-տաքրքրուել այդ երիտասարդով:

¹⁾ կրիտիկա: ²⁾ Այո, այո, միտս չունի: ³⁾ Անկասկած: ⁴⁾ Ե, իմ սիրելի հայրենիք: ⁵⁾ Ինչ սպիւ լինէ...

—Tres bien, tres bien ¹⁾, ուրեմն անշուշտ թույլ կը տաք որ ես եւս ընկերանամ ձեզ:

—Շնորհակալ եմ, բայց դուք զործից ետ չը մնաք,

—Գո՞րծ. հա՛, հա՛, հա՛... ես ազատ եմ, օրեկան միայն երկու ժամ զործ ունիմ la sublime-porte-ի ²⁾ մէջ, այն էլ ի՞նչ զործ. քանի մը զուածքներ եմ թարգմանում եւ վե՛րջ. e finito il comedia... ամիսը լրանալուն պէս 10 ոսկին տալիս են ձեռքս ma chère mademoiselle, ես ձեզ հետ կը գամ, կը հաճի՞ր:

—Ինչո՞ւ է, շնորհակալ կը լինենք, ժպտեց Վերթինը:

Ձիաքարչը վերջապէս կանգ առաւ, Լեոնը, որը սկսել էր քննել վեր թռաւ եւ Վերթինի ու Վահրամի հետ ցած իջան վազոնից:

Ցաննէհինգ բոլէից յետոյ երեքն էլ ցած էին իջնում Վահրամի վարձած կառքից եւ մտնում էին Վերդիի թատրոնը:

Լեոնը յառաջացաւ դէպի տոմսավաճառը.

—Բազկաթուռի տոմս, ասաց նա:

Allons donc... ³⁾ մտի՛ւ Լեոն, ցատկեց դէպի նա Վահրամը—այդ ի՞նչ է, հայտէ՛ բաքալը՛մ ⁴⁾, ետ քաշէ սկէց:

Ապա դառնալով դէպի տոմսավաճառը, ձգեց նրան մի ոսկի եւ գոչեց:

—Un billet de loge ⁵⁾:

Բ

ՏԻՐՈՋ ՍՐՃԱՐԱՆԸ

Կում-Վափուի երկաթուղոյ կայարանի մօտ կան երեք-չորս հաւ սրճատներ, որոնց մէջ իւր շքեղութեամբ նշանաւորն է մի երկյարկ ապիտակ քարից շինած շէնք:

Մեծ ապակիներով լուսամուտից ներս, առաջին շարիւղմ, կարելի է տեսնել մարմարեայ սեղաններ դարսած պատերի տակ, երկար նստարաններով եւ շքեղ աթոռներով շրջապատ-

¹⁾ Շատ լաւ. ²⁾ Կոմեդիան վերջացաւ, խաղական մի ոճ է, որը համապատասխան է մեր «պրճաւ դնաց» ոճին: ³⁾ ոճ է, որ նշանակում է, «աղ իճէ է» համապատասխան է ռուսաց «ВУ» բառին: ⁴⁾ «Հազդէ նախնք» տաճկական ոճ է որ նշանակում է «ВУ». ⁵⁾ Լոժալի մի բիլէտ տւէր:

ւած: Իւրաքանչիւր սեղանի վերայ դրւած կայ մի մի չաղճապահեաց լուղկիաման և նոցա կողքին հայերէն, տաճկերէն և անգղերէն լրագիրներ: Վա մի բողոքականի սրճատուն էր. պատերի վրայ կախւած են զանազան մեծութեամբ շրջանակներ, որոնց մէջ ոչ թէ պատկերներ են դրւած, այլ շքեղ տառերով դրւած կան «Ա. Պրքից քաղւած խօսքեր. օրինակ «Տէրը իմ հովիւն է, Յիսուսի եկ» կամ «Յտեւէս եկուր» և այլն:

Սրահի յատակը սալած է և մաքուր լւացած:

Խիզանի Ուսումնասիրաց ընկերութեան հայերէն ներկայացումի երկրորդ օրը, այգտեղ, մի սեղանի շուրջը շրջան կազմել նստել էին Հուքուքի, Թբիշէի, Համիդիէի և Սուլթանիէի հայ ուսանողներ ¹⁾: Ուսանողները լսում էին մէկին, որը կարգում էր և միւսին, որը դիտողութիւններ էր անում կարդացածի վրայ:

Սամաթեաց գնացող երկաթուղին նոր սուլելով անցել էր կաշարանի առջևից, երբ տիրոջ այդ սրճարանը մտաւ մի երիտասարդ. նա կրում էր բժշկական դպրոցի նշանազգեստը — մի երկար պղնձեաց կոճակներով վերարկու, գլխին աշտարակաձև կարմիր Վէս՝ կախ ընկած փուսկիւլով և ոտքին երկար փայլուն կոշիկ:

Ներս մտաւ ծիծաղ դէմքին, շորս կողմը մի ակնարկ ձգեց, յետոյ մօտեցաւ ուսանողներին և բարեկց.

— Ս', բա'րե, բա'րե, Կարապետ է՛ի՛նչի, ատացին ամեն կողմից և աթոռները շարժեցին:

Կարապետ է՛ի՛նչիին առաւ մի աթոռ և նստեց:

— Ի՞նչ էք անում այտեղ, հարցրեց նա դառնալով մի նիհար ուսանողի:

— Վիճում են, մէջ մտաւ լիքը և կլոր դէմքով Հիւքուքի մի

¹⁾ Ա. Պալում կան տաճկական բարձրագոյն կուրսեր, որոնք են, իրաւաբանական (4 տարի), բժշկական (2 հաս, զինւորականը 10 տարի, քաղաքականը 8 տարի), Համիդիէի և Սուլթանիէի գիտնադիտական ընթացքներ: Բացի դոցանից կան նաև զեղարուստական (3 ճիւղ — ճարտարապետական, արձանագործութեան և նկարչութեան) վաճառականական և լեզուաբանական կուրսեր: Այս բոլոր կուրսերում գտնաբերում են տաճկերէն լեզուով և տաճկերէն դասագրքերով, պրոֆեսորներից մեծ մասը Եւրոպայում աւարտած տաճիկներ են:

ուսանող, որը Ֆէսը ուղիղ ծոծրակի վրայ զրած՝ զլուխն էր քորում:

—Հա՞, ծիծաղեց Վարսպետը—էլի՞ վիճում էք, տեանե՛նք, այսօր ի՞նչ բանի վրայ էք վիճում:

—Այ՛ ասեմ, գոչեց նիհարը, որը Ռաֆայէլ էր կոչում—այս րոպէիս «Արևելքի» մէջ տպւած Ամերիկայի մի նամակն էինք կարդում՝ և...

—Աստու՛ սիրուն, ասաց Սուլթանիէյի մի աշակերտ, որը արձանի պէս ուղիղ և անշարժ նստած՝ խօսելու ժամանակ աշխատում էր չը շարժւել — Աստու՛ սիրուն, Ռաֆայէլ էֆէնդի, թէյդ կը սառչի, «սիրոջ թէյը», որին 20 փարպէս տուել:

Հայ բողոքականը յօնքը պոստեց, սակայն լսեց և խուցը մտաւ: Ռաֆայէլը ձեռքը պարզեց թէյի գաւաթը վերցնելու:

—Սպասի՛ր, բռնեց նրա թևից Վեոնը—[Թղթի կտոր չե՞ս ուզում, որ նրանովը գաւաթը բռնես:

Պէտք է յայտնեմ ընթերցողիս, որ շատախօսութեան ներկայացուցիչ Ռաֆայէլ էֆէնդին անպիսի չափազանցութեան էր հասցրել իւր մաքրասիրութիւնը, որ ամբողջ օրը իրան մաքրելով էր զբաղւած և ձեռք չէր վեր առնում բոցի շիւղերից պտրաստած խոզանակից, որ միշտ ման էր ածում հետը, նա այդ չափազանցութեան համար ծաղրի էր ննթարիւում իւր ծանօթներից, բայց չէր վհատւում, միայն բարկանում էր:

Հէնց դորա համար էր, որ երբ Վեոնը «թուղթ չես ուզում որ գաւաթը բռնես» ասաց, Ռաֆայէլ էֆէնդին կարմրեց, կատաղաբար թողեց թէյի գաւաթը, վեր թոսաւ տեղից և դառնալով ժպտող Վեոնին՝ զոնաց.

—Սկելէս, չիրօ՛ղ ¹⁾, կուգէիր որ քեզ նման աղաո՞ւս ըլլամ. այդ ի՞նչ է շապիկդ, ֆո՛ւհ... կոշիկներդ, կարծես տաք տարի ներկ չէ տեսեր, ֆէ՛սդ, կարծես հինգ հարիւր տարի կաղապարի վրայ չէ անցեր, հապա սա երե՞սդ... քանի՞ հազար տարի է, որ չես լուացեր:

Բոլորը նայում էին զայրացած Ռաֆայէլ էֆէնդուն և ժպտում էին:

—Ի՞նչ քանի միլիօն տարի է, որ չես խօսել և այժմ՝ բոլորի ոխն էլ հանում ես, ասաց արհամարհութեամբ Վեոնը:

¹⁾ Ապուխտ արած ձուկ:

— Լսի՛ր, դարշելիդ զքե՛ղ, որոտաց Ռաֆայէլը փրփրալով— ես շա՛տ կը խօսեմ... ես կը արամարանեմ, իսկ դո՛ւն, դո՛ւն ինչ կընես, զէվզէ՛կ, քիչէն պիտի տեսնես թէ ինչե՛ր կընէ Ռաֆայէլ էֆէնդին, սօքտէօր իրաւաբանութեան, պատուոյ վկայականով. դո՛ւն, զէվզէ՛կ, դուն զեռ շատ պիտի ծիծ ուտես, որ կարենաս գոնէ ճարտարապետի-որմնադրի, մշակի, համալի վկայական առնուլ:

— Լա՛ւ, լա՛ւ, մէջ մտաւ բժշկական ուսանող Կարապետը— ի՛նչ ես զլուիններս ցաւցնում, մենք ամենքս էլ զիտենք դու ով ես:

— Կը լսե՞ս դուն ալ, մարդ սպանո՛ղ, զարձաւ նրան Ռաֆայէլը:

— Ծօ՛, ծօ՛, ծիծաղեց Կարապետը— լեզուդ քեզ քաշէ, եթէ ես մարդու մարմինը կը սպաննեմ, դուն ալ լսելիքը:

Այդ միջոցին երկարահասակ հայ բողոքական սրճադործը մօտեցաւ նրանց, զլուխը ծոեց և մի շողոքորթ ժպիտով ասաց:

— Եղբայրնե՛ր, քիչ մը կամաց խօսեցէք:

— Հայդէ՛, ծօ՛, զոռաց նրա վրայ Ռաֆայէլը— հոս ո՞վ է քու եղբայրդ, տխմա՛ր, դուն ո՞վ ես, որ ես քու եղբայրն ըլլամ:

Բողոքականը վախեցած ետ քաշուց և կմկմաց:

— Էֆէնդի...

— Հա՛, բշտէ ատա՛նկ, էֆէնդի՛» ըսէ, եղբայր, յարեց նա ծաղրելով— ֆո՛ւհ, ե՛ս քու եղբայրդ. հայդէ, կորսուէ սկեց, մկմա՛լ չը համարձակուիս եղբայր ըսել:

— Էհէ՛, լսեց ջանկարծ նրա ետեւից— այդ ի՛նչ է, Ռաֆայէլ էֆէնդիս նորէ՛ն բարկացել է:

Ռաֆայէլը ետ դարձաւ. նրա ետեւում կանգնել էր զբաւիչ զէմքով, քթին պէնսընէ, դլխին լայնաշուրթն մի զլխարկ, ծածանող ծայրերով մետաքսեայ վզկապով միջահասակ և նիհար մի երիտասարդ:

— Արշա՛կ... գոչեց Ռաֆայէլը ձայնը մեղմացնելով:

— Ի՛նչ է եղել, ասաց Արշակը նստելով— նորէն սկսել էիր մեծանալ, «եղբայր» բառը վշտացնում է քեզ:

Յետոյ ծիծաղեց, զրպանից մի բուռ մանր կորտած թղթեր հանեց և նոցանից մէկը Ռաֆայէլին տալով աւելացրեց:

— Ահա՛, առ, այս երեկոյ պիտի զատ այդ արհամարհածդ «եղբայրներիդ» երեկոյթին:

—Տոմնակ ունիս, գոհեցին բոլորը մօտենալով նրան:

—Այո՛, ժպտեց Արշակը—Մաղամ Շնաչդըը ինձ խնդրեց, որ ձեզ բաժանեմ այս ձրի տոմսակները. ո՞վ կուզէ:

—Ես, ե՛ս, ես, ասացին ամենքը:

Եւ շուտով Արշակի ձեռքին միայն մի հաստ տոմսակ մնաց:

—Այս էլ ինձ. ասաց նա տոմսակը զրպանք զնեւով:

Գ

Ն Ո Ր Մ Ա Ր Դ Ի Ն

1885 թւին, Կ. Պոլսում զարգացման մի շարժում էր սկսել. բժշկական, իրաւարանական, ղեղարւեստական և միւս բարձրագոյն դպրոցների հայ աշակերտները (եթէ կտրելի է ասել «ուսանողներ») ժողովուել մի ընկերութիւն էին կազմել և երկար մտածելուց յետոյ, հինգ նիստ կայացնելուց յետոյ, վճռել էին ընկերութեան անունը զնել «զիտական ակումբ»—միայն այդ էին վճռել զեռ. ևս:

Ակումբի նպատակը զեռ. յացանի չէր. մէկը ասում էր, որ պէտք է մի լրագիր հրատարակել առանց բանակախւների և իրարու հայհոյելու յօգւածներով, միւսը՝ յառաջագիմութիւն տարածել հասարակութեան մէջ, երրորդը՝ լսարաններ հաստատել, ուր խօսեն զիտութեան վրայ, չորրորդը՝ պատգամաւորներ ունենալով հասարակական զանազան հաստատութիւնների մէջ, ակումբի քննադատութեանը ենթարկել նոցա ընթացքը:

Ակումբի անունը որոշելուց յետոյ, անդամները մի նիստ էլ նուրեցին որոշելու թէ ո՞ւր պիտի լինին նիստերը. երկար վիճարանութիւններից յետոյ վճռեցին փոփոխակի ժողովուել Ննի-Վափուռ վարժարանի սրահը և ասաւելապէս Տիրոջ սրճարանի վերին յարկում, որը բողոքականաց ժողովարանն էր և ուր արդէն պատրաստ կային ամբիոն և նստարաններ. մաղամ Շնաչդից հրաման խնդրեցին և նա թող տուց:

Հէնց այդ էր պատճառը, որ հեազհեաէ տիրոջ սրճատուն էին մտնում ուսանողները. ժամը 10-ին (ըստ տաճիկական) ժողովը պիտի բացէր. անդամները մի ժամ առաջ էին եկել, ուստի և թէջ էին խմում և զւարճանում:

Արշակը Վիտական ակումբի առժամանակեայ նախագահն էր: Երբ բոլոր տոմսակները ցրել էր, նա աթոռը քաշեց Ռաֆայելի մօտ և նստեց.

— Խնչ նոր բան կայ, հարցրին մի քանիսները:

— Շատ բան չը կայ. բայց եթէ կուզէք, ահա ձեզ մի փոքրիկ նորութիւն: Մի շաբաթ է, որ զաւառից մի հայ երիտասարդ է Կ. Պոլիս եկել. փոքր ինչ յետոյ նա կը մանի աջատեղ, ես եկել եմ նրան սպասելու, որպէս զի ձեզ հետ ծանօթացնեմ:

— Ինչացո՞ւ է, հարցրին ամեն կողմից:

— Ուսուցիչ է. զանազան հանգամանքներից ստիպւած թողել է զաւառը և եկել է Կ. Պոլիս. պարապ է, թէ ի՞նչ գործի կը ձեռնարկի՝ դեռ յայտնի չէ:

— Զարգացած տղայ է:

— Կարծում եմ, ասաց Արշակը — նախ և առաջ շատ լաւ ուսումնասիրել է հայ ժողովուրդը, որի մասին նա շատ ընդարձակ տեղեկութիւններ է տալիս. կարդացել է շատ և այժմ էլ կարդում է. միջնակարգ ուսում է ստացել, սակայն ինքնաշխատութեամբ զիտե այն բոլորը, ինչ որ մեզնից շատերը դեռ ևս նոր պիտի սովորեն... պարոններ, այդ երիտասարդը համակրելի տղայ է, շուրջ 26 տարեկան, նիհար, հիւանդոտ, հազում է խեղճը. չի սիրում երկար խօսել, կրքոտ էլ չէ, պատասխաներն իսկ չի ծամծմում:

— Շատ չե՞ս գովում, միջահատեց Ռաֆայելը:

— Իուք այդ կը տեսնէք և եթէ ես վճռեցի սկզբից խօսել ձեզ նրա մասին, այդ նրա համար էր, որ այդ երիտասարդը Կ. Պոլսոյ մէջ նմանը չէ տեսնւած մի տեսակ լրջութիւն ունի, որը զուցէ ձեզ ծիծաղ պատճառէ, ես էլ սկզբում ծիծաղում էի...

— Միթէ նրա հետ շա՞տ ժամանակ է, որ ծանօթ ես, հարցրեց Կարապետը:

— Այո՛, առաջին օրը մի հայ լրագրի խմբագրատան մէջ տեսայ նրան. խմբագրութեան անդամները վատ կարծիք կազմեցին նրա մասին, ասում են՝ լուռ է, որովհետեւ խօսել չը զիտէ:

— Տրամաբանական է, զիտեց Ռաֆայելը:

— Կ. Պոլսոյ արամաբանութիւնը այդպէս է, ծիծաղեց Արշակը. բայց մենք մեղաւոր զատ առացիներս, ուրիշ արամաբանական օրէնք-

ներ ունինք, մենք մտածում ենք, չլուռ է, որովհետև պիտի լսել աւելի, քան խօսել։ չի խօսում, որովհետև ամենքի հետ շատախօսել չէ կարելի և չի շատախօսում, որովհետև շատախօսութիւնը զգւելի ավտո է։

—Ականջը կանչի՝ Ռաֆայէլ էֆէնդիի, զոչեց Աւոնը հեռից—նա առանց մտածելու, իսկօյն կը սկսէր Յրինաց զրքի 15-րդ հատորի 19-րդ բաժանման 60-րդ մասի, 125-րդ գլխի 2645-րդ յօդւածի 6000-րդ համարի տրամադրութեան դէմ զործելով ենթարկել 24-րդ հատորի...

—Յիմար, որոտաց Ռաֆայէլը--ի՛նչպէս կը համարձակւիս օրինաց զրքերու անունը տալ, երբ նոցա երեսն անգամ չես տեսեր, մինչդեռ ես, ես տարիներ եմ կորցրեր ատոնց վրայ։

—Արոնց կողերին թղթով ես ձեռք տալիս. ծիծաղեց Աւոնը։

—Դո՛ւ, ապո՛ւշ, դու ոչինչ չես հասկնար առողջապահութեանէն, մինչդեռ ես...

Այդ միջոցին սրճատուն էր մտնում մի եւրոպական ղլխարկով միջահասակ երիտասարդ։ Հագել էր մաքուր, ձեռքին բռնած ունէր մի դաւադան, իսկ միւս ձեռքումը մետաքսեայ ձեռնոցները կլորեցրած դնդակի պէս։

Նա տգեղ չէր. ունէր փոքրիկ ցանցառ մօրուք, ընչացքի երկու ծայրերը մկան պոչի պէս դէպի վեր սրած։

Յօտեցաւ, լռութեամբ բարեկեց բոլորին, յետոյ մի աթոռ դրեց մի կողմ ու սկսեց ձեռնոցների հետ խաղալ։

—Բարի եկար, ասաց նրան Արշակը։

—Ի՞նչպէս էք, Միսաք էֆէնդի, հարցրեց Ռաֆայէլը։

—Ը՛ր՛մ... ¹⁾ լաւ եմ... կմկմալով և շարունակ բեխերի ծայրերը ոլորելով ասաց Միսաքը—քիչ յոգներ եմ... մեծ յօդւած մը գրեցի... սանկ... հինգ վեց երեսներէ բաղկացեալ։

—Աւա մեծ զործ էք կատարել, դիտեց Վարապետը—ի՞նչ նիւթի վրայ է։

—Ը՛ր՛մ... սանկ... ժողովրդեան զարգացման վրայ... սանկ... ը՛ր՛մ... այսինքն ինչ դեր կը խաղայ զարգացումը. վաղը կը տպւի։

—Վաղուայ համարի՞ մէջ։

¹⁾ Ասանք (սղնպէս) բան է։

— Այո՛, այո՛, հրամայեցի որ անպատճառ շարեն. մի ժամէն, և նա փոքրիկ ժամացոյցին նայեց— ժամէ մը պիտի երթամ փոքր տեսներու:

Միսաք էֆէնդին հայ լրագիրներին մէկի աշխատակիցներին էր:

— Իսկ դո՞ւք, դարձաւ նա ամենքին — ի՞նչու էք հաւաքուեր:

— Մուցա՞ր ժողովը. գոչեց Արշակը:

— Ը՛ր՛մ... այո՛, ես խօսեր եմ ժողովների մասին... էֆէնդի-
ներ, ներեցէ՛ք, ես պիտի երթամ:

Եւ նա ոտքի ելաւ:

— Ո՞ւր, ասաց Կարապետը — քիչ յետոյ նիստը պիտի բացւի:

— Ինձի ներեցէք, հո՛ն... Ը՛ր՛մ. փոքրիկ ժողով մ'ալ ես ու-
նիմ, օրիորդները ինձի կը սպասեն կոր:

— Օրիորդներ, գոչեց Ռաֆայէլը — անիրաւութի՛ւն, կը բողո-
քեմ, ես ինչո՞ւ հոն չը կամ:

Միսաքը արագութեամբ դէպի դուռը գնաց:

— Ժողովի չը պիտի՞ գաս, հարցրեց նրա ետեւից Արշակը:

— Սանկ... քիչ յետոյ կը գամ. կմկմաց Միսաքը և դէպի դուռը

շտապեց:

Բայց այնտեղից յանկարծ մի հասակաւոր մարդ ներս մտաւ,
Միսաքի դէմը փակեց և գոչեց զւարթ ձայնով:

— Օ՛, օ՛, շա՛նկ էֆէնդի, ո՞ւր կը շտապես:

— Օ՛հ, Յակովբէֆէնդի, կարմրելով կակազեց Միսաքը ներս
մտնողին տեսներով — քիչ յետոյ կուգամ, անպատճառ կուգամ:

Եւ դուրս թռաւ դռնից ու անհետացաւ:

Նոր ներս մտնողը նրա ետեւից նայեց, մի զւարթ ծիծաղ ար-
ձակեց և ասաց.

— Օ՛, որ շինեսդ, քակեսդ, կազմեսդ և լուծեսդ, զրեսդ և
ջնջեսդ, ողորմեա մեզ:

Յետոյ արագութեամբ մօտեցաւ երիտասարդաց խմբին և բա-
րեց. բոլորը լուրթեամբ և մեծ յարգանքով ոտքի ելան և տեղ
ցոյց տւին նոր հիւրին:

Յակովբէֆէնդին քառասնամեայ, խորշմալից ճակատով, ալե-
խառն մազերով և բաւական դեր մի անձ էր. նրա դէմքի վրայ
փայլում էին զիտող հայեացք և այնպիսի փոփոխող ժպիտներ, որ

տեսնողը խնայն հասկանում էր թէ ֆակովը հիֆէնդին այս ինչ ժպտի ժամանակ ինչ էր մտածում... իսկ երբ նա այլ ևս չէր ժպտում, ստանում էր մի մեկամաղձոտ լուրջ կերպարանք՝ կրակոտ թափանցող աչքերով. այդպէս դէպքում նա պատկառանք էր ազդում:

Նա նստեց, ուշադրութեամբ բոլորին զիտեց առանց ժպտելու, յետոյ ոտները մի աթուղին դէմ տւեց և հարցրեց.

— Ի՞նչ կընէք հոս:

— Մենք, խօսեց Կարապետը — հաւաքւել ենք, Եր...

— Խօսենք. վերջացրեց Արշակը:

— Խօսէ՞ք, ժպտեց հեգնօրէն Ֆակովը — դուքսը կամ ձեզ ու ձեզ քի՞չ կը խօսիք, որ կը հաւաքւիք ալ:

Եւ յանկարծ խօսցի դրան մօտ կանգնած հայ բողոքականին զառնալով՝

— Մօ՛, դուեց — սուրճ մը տուր ինձի, բացց նայէ, որ Պաւլիթ մարգարէ չը խառնես հետը — այդ մարգարէն անմարսելի է:

Բոլորը ծիծաղեցին, սրճադործը դէմքը ծռմուկեց և ներս մտաւ.

— Ե՛, դարձաւ նա երիտասարդներին — ժողովներ էք խօսելու հա՞, չեմ զարմանար ա՛, պոլսեցւոց լեզուի զսպանակը քիչ մը թոյլ է, խեղճ ուռսահայերը...

— Ռուսահայերը իրենք էլ պակաս շատախօսներ չեն. զիտեց Ռաֆայէլը:

— Այո, բացց նոքա շատախօսութիւնից զգւել էլ գիտեն. իսկ պոլսահայերը կարծես ոգևորւում են շատախօսութիւնից և նորան յարգում են ու սիրում:

Դ.

ԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Երիտասարդները բարձրացան սրճատան վերի յարկը դրական ափումբի նիստ կազմելու: Սրահը ուր պէտք է լինէր նիստը, կահաւորւած էր 10 կարգ երկար նստարաններով. վերի գլխում դրւած կար մի ամբիոն, որոյ գլխին, պատի վերայ երեւում էր շրջանակի մէջ «Յիսուսի եկ» բառերը:

Ուսանողները տեղ գրաւեցին նստարանների վերայ. Արշակը

նստաւ ամբիոնի առջեւ, զրպանից հանեց մի փոքրիկ զանգակ, թուղթ, մատիտ և թղթի վրայ «7-րդ ժողով գիտական ակումբի» զրեւուց յետոյ, դարձաւ բռնարին և այսպէս խօսեց:

— Ժողովը բացւած է, անդամներին մեծամասնութիւն այստեղ է, պակաս են միայն Վահրամ Էփէնդի Քաջբերունին, Սիսաք Էփէնդի Գնունին, Սիսակ Ապթանճեան և Յակովբ Սահառունի Էփէնդիները... ուրեմն կարող ենք սկսել: Ակսելուց առաջ կարեւոր եմ համարում օրակարգի մասին մի քանի խօսք ասել: Երբ մենք ժողովեցանք այս ակումբը կազմելու, նպատակ ունէինք մի մարմին կազմել, որը զբաղւի գիտութեամբ և հէնց զրա համար էլ անունը դրինք «գիտական ակումբ», բայց...

— Խօսք կ'ուզեմ, նախագահ Էփէնդի, յանկարծ նստած տեղից վեր ցատկելով զոչեց Ռաֆայէլը և ցուցամատը պարզեց:

— Երբ ես լինեցեմ, ասաց Արշակը և երբ Ռաֆայէլը կտրուածի պէս նստեց՝ շարունակեց:

— Բայց այժմ մեզնից իւրաքանչիւրը ժողովիս նպատակը անշափ ընդլայնեց և մասերի կարտեց, որ այլ ևս յայտնի չէ թէ մենք ի՞նչ ենք անում, ժողովում ենք ջո՞ւր ծեծելու, պարոններ, այսօր պէտք է վերջնական վճիռ կայացնել:

— Խօսք կ'ուզեմ, զոչեց նորէն Ռաֆայէլը:

— Այժմ ես վերջացրի, ասաց Արշակը — խօսքը Ռաֆայէլ Էփէնդիինն է. Ռաֆայէլ Էփէնդին վեր կացաւ, հազաց, իւր կողքիններին նայեց և երբ ակնարկը հանդիպեց Վեոնի հեղնական դէմքին, պարտք համարեց զլիսովը մի սպառնական շարժում անել, յետոյ դարձաւ նախագահին և ձեռքերով շարունակ օղը պատառելով՝ բացականչեց:

— Երևելի փիլիսոփայ և բանաստեղծ Հօրասը, այսպէս սկսեց Ռաֆայէլ Էփէնդին, իւր «L'art poétique»-ի մէջ ասում է «quid deceat, quid non» այսինքն «Corrigez ce que est mauvais, gardez ce que est bon» այսինքն «ինչ որ յարմար է պահէք, թողէք ինչ որ անյարմարն է... պատկառելի ժողովդ զիտէ այդ և զրա նշանակութիւնը, բոլորս էլ բարձրագոյն համալսարանի ուսանողներ ենք և կարող ենք հասկանալ թէ ինչը յարմար է, ինչը ո՛չ. ուստի, առաջարկում եմ իսկոյն յառաջ բերել զանազան, այլ

և այլ, տարբեր նշանակներ և նոցա միջից ընտրել այն, «quid deccat, quid non»:

—Plaudite, cives! ¹⁾... գոչեց այն կողմից Լևոնը, որ միշտ սիրում էր ծաղրել շատախօսին. բոլորը ծիծաղեցին:

—Այո՛ւշ, որոտաց Ռաֆայէլը—ամբողջ համալսարանը դիտէ, որ Ռաֆայէլ էֆէնդին առաջինն է խօսելու, արամեաբանելու մէջ, իսկ քեզ նման որմնադիրները իրանց խօսքերը միայն բառարաններու մէջէն կրնան գտնել. ժողովիս համար մեծ պակասութիւն մ'է...

—Ի կա՛րդ, գոչեց նախագահը զանդա՛արելով—մասնաւոր խօսակցութիւնը արդիւնալ է, խօսքը նախագահին պիտի ուղղել:

—Խօսք կուզեմ, ասաց բժշկական դպրոցի մի ուսանող:

—Խօսքը ֆարութիւն էֆէնդիինն է:

—Նախագահ էֆէնդի, այստեղ եկել ենք իրարու նախատեղու թէ դործ տեսնելու, բողոքում եմ և խնդրում որ բողոքս արձանագրուի:

—Այո՛, գոռաց այն կողմից մի ուրիշ ուսանող—բողոքում եմ և ես և աւելացնում եմ, որ Ռաֆայէլ էֆէնդին անվայել է պահում իրան. դիտողութիւնս արձանագրուի:

—Եւ ես խնդրում էի որ տուգանքի ենթարկուի. առաջարկութիւնս արձանագրեցէք:

—Գուք բոլորդ ալ ինձ կը նախատէք, ասաց Ռաֆայէլը—ուստի բողոքում եմ որ բողոքս արձանագրուի:

Այդ շատ կը տւէր, եթէ յանկարծ սրահի դուռը չը բացէր: Ամենքը լսեցին և նոր ներս մտնողին նայեցին:

Դա մի նիհար երիտասարդ էր, խիստ դժգոյն դէմքով, մեծ խոր դնացած աչքերով, մորուքը կլոր և թանձր, ընչացքը կարճ, մտղերը սակաւ, սակայն ճակատը լայն և մի քանի խորշոմներով զարդարած: Ներս մտնելուն պէս կանգ առաւ և շարածի պէս զիտական ակումբի անդամներին նայեց:

—Ա՛հ, գոչեց ակումբի նախագահը վեր ցատկելով տեղից—Արտաշէսն է... Եւ դէն շարտեց ձեռքի զանդակը, վազելով իջաւ ամբիոնից, մօտեցաւ ներս մտնողին, բռնեց նրա ձեռքից և դառնալով միւսներին՝ ասաց:

¹⁾ Մտիտահարեցէք, քաղաքացի՛ք:

—Պարոններ, ներկայացնում եմ ձեզ, գաւառացի ուսուցիչ Արտաշէս Մխրճեանին:

—Սորա մեր ժողովի անդամներն են, դարձաւ նա ուսուցչին— իրաւաբանական, բժշկական, Սուլթանիէ, Համիտիէ և այլ համալսարանների ուսանողներ, ոմանք աւարտելու մօտ և ոմանք երկրորդ կամ երրորդ կուրսի:

Արտաշէսը լուսթեամբ բոլորին գլուխ տւեց, յետոյ չորս կողմը նայեց և խուլ ձայնով հարցրեց:

—Դուք նիստ ունէիք, ես չը խառնե՞ցի:

—Օ՛, ո՛չ, պատասխանեց Արշակը—եթէ կուզես, նստիր և լսիր, մենք կը շարունակենք... և, ժպտեց նա—լաւ որ եկար, քիչ էր մնացել իրարու ծեծէին. նստեցէ՛ք, յարեց նա ամբիոնը ելնելով—նիստը բացվում է. մեր ընկերութեան անունը դրել ենք զիտական ակումբ, առաջարկում եմ կամ այդ անունը փոխել և կամ թէ լոկ զիտական բաներով զբաղւելու, զիտական դասախօսութիւններ անելու լսաբաններ հաստատելու, և այլն նպատակը ընտրենք լայնածաւալ մտքով. այդ նպատակը իւր մէջ բովանդակում է օգնել զիտութիւն ծարաւ ազգատ երիտասարդներին, բանականներից ազատ մի զիտական թերթ հրատարակել, զիտութիւնը մատչելի լեզուով մտցնել ժողովրդեան մէջ և այլն. այս նպատակը, ըստ իս, շատ յարմար է, ապա թէ ոչ անունը պիտի փոխել. մինչդեռ այդ անունը զնելով մեր զլխաւոր միտքն է եղել զիտութիւնները տարածել, ես վերջացրի պարոններ, յոյս ունեմ, որ բոլորդ էլ համամիտ կը լինէք ինձ, ուստի խօսէ թող, ով կամենում է:

—Խօսք կուզեմ, ասաց Աւոնը:

—Խօսքը ձերն է:

—Մտածե՞լ էք արդեօք թէ մենք որչափ ոյժ ունենք այդ նպատակը իրագործելու համար. մենք նոյն իսկ մեր մէջ ոչ մի զիտութեան հետ կառարեալ ծանօթներ չունենք և...

—Մեղանչում ես, գոռաց Ռաֆայէլը ցատկելով տեղից—մեր մէջ կան անձինք, որոնք շուտով կը ստանան իրաւաբանական կամ այլ զիտութեանց կատարեալ ծանօթ լինելու վկայականներս ես էզուց երբ վկայականը ստանամ, իսկոյն պիտի ձեռնարկեմ մի բրոշիւրի, որի մէջ պիտի ցոյց տամ թէ մեր ազգը որչափ վնասներ է

կրում նորանից, որ ծանօթ չէ, Գիզօի և այլ հանճարների հետ:

—Մանաւանդ Ռաֆայէլ էֆէնդիի հետ:

—Այո՛, շարունակեց Ռաֆայէլը խորօս աջնով—եւրոպական հանճարների հետ մեր ազգը ծանօթ չէ և դորա համար է, որ նա միշտ վնասուում է, միշտ ծաղրելի է լինում:

—Si, mon cher ami... ¹⁾ լսեց յանկարծ դռան կողմից մի ձայն—C'est juste. Comme vous voulez ²⁾. Ես համամիտ եմ իմ բարեկամ, սիրելի Ռաֆայէլ էֆէնդիի հետ. բարե ձեզ, mes-sieurs, mon cher ami, Ռաֆայէլ էֆէնդի՛ս, vous parlez comme un avocat, je vous felicite ³⁾:

Վահրամ Քաջբերունին էր դա. փայտը անկիւնը դրաւ, այդ խօսքերը ասելով հանեց ձեռնոցները, կրորեց դրաւ զլիսարկի մէջ, զլիսարկն էլ դրաւ մի աթոռի վրայ և եկաւ նստելու Ռաֆայէլ էֆէնդիի մօտ, որը ժպտեց նրան և պատասխանեց:

—Merci, cher Vahram.

—Սա՛ղթ ⁴⁾, մեմնաց Կեռնը—խուփը զլորւաւ, պուտուկը գտաւ:

Այդ խօսքերը միայն նրա կողքինները լսեցին, իսկ Վահրամը սկսեց այդ միջոցին մի ֆրանսերէն խօսակցութիւն Ռաֆայէլի հետ:

Կէս ժամից յետոյ ժողովը վերջացել էր. ամենքը ոտքի ելան, Վահրամը շարունակելով իւր ֆրանսերէն խօսակցութիւնը, մօտաւ Ռաֆայէլի թիւը և քաշեց մի կողմ. Արշակը Արտաշէսի հետ և բոլորը սկսեցին ցած իջնել:

Գիտական աղումքը վճռել էր իւր նպատակը՝ գիտութիւնը ընտրել և երկու հոգուց բաղկացած մի մասնախումբ էր կազմել ծրագրելու կանոնադրութիւնը, մինչև մի շաբաթ:

Սկսում էր մթնանալ. ուսանողները սրճատուն իջան աղմկալից և պատրաստեցան մեկնելու:

¹⁾ Հէնց ազգայն է, սիրելի բարեկամ: ²⁾ ձիշա է. ինչպէս որ կուզէք (ԲԱԿՅ ՏՈՒՅԻՏԵ): ³⁾ Դուք խօսում եք փաստաբանի պէս... չնորհաւորում եմ: ⁴⁾ իսկ և իսկ:

Ե

ՎԻԿՏՈՐ ՀԻԿԹՈՒ ՍԵՐԵՆԱՒԷ

—Non, non, je vous assure ¹⁾, զուք կարող էք նայել, ես ալ կարգացել եմ Գիգոէն, je pense que ²⁾, գիտէ՞ք ա', մեր այս siècle gâté-ի ³⁾ մէջ c'est l'unique moyen ⁴⁾:

—Pardon, pardon, monsieur Vahram, ներեցէք, զուք իրաւաբանութեան ուսանող չէք, vous n'êtes pas juriste ⁵⁾, ի հարկէ, զուք չը գիտէք թէ ի՞նչ հրաշալի, politique charmante ⁶⁾, սքանչելի քաղաքականութիւն է այդ...

—Mais, mais, mon cher ami, բացականչեց Վահրամը ձեռքերը տատանելով օդի մէջ. je crois que moi aussi ⁷⁾ կարող եմ զրքեր կարդալ. des livres politique ⁸⁾. Ես ալ կրնամ comprendre une chose ⁹⁾:

—Sans doute ¹⁰⁾, ի հարկէ, գոռաց Ռաֆայէլ Էփէնդին— զուք կարդում էք, այդ ես գիտեմ, տեսել եմ ձեր զրքերը, բայց մենք իրաւաբաններս...

Նւ այսպէս երկու բարեկամները միմեանց թեւ մտած՝ վերից ներքեւ էին իջնում ձեռքերով օդը սղոցելով, միմեանց հրաբորբոք ակնարկներ ձգելով, աստիճանների անկիւններին կանգ առնելով և որը գլխաւորն է, միմեանց խօսքը անդադար միջահատելով:

Նոցա առջևիցը ցած էին իջնում Վիտնը մի Համիտիէ դպրոցի ուսանողի թեւ մտած, իսկ ետևից գալիս էին Արշակը Արաաշէսի հետ և այդպէս զոյգ զոյգ անդադար վիճելով և զուգոռալով մտան սրահը, այնտեղ ուշադրութիւն իսկ չը դարձրին բողբոջական սրճադործի խօսքերին «փոքր ինչ կամաց խօսելու», անցան սեղաններին մօտից, իրանց քղանցքներով գետին թափեցին լրաղիրները և զոյգ զոյգ կանգ առին փողոցի մայթի վրայ:

Այտեղ Վիտնը բաժանւեց իւր խօսակցից և անցնելով փողոցի

¹⁾ Ո՛չ, ո՛չ, հաւատացնում եմ ձեզ: ²⁾ Կարծում եմ: ³⁾ Փչացած դար: ⁴⁾ Միակ միջոցն է: ⁵⁾ Դուք իրաւաբան չէք: ⁶⁾ Հիանալի պօլիտիկա: ⁷⁾ Կարծեմ ես էլ: ⁸⁾ Կարդալ պօլիտիկական զրքեր: ⁹⁾ Մի բան հասկանալ: ¹⁰⁾ Անկասկած:

դիմացի կողմը, սպասեց թէ իրան ով կընկերանար զէպի տուն։ Արշակը Արտաշէսի հետ թովկելուց յետոյ միւսների ձեռքը, զնացին զէպի Կում-Վափուի կայարանը և Վեոնը տեսնելով որ մայթի վրայ մնացած Ռաֆայէլ և Վահրամը դեռ ևս վիճում էին, սկսեց քայլել զէպի Կէտիկ փաշա։

— Սպասիր՝, attendez ¹⁾, monsieur Léon, զոչեց նրա ետեւից Վահրամը։

Նոքա սկսեցին բարձրանալ Կէտիկփաշայի զառիվերը. Վահրամը դրոպանից հանեց մի արծաթեաց տուփ, նրա միջից էլ մի պապիրոս, վառեց, մի քանի կում ծխեց և երբ զեղարանի առջևիցը անցնում էին, հարցրեց Վեոնին։

— Կուք տուն էք գնում, այնպէս չէ՞։

— Այո՛, շուտով կը միժնանայ, փոքր ինչ գծելու բան ունիմ։

— Oui, yes. պէտք է դործը լրացնել, il faut mon ami ²⁾, զնանք միասին, ևս ձեր տան առջևից կանցնեմ։

— Իսկ դուք, ո՞ւր էք գնալու։

— Փէրա. քիչ մը, սանկ, դործեր ունիմ։

Եւ լսեցին այլ ևս ու լուրթեամբ անցան մինչև այն փողոցը, որը ուղղակի տանում էր զէպի Վեոնեց տունը։ Դա երկյարկ 3 մետր բարձրութեամբ մի փոքրիկ տուն էր, փողոցի լուսամուտները բաց էին և փողոցի ծայրից իսկ լսում էր դաշնամուրի ձայն։

— Օ՛, զոչեց Վահրամը— ածում են, այս չէ՞ ձեր փողոցը, ո՞վ է ածողը։

— Քոյրս է։

— Օ՛, c'est votre soeur? ³⁾ ուրախ եմ, հիանալի է ածում, elle joue comme il faut, attendez... ó, très charmant, merveille ⁴⁾ և բռնելով Վեոնի— ժպտող Վեոնի թևից, կանգ առաւ փողոցի մէջ տեղ, ահանջը այն կողմը դարձրեց։

— Օ՛, oui, c'est celui-la. զոչեց նա, c'est la sérénade de Victor-Hugo ⁵⁾. այո՛, «Quand tu chante tes berceuses» ⁶⁾, հիա-

¹⁾ Սպասելիք։ ²⁾ Պէտք է, բարեկամ։ ³⁾ Ձեր քոյրն է։ ⁴⁾ Հիանալի, գեղեցիկ։ ⁵⁾ օ, այո, հէնց նա է, Վիկտոր-Հիւգօի սերենադն է։ ⁶⁾ Երգի զատը է, ձերը երգում ևս քո օրօրացի երգը։

նալի է ածում, «dans mes bras» ¹⁾, լսեցէ՛ք. oui mon ami. c'est merveille ²⁾. գիտէ՞ք, մսիւ Լեոն, յարեց թողնելով Լեոնի թիւը—գիտէ՞ք, որ ձեր քոյրը ածում է ինչպէս մի արտիստ:

Մտեցան դրան, Լեոնը կամեցաւ զանգը քաշել:

—Attendez, բռնեց նրա թիւը Վահրամը—օ՛, լսեցէ՛ք խնդրեմ. «chantez, chantez, mon ange», բրաւօ, բրաւիսիմօ զոռաց նա, հիանալի է... օ՛հ, կը լսէ՞ք. «dormez, dormez mon ange» ³⁾, մսիւ Լեոն, ձեր քոյրը տաղանդ ունի, յարեց լուրջ դէմքով և աչքերը մեծ մեծ բանալով—այո՛, mon ami, ձեր քոյրը տաղանդ ունի... օ՛հ, որ գիտենաք... այո՛, որչա՛փ կը սիրեմ այդ սիրենաղը. «chantez, chantez mon ange». անչա՛փ կը սիրեմ... մսիւ Լեոն, խնդրեմ ներս գնացէ՛ք և խնդրէ՛ք որ շարունակէ... շա՛տ կը սիրեմ այդ կոորը «dormez, dormez mon ange»:

—Համեցէ՛ք ներս գնանք, կէս բերնով ասաց Լեոնը:

Լեոնը զանգը քաշեց, դուռը խփոյն բացւեց. նոքա ներս մտան:

—Միլլերին ճանաչո՞ւմ էք, շարունակեց Վահրամը. նոտայի մէջ «Ասվան տ'էր» (նա ֆրանսերէն *savant* ⁴⁾ բառի տ դիրը միացնում էր հայերէն «էր» բառի հետ) *comme il faut* ⁵⁾. վեց ամիս դաս առի ես, սովորեցայ ամեն ինչ, սխաժ դամ երէն մինչև թրիմ օլօներ»:

—Գիտեմ, գիտեմ, միջահատեց Լեոնը. բոլորն էլ զիտեն, որ մսիւ Վահրամը առաջինն է Վիօլօնիստների մէջ, նորա նւագելը զմալեցնում է բոլորին և նրա արշէն ցատկոտում է լարերի վրայ և թութեցնում *en merveille*:

—N'est-ce pas? ⁶⁾? աւելացրեց Վահրամը, բայց խօսքը դրանով վերջացրեց, որովհետև երկրորդ յարկի սենեակի դրան մօտ կանգնած տեսաւ Վիրժինին, որը զարմացած նրանց էր նայում: Մսիւ Վահրամը խփոյն գլխարկը ցած առաւ, վազեց դէպի Վիրժինը, բռնեց նորա ձեռքը և մի փաղաքշուտ ժպիտ դէմքին, ասաց ֆրանսերէն:

¹⁾ Երպի կոոր է: ²⁾ Հիանալի է: ³⁾ Երպի կոոր է: ⁴⁾ Գիտուն ⁵⁾ Ինչպէս պէտք է: ⁶⁾ Ահնայէս չէ:

— Ներեցէ՛ք, օրիորդ, որ առանց ձեր առանձին հրամանի, համարձակեցի գալ տեսնելու ձեզ և լսելու ձեր զմայլեցուցիչ նւագելը, դուք նւագում էք արտիստի նման, ձեր մատները կայծակի արագութեամբ են սահում լեզւակների վրայ, օ՛հ, ի՛նչ հիանալի ածում էք Վիրժինը շիւղօի սերենատը, որը ես անհուն կերպով սիրում եմ. Վիրժինը նախ ժպտեց, յետոյ հազիւ հազ իւր ձեռքը ազատեց Վահրամի սեղմող ձեռքից և ասաց ներս մտնելով։

— Համեցէ՛ք, իրաւունք ունիք, այդ սիրենատը զմայլեցուցիչ բան է։

— Վաւա՛ւ, ահաւասիկ, դարձաւ Վահրամը Լեոնին— ձեր մագնադէլ քոյրը համամիտ է ինձի և ես, յարեց նա Վիրժինին դառնալով— այնքան զմայլեցի, որ մտայ ձեր նւագելը աւելի մօտից լսելու։

— Շատ ուրախ եմ, նստեցէ՛ք. ես լսել եմ որ դուք էլ Վիօլօնի վրայ էք ածում։

— Ե՛հ, սանկ, քիչ մը, մեւա օսի, կը նւագրեմ այդ սերենատը, mais, mademoiselle, vous, vous jouez comme une grande artiste ¹⁾։

— Vous me flattez ²⁾, ժպտեց Վիրժինը և նստաւ դաշնամուրի առջև։

Նւագելու ժամանակ Վահրամը կատարելապէս դերասանութիւն էր անում, մատները մագերի մէջ կոխում, դէմքը ծւմնկում, յետոյ մի սիրազին ակնարկ սկսեալով հայելիի մէջ, ոտքի էր ելնում և նւագելու հետ մի կտոր երգում, զլուխը երերցնում և օ՛հ, merveille, charmante, բացականում և այդ բոլորը նա այնքան ծիծաղելի ծամածուլութիւններով համեմում էր, որ Լեոնը ստիպեց զլուխը լուսամուտից դուրս հանել, որպէս զի իւր լուս. քրքիջը չ'ը տեսնի։

Երբ վերջացաւ, Վահրամը մօտ վազեց Վիրժինին, ֆրանսերէնով խառն, փքուն բառերով լիքը, մի հիմնովիամէնտով շնորհակալ եղաւ նրան և կանգ առնելով դաշնամուրի կողքին՝ սկսել էր թերթել նոտաները։ Լեոնը զիտում էր նրան և քիչ էր մնում մեռնէր լուս. ծիծաղից, որովհետեւ հոստը նոտայի իւրաքանչիւր տետրակը առ-

¹⁾ Բայց օրիորդ, դուք, դուք ածում էք մի արտիստի նման։ ²⁾ Դուք ինձ չտղորրթում էք։

նում էր ձեռքը, երեսը բարձրաձայն կարգում, յետոյ թերթերով՝ միջից կտորներ էր երգում, երգածները կիսատ թողնելով, Վիրժինին հարցնում էր, թէ գի՞տէ այդ կտորները:

— O', voilà, գոչում էր նա աչքերը մեծ մեծ բանալով. c'est la Traviata. Հիանալի է վալսը, մո լա, լա մո լա, լա մո լա, լա մո լա, սոլլա մո, մո սիլա... այո՛, հիանալի է. իսկ դուք, մադմազէլ, ինդրեմ, մադմազէլ, սա կտորը մէջ մը նւագէք:

Եւ զրաւ դաշնամուրի կայանի վրայ, Վիրժինը սկսեց նւագել, մինչդեռ Վահրամը ձեռքն էր առել մի ուրիշ տետր եւ թերթում էր եւ երբ օրիորդը վերջացրեց, նա ժպտեց եւ գոչեց:

— Ի՞նչ արտիստ էք, մադմազէլ, ձեզսէս նւագողի սակաւ եմ հանդիպեր. voilà, une autre pièce... օ, օ, օ, c'est le Faust. դուք գիտէ՞ք մադմազէլ սա կտորը. սի ֆա սի մո բէ սի մո մո ֆա. անշուշտ գիտէք, օ՛, որչա՛փ նոտաներ ունիք եւ որչափ ընտիրները. Lucrecia, Borgia de Donizetti. La sennambula de Bellini .. օ, օ, օ, voilà le Romeo et Juliette, Othello, Rigoletto, ասոնք բոլորն ալ լսեր եմ ու տեսեր, հիանալի են:

Եւսներ, որ այլ եւս ձանձրանալ սկսեց այդ լեզուից, յանկարծ միջահատեց նրան եւ գոչեց.

— Քիչ մը երգէ, մսիւ Վահրամ, սա սերենադը քիչ մը երգէ:

* * *

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ա՛խ, ես երանի
Կաճակ լինէի,
Սաստիկ ճալժիւնով
Ամպերի միջից
Թռչէի վերեւ՝
Զարկէի սլաքին
Եւ պատասէի
Կամարն երկնքի,
Յոյց տալի երկրին
Գազանիքը վերին,
Որ տեսնէր այնտեղ
Ինչ բան կալ ահեղ,
Կամ ով է նստած
Եւ ուր է Աստուած:

ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

ԱՆԵՔՍԱՆԻՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑԻ

II ¹⁾

Վրաց և մեր ուրիշ զրացի ազգերի մէջ սրբազան ծառերի և անտառների մեծարանքը նորնպէս չատ էր տարածւած: Արխաղները, չէրքէզները, մինգրէլները չալսնի տեղերում ունէին իրանց սրբազան վալերն, ուր զոհարերութիւն էին անում, պահպանելով ալի վալերի մեծ պատում: 1889 թ. Գիննիկ ճանապարհորդը զարմացմամբ տեսել է Վերին Ութթիալի Ստուր Գիգորի առւելի մօտ մի փոքր տարածութեան վերայ մի ալիպիտի սրբազան անտառ, մինչդեռ շրջակայքը ներկայացնում էր սոսի մերկութիւն: Ալի անտառի ծառերը՝ Գիգորեցւոյ օրէնքով, ոչ ոք իրաւունք ունէր կտրել. ծառի չորացած ճիւղերն անգամ հասարակ մահկանացուն իրաւունք չունէր վերցնել. որովհետեւ այն պատկանում էր հոգևորական անձանց՝ քահանային կամ եկեղեցւոյ միաբաններին» ¹⁾:

Աւանդութիւնն ասում է որ Ս. Նունէն երբ գալիս է Մցխէթ և նորա աղօթքներով Աստուած կործանում է Արամաղալ արձանը, այն ժամանակ նա դնում է ալի քաղաքի արևելեան կողմով գէսլի մի լեռնային վալը, ուր հին ժամանակում եղել է մի բերդ և քաղաք: Ալստեղ գտել է մի գիզկեցիկ բարձր և բազմոտ ծառ, որ կոչւում էր բրինջլի—փուշի ծառ: Այս ծառի տակ երբեմն հանգչում է եղել Բարթոմ թագաւորը և ալստեղ Ս. Նունէն աղօթում է վեց օր շարունակ ²⁾:

Թագաւորական ալիում Ս. Նունէն երազում տեսած լուսաճաճանչ երիտասարդի որոշմամբ վերցնում է մալերի ստերում բուսնող այն ծառի

¹⁾ Տե՛ս «Մուրճ» № 2:

²⁾ Յիշատակարան Կայսերական Ռուսաց աշխարհագրական Ընկերութեան Կովկասու բաժնի, դիւք XIV, գրքոյի առաջին:

³⁾ Բրոսսէ, «Պատմութիւն վրաց»:

տակից հող և տալիս է իւր ամուլ շահաւերներին ուտելու: Այն ժամանակ Նոյա զաւակ է չնորհւել:

Քրիստոնէութեան նոր մտած ժամանակն, երբ մարդիկ զեւ եւ բուրրովին չէին զերծ կրապաշտութեան արդեցութիւնից և դարձեալ հակումն ունէին դէպի նախնի խորհրդաւոր աւանդութիւնները, նոքա ամենապարզ փաստերն անգամ սովոր էին բացատրելու հեթանոսական հոգւով: Այսպէս երբ Մցիսէթի տաճարը շինուց և նորա օծման համար հրաւիրուց Յովհաննէս եպիսկոպոսը, աւանդութիւնն ասում է, որ սրբազանն ուշադրութիւն է դարձրել մի գեղեցիկ հոտաւէտ ծառի վերայ, որ կանգնած է եղել մի բարձր և անմատչելի ժառի գլխին: Սա հրաշագործ ծառ էր: Եթէ նետով վիրաւորւած մի կենդանի ուտէր նորա տերեւները կամ սերմերը, բժշկւում էր, մինչև անգամ եթէ վիրաւորւած լինէր կենդանու ամենալուրջ դաւոր տեղը: Արտիշտոն հեթանոսներին զարմացնում էր այս հանգամանքը, ուստի նոքա մատնացոյց են արել այս ծառը Յովհաննէս եպիսկոպոսին: Եպիսկոպոսը հրամայել է կտրել ծառը և նորանից խաչ շինել: Երբ այս հրամանը կատարւում է և տաք տառնեակ մարդով բերւում է Մցիսէթ, աչք ծառը, չը նստելով ձմեռային ժամանակին, կանաչում է: Մարտի 25-ին կտրւում են ծառը, բայց նա իւր զաւարութիւնը պահպանում է 37 օր, արինքն մինչև մայիսի 1-ը, երբ նորանից խաչ են շինում: Այս խաչը շատ հրաքներ էր գործում ասում է աւանդութիւնը:

Նոյնպիսի հնագոյն առասպելական աւանդութիւններին պէտք է վերաբերել Լիրանանու մայր ծառի մասին եղած հեռեկալ պատմութիւնը, որ պէտք է մի ձգնաւորի հնարած համարել:

«Երբ Ադամի օրդին Աթը մուծող հօր պատէրով գնում է դրախտից ողորմութեան հողը բերելու համար՝ աչք փառահեղ պարտիզի զւեները բացւում են հրեշտակի ձեռքով որ թող չէ տւել նորան աշտուղ ներս մտնելու. նա տեսնում է Լիրանանու մայր ծառը՝ դէպի երկինք ուղղած ոտտերով: Ծառը կարծես ցոյց էր տալիս այն մեծ տարաբաղտութիւնը, որին կենթարկուց Ադամը մեղանչելուց. նա չուէր կենդանութիւն՝ տերեւթափ էր, բայց կենդանութեան լոյս էր տալիս, որովհետեւ ծառի դադարին նստած էր փալլուն զգեստով մի մանուկ՝ լուսոյ նշան բոլոր ասպագալ սերնդոց համար»:

Այս առասպելախառն զրոյցը ցոյց է տալիս թէ հին ժամանակներում ինչ մեծ չարդ և պատիւ էր վաշելում Լիրանանու մայրին, որից կուռուցւել է Սիօնի տաճարը:

Նոյն ժամանակին է վերաբերւում խորհրդաւոր պատմութիւնը խնձորի մասին: Այդ պտղի մասին առասպելներ կալին ամենայն ժամանակներում և ամեն ազգերի մէջ: Յունաստանի առասպելական Ափրոդիտէն և Ս. Գրոց Էւան պատկերանում են մեղ աչք պտուղը ձեռքներին: Մի առասպելի մէջ խնձորի պաշտպան է հանդիսանում օձը, միւսի մէջ՝ վիշապը: Բոլոր արա-

բազմաթիւ անգամ ինքնաշարժ ելլելով ինքնաշարժ: Ազգային ազգայնական ձեռք բերելու համար մտնում է Ազգային պարտեզը: Ազգային մէջ (նախնի հիւսիսային գերմանական ժողովրդաց զինգաբանութեան ժողովածուն) առնում է որ իրենց պահապան է խնամել, որ զիք երկուստեք համար ունենան: Ազգային՝ մահաւոր հրեշտակը, իւր ներառութիւնը կտաւարում է խնամը քիչ տակին պահելով: Հիւսիսային ազգային առաջնորդութեան մէջ՝ խնամը ունենալ քիչ երկարում է և իւր զեռով իւր նախնի չափն է ստանում միայն առնել օգնութեամբ: Գարեջրի հաշիւով Սրբաճանկանցի ժողոված առաջնորդի մէջ կա մի առաջ՝ որ պատմում է իմ, թագաւորի ազգային իւր նախնիներով էլ են գտնում մի մեծ խնամը ունենալ և ապա նորից իրենց նախնի կերպարանքն են ստանում մի ալ, բայց առաջ իմքը չափով, խնամը ճշտակելով¹⁾: Եւ այն հաշիւով որ Տիրիս գետի աղանքները աղակերպ միջոցին լուծ է հեռանալ առաջնորդութեան խնամը մտնել: Այսին տարի, Համարածման տոնին, առաւօտ, անմահութեան խնամը մի հրեշտակներէն կը դուրս գալանք ջրի մէջ, որ ամենէն կանաչ համարն միայն կը առնէ, բայց երբ հետեւ կը կարկտէ, առնելու, խնամըն ալ ևս չեղելով:

Սակայն ամենից նշանաւորն է անուանազնիւ (պատմագիտական) որ կրօնաւորների երեւակայութեամբ պարտեզակում է իւր մէջ Քրիստոսի չարչարանաց ժամանակ զորն զբաւած լուր զորն իրենցիկ նման մասեր՝ խորագոն, մարտ, բեռներ, փէրալ պատի, գեղարդ, միջին անգամ առաւ քեաներ բացի մտնել Յուդայից և ուրաջող Պետրոսից: Բառատանի հարաւային նախնիներից մէկում ալ ծաղիկ ծագման մասին հեռանալ առաջնորդութեան կա:

«Աւալ չարաթմ որ իւզարեր կանաչը գնում են կղել զառնապէս ողբալով: Սոցա պատահում է մի հեթանոս կին և հարցնում՝

—Ո՞ւմ համար էք ողբում:

—Մեր փրկիչ Քրիստոսի համար, որ չարչարուց մարդկային ազգի համար, պատառնանել են իւզարեր կանաչը և ոկոկ են պատմել հեթանոս կնոջ թէ ինչպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս չարչարուց մարդկային ազգի համար և թէ ինչպէս նա իւր արիւնքով քաւեց նախնի մեղքերը: Հեթանոս կինը չուզած բացականչում է՝ մեծ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս և քարի վերայ նստած ցաւելով զառնապէս ողբում է իւր մեղքերը: Եւրա թափած արտասուքի կաթիլները չիմ չիմ գլորում են կղել հողի վերայ և ծիւ արձակում գետնի մէջ: Հեթանոս կինն աչքաւ կոծում և ողբում է, միջին երկնից ձաւն է գալիս՝ թող ներքի քեզ քո մեղքերն և քո արտասուքից մի ծաղիկ բուսնի, որ ծանուցանելու է աշխարհին Առաւածորդի Յիսուս Քրիստոսի չարչարանքը: Ալ միջոցին բուրում է:

1) «Թիֆլիսու Դռնիկ-Գեղարդ»: Համալ-Հոտով երես 225, Կ. Պոլիս, 1884 թ

անուշահոտութիւն և հեթանոս կիներ տեսնում է որ իւր շուրջը փթթիւն ևն գեղեցիկ ծաղիկներ»:

Այդ ծաղիկներն էին պատիֆլորաներ ևն՝ չարչարանաց ծաղիկներ, որ ըստ առանդութեան կրում ևն իւրեանց մէջ Քրիստոսի չարչարանաց վերն վիշաժ բոլոր պորժիքները:

Մի սղ բոյս, որ նման է առւտարին և բուսնում է միայն Արեւելքում, նոյնպէս մեծ պտուի էր վաղելում, սրովհետեւ իւր տերեւները վերաջ եղած բժեկով և փշալից պտուղներով վիշեցնում էր փրկչի մարմնով խոցաւոր տեղերը:

Պենտապէթից դէպի արեւմուտք, Ձիթենեաց լեռան շրջապատող հովտում բուսնում ևն շատ տեսակ շուշաններ և սորա նման շաքեր, ուստի դժար է առել թէ իսկապէս որ բոյսի մասին է խօսում Փրկիչը ժողովուրդն ուսուցանելու ժամանակ: Հռչակաւոր բուսարան Սմիթը կարծում է թէ աղբ բոյն ամառիկիւն է, որի ոսկեգոյն ծաղիկները «Սողոմոնի հանդերձից» փաղուեն ևն: միւս բուսարանները հաւանակութիւն ևն տալիս, որ աղբ պէտք է լինի Բիւզանդիայ շուշանը կամ կարմիր մարտադոնն, որ Պալլէկապի շատ տեղերում բուսնում է զարնան սկզբներում, աշտինքն աչն միջոցին, իւր Քրիստոս լերան վերաջ խօսեց իւր առակը: Մարտադոնի բրգաձև ծաղիկները շատ գեղեցիկ ևն և հետո տեղից էլ երևում ևն:

Միջնադարեան կրօնաւորները մեծ խնամքով սրահայանում էին հովտաց շուշանը, կարծելով թէ սա աչն ծաղիկն է, որի մասին խօսում էր առակով Քրիստոս լերան վերաջ: Իսկ Անգլիայում աղբ ծաղիկն ունէր անարատութեան նշանակութիւն և համարւում էր որբաղան: Սուրբ Լէօնարդի վարուց պատմութեան մէջ, ուր նկարագրւում է վիշապի հետ երեք օր նորա վարած արիւնհանդ պատերազմը, աղբ սրբող արեան թափւած տեղում բուսել ևն հովտաց շուշանների, որ աշտին էլ կան Ա. Լէօնարդի անտառում: Հովտաց շուշանների հարաւային Եւրոպայից բերած ևն Անգլիա շատ հին ժամանակից և երկրաստան և երեք տասնամ դարերում աղբ ծաղիկը գործ էր դրում եկեղեցիների զարդարելու համար: Սակայն երբ սուրբ Գովինի-կոտը վերջերում հաստատեց եկեղեցիները վարդերով զարդարելու սովորութիւնը, աչն ժամանակ հովտաց շուշաններով զարդարում էին միմիայն Սուրբ Լուսի մատուռները զարնան ամիսներում:

Վարդի ծաղման մասին կալ կրօնաւորների հնարած հետեւալ առասուկէր, պատմում ևն իւր թէ լեթզէհմցի մի քրիստոնեայ կին՝ դատադարաւած լինելով խարդիկի վերաջ ալրեւու, աղաչել է Աստուծուն պահպանել իրան: Այդ իսկ միջոցին ալրեւու փաշտերը փոխարկւում ևն կարմիր վարդերի, իսկ չաղբող փաշտերը՝ սպիտակ վարդերի: Այսպէս ծաղումն է առել վարդենին կարմիր և սպիտակ վարդերով ի վիշառակ և ի խրատ մարդոց, թէ կարմիր վարդերը մարտիրոսաց ծաղիկներ ևն, իսկ սպիտակները՝ Ա. Լուսի նշանակ:

Կալ մի առանդութիւն որ իւր Մահամէղն է ստեղծել վարդերը: Սակայն

Յոյների աւանդութեամբ կարմիր վարդն իւր գոյնն ու անուշահամութիւնն առել է Աստղիկ գիյունհոյ: Մի օր գիյունհին՝ սպիտակ ծաղիկներ քաղելիս, վիրաւորել է իւր մօտն հ մի կաթիլ արիւնով ալ ծաղիկը կարմիր գոյն է ներկուամ, իսկ գիյունհո օրդի Աստղիկոյնը՝ հաւանելով վարդը, դրօշմում է նորա վերայ մի համբուր, որից ալ ծաղիկը ստացել է իւր ալմմեան անուշ համը:

Յոյները շիրմներ դարգարելու համար գործ էին ածում թաւնջակ, կովացնծուկ, նեխուր և մրտենի: Ատրդը նոյնպէս գործ էր դնում միայն թաղման հանդէսներին: Հենացիք անկում են վարդի թփեր գերեզմանների վերայ: Վերին Գերմանիայում դադաղի վերայ չաճաթաղի դնում են վարդի մկրակներ, մինչդեռ Ֆրանսիացիք հանգստարաններում չիմշաթին են գործ ածում: Զւելցերիայում և Իտալիայում ալ նպատակի համար ծառայում է կուսածաղիկն որ Իտալիայի չառ տեղերում մինչև անգամ կոչւում է անջեցելոյ ծաղիկ:

Ծաղկազարդին գործ դրած ուռենու ոտերը՝ Փրկչի Արուսաղէմ մօտեկիւ ժողովրդի նորան դիմաւորելու լիշատակն են: Աթիւղիկ եկեղեցիներում ուռենու փոխարէն գործ են ածում չիմշաթի ոտեր: Առեկնի գործ ածելու սովորութեան մասին գանադան բացատրութիւն են տալիս, մի քանիսն ասում են որ ուռենին հին ժամանակում գործ էր դրւում իրր վշտի նշանակ ննջեցելոյ վերայ, ինչպէս երևում է ալ Վիրգիլիոսի երկա-
ոիրտ թեան մէջ, ուր զուէրժահարոներն և հովիւները նկարագրւած են ուռենու տակ նստած՝ իւրեանց սիրեցեալների մահն ողբալիս: Միւսները կարծում են որ Ծաղկազարդին ընծիւղացած է լինում միայն ուռենին, ուստի ալ տօնին սովորութիւն է դարձել արմաւենու ոտերի փոխարէն գործ ածել ալ ծառի ոտերը:

Մշտադաւար բոյսերից՝ սլոյին, բաղեղն ու մղամուճճը գործ են ածում Անգլիայում ծննդեան տօնին: Հին ժամանակներում մղամուճճը խորհրդաւոր բոյս էր համարւում: Նախնի գալլիացիք առանձին նշանա-
կութիւն էին տալիս գորան: Նոյնպէս և նախնի գերմանացիք խորհրդաւոր պատմութիւն էին անում նորա մասին: Ալսուէս արեգակի և ամարան բարի աստուած Բաղդուրը չաղթում է մութ և չար Լօքին՝ գիշերի և ձմրան թագաւորին: Լօքին երգում է աղուհետե Բաղդուրին չը վիրաւորել ալն-
պիտի մի զէնքով որ չինամ լինի ամառը կանաչող երկրի վերայ կամ ջրի մէջ բուսած բոսից: Ալսուէս երգւելով չար Լօքին միկնողն ժամանակ մտածում է եղել վրէժիւնդիւր լինելու: Մղամուճճը կանաչում է ձմեռն և չէ բուս-
նում ոչ երկրի վերայ և ոչ ջրի մէջ: Լօքին չինում է նորանից վառն, դաւոր մի նետ և վիրաւորում է արեգակը, ալ օրւայ և ամարան փալլուն աստուածուն ալնքան ծանր, որ Բաղդուրն երկար ժամանակ մահճի մէջ է մնում և միայն աստուածների հօր Ալադանի բժշկարար կարողութեամբ
նա կրկին ստողջութիւն է գտնում:

Սրբազան էր համարում աչն կաղնին, որի վերայ բուսնում էր մղամունձը: Քրմապետները ընտելում էին կաղնեայ սնտառներում: Կաղնու ստերն ու տերևները զործ էին ածում բոլոր կրօնական հանդէսների մամանակ: զոհարեութիւնը կատարում էին ալդ տեսակ կաղնիների տակ: Նոյն իսկ մղամունձն, որ բուսնում էր կաղնու վերայ, մեծ պատիւ էր վայելում և համարում էր երկնային պարգև: Ալդ թափը կտրում էին ծառից մեծ հանդէսով տարաւ առաջին լուսնի վեցերորդ օրը: Ծառի տակ կանգնացնում էին երկու նոր լծի վարժեցրած սպիտակ արջառ: Զոհարեութիւն կատարող դուռլը (քրմապետ) սպիտակ հանդերձ հագած բարձրանում էր ծառի վերայ և կտրում էր մղամունձը սակեալ մանգաղով: Ծառի տակ սիռած սպիտակ կառւի վերայ ընկնում էր ալդ բոլոն, որ վտայ բաժանում էին ներկայ եղողներին: Արջառները զոհում էին, աղօթելով որ մղամունձը լարեւաջող ազդեցութիւն ունենալ: Մղամունձից ըմպելիք էին պատրաստում, որ համարում էր ամենայն տեսակ թոյնի համար դեղթափ և հիւանդութիւնների բուժող: Այս ըմպելիքը զործ էին ածում նոյնպէս պաղարեութեան համար: Մղամունձի տաք համարում էր ամենայն տեսակ հիւանդութիւնների զարման: Եթէ մարմնի ցաւած տեղը մղամունձի տաք քսէին, մարդս ապաքինում էր: Մինչև ասօմ Անդլիայում լւրաքանչիւր տարի սենեակի առաստաղից կախում են մղամունձի ստեր և զործ ածում զանազան խաղերի համար: Նոյնպէս Գերմանիայի մի քանի տեղերում մնացել է հին սովորութիւն՝ լուսնվարի Գին, ալիքն աչն օրն երբ արեղակի տատուծու իշխանութիւնը սկսում է աւելանալ, մարդիկ քսում են իրանց մարմնին մղամունձի կանաչ տաքերը, բալց ալօմ դորա վոխարէն մեծ մասամբ զործ են ածում մախրիի (եղևնու) ոտքը:

Նոյն իսկ կաղնին ըստ աւանդութեան հիւանդութիւնների բուժող է համարում: Օրինակ՝ Ղրիմում, թաթարների Բէլաք-Աէլւան կոչւած զիւղի մի պարտէզի մէջ կալ մի մեծ կաղնի ծառ, որի մասին հետեւեալ աւանդութիւնն են պատմում: «Եղել են իբր երկու եղբարք, որոնցից աւագը լինում է զիտնական և հնախոյզ, իսկ կրտսերը՝ լսի մի բարի տղամարդ: Այս կրտսեր եղբայրը ասլրում է եղել իւր աշխատանքով և երբէք չէ եղել զիմում իւր հարուստ եղբոր օգնութեան: Երբ սա հոտակն առնում է և նշանւում և հարսանեաց օրը որոշւած է լինում, չանկարծ նորա նշանածը հիւանդանում է: Բժիշկները հիւանդից ձեռք են վերցնում, փեսայի միակ չոյն է մնում խնդրել աւագ եղբորից նորա հրաշայործ թալիսմանը: Աւագ եղբայրը մերժում է տալ նորան թալիսմանը, որովհետեւ նորա սրտով չէր ալդ ամուսնութիւնը: Կրտսեր եղբայրը փորձում է չափաւել նորանից աչն մի կտոր փաշաք, որից կախած է եղել իւր նշանածի կեանքն ու իւր ապագան: Փորձը փաշուում է. փեսայուն թալիսմանը ձեռքին արդէն շտապում է զէպի իւր նշանածը, բալց ճանա-

պարհի կիսին եղբոր մարդիկը հասնում են նորան: Սրն անձրևալին է լինում, կրտսեր եղբայրը՝ զալրացած վալր է ձգում և ունակութիւն անում աչն կտոր փաղար: Սորանից բուսնում է մեծ կաղնու ծառ, որի կեղևով ցալծմ բժշկում են թաթարներն և զէպի ալք հրաշագործ կաղնին ունեցած հաւատն աղատում է նոցա շատ ցաւերից: Այն աչնպիսի հիւանդութիւններ, որ թաթարների աւանդութեամբ բժշկում են միայն նոյն ծառի տակ քուն մտնելով:

Ամենախորհրդաւոր բոսերից մէկը պէտք է համարել լոշտակ բոսը: Հրէաներն ալք բոսի արմատը հանելու համար՝ կտրում էին բուն արմատից ձիւղերն և դուրս էին քաշում արմատը գետնից: Ազդ միջոցին արմատը սատիկ ձալն էր արձակում, որով կարող էր սպանել ամեն մէկին: Այս պատճառով արմատը հանելիս խորհուրդ էր արում պինդ իցել ականջներն և արմատից կապել մի շուն, իսկ չրջապատողները վախճելով կանչում էին շանն և նորանից առնում արմատն, ալք միջոցին շունն իսկալն սատկում էր: Սոյն աւանդութիւնը կալ նաև Արարատեան գաւառում:

«Լոշտակ անունով բոս մը կալ Մշոյ աշխարհին մէջ, ասում է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցը ¹⁾, խաճախ կը գտնուի առաւելագոյն Ա. Արարատեան վանքին բոսը, մացառներու մէջ կարճակէ իւր ստերը, որոնք կը բարձրանան և կը պատառնին վապերուն և անոնց թանձրախիտ տերեւներուն, կը խառնեն իրանց լալն տերեւները, որոնք ձուլ նման են խաղողի որթի տեւի, իրանց ցողունը նման է որթի բարձրանիլի և խաղողի ողկալի ալ շատ նման ողկուղներ ձուլ ձուլ կը կախէ, միայն թէ անոր պտուղները մանրիկ են քան զխաղողին: Այս ալն բոսն է, որոյ արմատը մարդանման ըլլալ կը համբաւեն և թէ մինչև անգամ անոնց մէջ արուն և էգն ալ լալտնի են: Թէ՛ ալս արմատը հանելու համար լատուկ աղօթ մը ունին ²⁾ և թէ՛ երբ կը կտրեն իւր միւս կտորներէն, ահաղին ձալնով կը ճչալ՝ աչն ուր կամ հաւը անոր ձալնին գոհ լինի, եթէ ալք հնար չը լինի, արմատ հանող մարդը պիտի մեռնի: Ամենավերջին աստիճան դառնութիւն ունի ալք արմատը և ից. կերպ ցաւոց ու ախտից դարման է ³⁾: Բաւական վախալանօք և թանգ գնով կը գնեն դալն Նոր-

¹⁾ «Բրոց-բրոց» Կ. Պոլիս, 1874 թ., երես 32—33.

²⁾ Այս աղօթքն էլ տպած է նոյն Հեղինակի «Մանանայ» խորագրութեամբ գրքի մէջ, երես 327:

³⁾ Մեք. Ռէստեհի բժշկականութեան մէջ (Վէնէտիկ, 1822 թ. ձ. 2, երես 343) ասած է՝ «Եւ փոշւոյ սորա (արմատի) կաղմեն դեղ աղբոցական ընդդէմ խեղադարութեան, լուսնաստութեան, ջրգողութեան, երկարատեւ ախտից և հիւանդութեանց. դի է թուրացուցիչ, ուժգին լուծողական, միզաբեր և գրգռիչ ընտելութեամբ: Այլև աստակէ զճճիս որովայնի, լուծանէ զլացան մարմնոյ և միանգամայն սթափէ զթմբեղ մարմնա: Նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ շնչաբերութեան, ախտուցից և պակասութեան ամուսկան պարտուց կանանց»:

Նախնիքանէն և Հին-Խրիմէն և ալ Կողմերէն Մշոյ Ա. Կարապետ և իւր
ուխտաւորներու:

Մի Նամակի մէջ, որ գրւած է 1675 թ. լէւոյցիգեցի մի բնիկ քա-
ղաքացուց իւր ևղբօրը Բիգա, կան մի քանի նկատողութիւններ որ ցոյց
են տալիս թէ ալդ ժամանակ որպիսի թերահաւատութեամբ էին վերա-
բերում մարդիկ գէպի ալդ մարդանման արմատը: Նամակի մէջ
գրւած է՝ թէ քո տնային գործերը չաա ողբալի վիճակի մէջ են, քո
որդիքը, խոզերն, ոչխարներն և ձիաները մեռել ստատակել են, գինիդ,
գարեջուրդ չեկուզի մէջ թթեւել են և թէ դու կնոջդ հետ ապրում ես ան-
հաշտ: Այս պատճառով առաջարկում է ևղբօրը հետեւեալ դարմանն ալդ
փորձանքի գէմ, որ լաւաջ է եկել չար մարդկանցից: Այլ փորձանքից ևղբօրն
աղատելու համար, ինքը գնել է վաթսուն և չորս տալէրով և ուղարկել է
նորա համար լօշտակն և սորա գործածելու համար հետեւեալ պատւէրը.
«Լօշտակը սուս տարած ժամանակը երեք օր թոյլ հանգիստ և մի մօտե-
նար նորան: Յետոյ դիւր ալն տաք ջրի մէջ և ալդ ջրով սրսկիր տառարդ,
տան չէմքն և ամենալն ինչ և եթէ լօշտակի հետ կարգին վարուս, բոլորը
լաւ կը լինի: Տարին չորս անգամ լողացրո՛ւ լօշտակը և ամեն անգամ լո-
ղացնելուց փողով փաթաթիր ալն կերպասի մէջ և պահիր ամենաթանկա-
ղին իրերի հետ և ալ ևս քեզ ոչինչ հարկաւոր չի լինի: Մանաւանդ բա-
րեքեր է ալն ջուրն որի մէջ լողացրել ես լօշտակը: Գատաւտան երթա-
լիս լօշտակը դիւր աջ ձեռքիդ անթի տակ և լաջողութիւն կունենաս թէ
արդարութեան և թէ անիրաւութեան մէջ»:

Լօշտակի զօրութեան և հրաշտպործ չափութիւնների մասին շատ
գրոյցներ կան մինչև սոքմ Ֆրանսիացում և Գերմանիացում:

Ֆրանսիական մի երկաթիւթեան մէջ, որ գրւած է 1718 թ., պատ-
մում է թէ մի գիւղացի ունեցել է լօշտակի արմատ մարդու կերպարան-
քով. ալս արմատը նա ձեռք է բերել մի գնչուից: Գիւղացին թաղել է
արմատը լուսնի և աստղիկի բողբոջաւոր միաւորութեան միջոցին, դար-
նան, երկուշաբթի օրն և ալն տեղում թափել է կաթն որի մէջ խեղդել է
երեք գաշտալին մուկ: Մի ամսից փող արմատն աւաջւանից աւելի նմա-
նել է մարդու: Յետոյ լօշտակն աղաւնիւճ բուսի հետ գրել է հնոց և ապա
փաթաթելով լօշտակը պատանքի մէջ, ալսոյէս պահպանելիս է եղել. ալդ-
պիսով գիւղացին միշտ լաջողութիւն է ունենում թէ որսի և թէ իւր միւս
գործերում:

Լօշտակի մասին Լեւոպալի շատ երկիրներում մնացել են շատ աւան-
դութիւններ: Նորա արմատի կտորներն իրրեւ թալիսման պահպանում են
սիրտ գէմ, կամ իբրեւ միջոց տնային ողիների գէմ, կամ իրրեւ պահապան
չար մարդկանց և զեկերի գէմ, նաև իրրեւ դարման հիւանդութիւնների գէմ:

Չինաստանում թէլի մասին հետեւեալ աւանդութիւնը կալ. «Կասմալ/

մօտ 519 տարին՝ հնդկաց թագաւորի որդին դնացել է Հինաստան բուդդականութիւնը քարտղելու համար, Նրիտաւարդ քարողիչը վարելիս է եղել ճգնաւորի կեանք՝ կերակրուելով միայն զաշտալին ծաղիկներով, նա վճռել է երբէք չը քնել: Նրկու տարի նա վարել է ալս տեսակ կեանք, բայց մի անգամ նա լողնան ժամանակ՝ մոռանալով իւր խոստումը խորը քուն է մտել: Քնից վարթնելով նա շատ վշտացել է որ դժբեւ է իւր խոստումն և իրան պատժելու համար խուզել է լոնքերն և անխելով ձղել է դեղին: Քարողիչը զարմացմամբ նկատել է որ լոնքերը մի ժամից վատ դոխարիւն ևն մինչև աղ օրն իրան անծանօթ բոլոր տերեւերի: Ճաշուկելով աղ տերեւերը, դուել է նոցա համեղ ու կաղղուրիչ և առաջարկել է հաւատացեալներին դործ անել աղ նոր բոլոր, որ աղ օրից թէլ անունով վարձել է Հինաստանի մէջ գործածական խմիչք:

Աջուպէս ամենայն ժամանակ ծաղիկները, բոլորը կամ ոոցա մի քանի մասերը միշտ ունեցել ևն որ և է կապ մարդկալին բոնական կեանքի հետ: Ծաղիկների անունների, գոյնի, հոտի և տեսքի վերաջ լօրինւած ևն երգեր և կամ ոոցա վերագրած է գերբնական զօրութիւն:

Հալերիս մէջ էլ, իբրև դարաւոր կեանք վալելամ և հողեր դարդացման ամենայն ատրիճաններն անցած մի աղբի մէջ, նոյնպէս կան աւանդութիւններ կամ վէպեր բուսական թագաւորութեան ներկայացուցիչների վերաբերեալ: Ինչպէս տեսանք հեթանոսական ժամանակներից սկսած բոլորը պակաս դեր ևն խաղացել հալերի հողեր կեանքի մէջ:

Նրբ մեր մէջ տարածւեց քրիտոնէութիւնը, ալն ժամանակից ի հարկէ ծառերի և բոլորի մեծարանաց նշանակութիւնն էլ պէտք է որ փոխէր աւետարանական լոյսի աղղեցութեան տակ: Բարտի և ոորա նժան ծառերն եթէ հեթանոսական ժամանակներում մարդիկ համարում էին չար ողկների կամ դեերի ապաստանարան, քրիտոնէութեան տարածելու միջոցին աղ ծառերը պէտք է որ փոխէին իրանց դերը, դառնալով սրբալան վալերի սրբերին ծառալելու համար:

Մաշդկալին աղբի ալս թուլութիւնն և հեթանոսական սովորութիւնների պահպանելու սատարիկ ձգտումը լաւ բմբոնելով՝ մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը ջանացել է հաստատել և արմատացնել Հայաստանի մէջ աւետարանական ճշմարտ լոյր՝ կործանւած մեհեանների տեղ Աստուծու տաճարներ կանդնեցնելով և հեթանոսական տօնախմբութիւնները որբոց տօների փոխարկելով: Աջուպէս նաւասարդի տօնը նւիրեց նա Ս. Կարապետին և Աթանազիէնի եպիսկոպոս վկալին, որոց նշխարքը բերելով Կեսարիալից և Սերատիալից, Տարնու (Մուշ) երկրում չինեց Ս. Կարապետի տաճարը: Նոյնպէս Անահտալ մեհեանի տեղը կանդնեցրեց Ս. Աստուծոժածնալ եկեղեցի և ալն:

Այս իսկ պատճառով Հայաստանի ալն անդերում, ուր հնադոն ժամանակում կար հեթանոսական քր և է սրբալալը, ալնաւել փոլովուրդը

չինեց իւր աղօթարանը: «Տեսնաս ձորի մը մէջ, ասում է Գարեգին եղիս-
կոպոս Սրուանձտանց, բոլ մի ծառ և աղբիւր մը. աւերակ մը հոն: Գե-
րեզման մը ալս բլուրի վերայ. խաչքար մը ալն ինչ տեղ: Ամեն տեղերն
ալ ուխտի կերթալ Մշոյ ժողովուրդ, առանց գիտնալու թէ ինչ կալ ալն-
տեղ: Բալց մտածողին խորհիլ կուտան, թէ ալն տեղերը՝ կամ մեծ զիշ-
տակ մ'է կատարւած, կամ մեծ նահատակ մ'է ինկած, կամ հրաշք մ'է
տեսնւած»¹⁾: Ահա ալ տեղերում կան սրբազան ծառեր կամ թփեր, մեծ
մատամբ չէն և կիսաւէր եկեղեցիների մօտ, որ հեթանոսական ժամանա-
կում դռնէ ունէին իրանց որոշ նշանակութիւնը, իսկ տղամ ժողովուրդը՝
քրիստոնէութեան ազդեցութեան տակ, համարում է սրբի բնակարան կամ
օթիւան և մեծարում է ուխտագնացութեամբ: Ալդ ծառերի և թփերի վե-
րայ կախւած կան չորի կտորներ, բժժանքների և ալ իրեր, որ նւիրել են
ուխտաւորներն իրանց ցաւից բժշկելու մօքով: Տէլլօր զիտնականի վիշ-
աթիւնով՝ շատ ազդեր, մինչև անգամ եւրոպացիք, աւանդութիւն ունին որ
կարելի է աղատուել հիւանդութիւնից տալով ալն ուրիշ անձի կամ առար-
կայի: Սորա համար հարկաւոր է տալ ուրիշին կամ կախել ծառից հիւան-
դին պատկանող կամ նորա վերայ եղած որ և է իր: Ալս է իսկ պատճառը,
որ սրբազան վազրերում գտնուող ծառերն ու թփերը զարդարւած են հի-
ւանդի հագուստից վերցրած կտորներով և ալ իրերով:

Հալստանում ալ սրբազան ծառերից և թփերից շատ կան, որոն-
ցից աչքի են բնկնում զլիտաւորապէս տիկին, կաղնին, տանձին, նար-
բանդը, մաւրին և այլն: Սորա բուննում են սրբոց ուխտատեղիներում
կամ մի աղնպիսի վայրերում, ուր աղծմ հնութեան հետք տնդամ չը կալ:
Անտարակոյս կար ժամանակ որ ալ տեղերում գտնուում էր հեթանոսական
մի սրբավայր, որ վտաղալ ժամանակում եկեղեցի են կանգնեցրել. իսկ
եթէ չեն չինել աղօթատեղիք՝ ժողովուրդն աւանդութեամբ շարունակել է
բաժանել ալ տեղերն և արտապատել իւր մեծարանքը: Ալդ ուխտատեղե-
րում սրբազան ծառերի ստերի տակ ուխտաւորները զովանում են, մա-
նաւանդ որ ուխտագնացութիւնն էլ կատարւում է ամառ ժամանակ: Աւտի
և ժողովուրդի մէջ աւանդութիւն է մնացել որ ալն սուրբն էլ չոք ժամա-
նակ նոյն ծառի տակն է գովացել:

Ալդ սրբավայրերում գտնւած ծառերն սահմանափակ են
վանքում կամ եկեղեցում չը ծառայող օտարների համար: Եւ եթէ մին
վտահանալ նորանից մի ոսա կտրել՝ սուրբը նորան կը պատմէ, կտրած
ստը նորա ձեռքին կը կոչի: Եւ ալդ պատահաւից աղատուել նա կարող
է միայն վերագարձենելով տարածը հանդերձ զոհաբերութեամբ: Գետնի վե-
րայ ընկած ծառի չորացած ճիւղերն տնդամ ոչ որ չէ վտահանում տա-
նել և միայն թող են տալիս զործածելու զոհի համար:

1) Գրոց-ըրոց. երես 12:

Ի հարկէ պէտք է կարծել որ ալ ծառերը պաշտելի են ոչ իբրեւ ծառեր, ալ իբրեւ օթեան ժողովրդի որ և է աստուածութեան, կամ իբրեւ սեղահանութիւն աստուածներէ: Սորա ապացոյցն այն է, որ ուր ժողովուրդը քրիստոնէութեան ժամանակ չը կարողացաւ իւր հեթանոսական կուսքի փոխարէն Աստուծու տաճար կանգնեցնել, աճտեղ նա ծառի վերայ մեկնել է կամ նորա խուռչի մէջ պահել է մի խաչ կամ սրբոց պատկեր:

Քրիստոնէութեան տարածելու միջոցին շատ տեսակ ծառեր կորցրին իրանց հեթանոսական աւանդութիւնները տեղի տալով այն վէպերին և աւանդութիւններին, որոց իմաստը վերցրած է Աւետարանից: Օրինակի համար՝ Հին Նախնիների ժողովրդի մէջ փշատի ծառի մասին հետեւալ աւանդութիւնը կայ: Մի անգամ Յովհաննէս Մկրտիչ պատահել է փողոցում Ա. Կոյս Մարիամին: Ա. Աստածածինը տեղ չը դնելով իւր կնքահայր Յովհաննէսից թագնելու, մտնում է փշատի ծառի տակ, որ կոչուեց Նելով իւր ճիւղերը ծածկում է նորան Մկրտչի աչքից: Այդ պատճառով, ասում է աւանդութիւնը, փշատի ծառի երբեմն վեր նալող ճիւղերը մինչև այս օրս դէպի վաչք են ուղղւած:

Այս աւանդութիւնն անշուշտ հիմնուած է այն սովորութեան վերայ որ գոյութիւն ունի շատ հազարեակ տեղերի մէջ, պահանջելով սանամալրից կնքահօրը տեսնելիս թալ կենալ:

Ղաղախու և Լօրւալ գաւառներին ժողովրդի բերնում պատում է մի աւանդութիւն գեների ծառի մասին: Այդ ծառը սուրբ է համարւում նորա համար, որ հրէաներից հալածւած ժամանակ Քրիստոս փախչելով մտնում է գեների անտառն և պահում նորա խիտ ճիւղերի տակ, և աղալիսով հրէաներից աղատուելով, Քրիստոս անտառից դուրս է գալիս, օրհնում գեների ծառն ասելով՝ օրհնեալ լինիս գեների և միշտ կանաչ ու անուշ հոտը քեզանից անպակաս լինի: Այս պատճառով, ասում է աւանդութիւնը, գեներն միշտ կանաչ է և նորա փալտից անուշ հոտ է բուրում:

Յխախտտի մասին պատմում են թէ իւր երբ Քրիստոս քարոզելով շրջում էր դաշտերում, ամեն խոտ երկրպագութիւն էր տալիս նորան. իսկ ծխախտտի տերեւները նրան տեսնելիս ամենին չէին շարժւում: Այդ պատճառով Յխախտտ անիծում է ալդ բոլորն ասելով՝ «գաւառեան քո տերեւներն պղբին» և այն օրից մարդիկ ծխելով ալրում են ծխախտտը:

Գետ. մինչև ալժմ մեր մէջ Քրիստոսի պաշտօնակերպութեան տօներ կոչւում է հեթանոսական անունովս՝ վարդաւառ, որ նւիրւած էր Աստղիկ գիշուհուն և հնադոյն սովորութեամբ ալժմ տօնւում է այն ժամանակից նկատած պարագաներով: Այս տօնի ժամանակ, ինչպէս լալտնի է, ծաղիկները մեծ գեր են կատարում և նոցա օգնութեամբ ժողովուրդը գուշակում է իւր բաղդը: Ներկայումս ամենայն ծաղիկ անխորի գործ է դրւում ալդ միջոցին, թէև հին ժամանակում պէտք է կարծել, որ սորա համար նշանակւած էին որոշ ծաղիկները: Մտն: Սակայն մի քանի տեղերի վերա-

բերաթեամբ կարելի է որոշել որ չարտնի անուշահոտ զեղին բարձմանուկը (Ջանդուլումի ծաղիկը) վիճակի ժամանակ առաջին տեղն է բռնում այլ ծաղիկների կարգում: Նոյնպէս Վաղարշու բնակիչների մէջ սովորութիւն կալ այդ տօնին եղան ձակասոր ծաղկափնջով զարդարելու և այդ ծաղկափնջը գլխաւորապէս կաղմուտ է հաշտից: Այսպէս զարդարւած եղներին առաջն առած՝ ժողովուրդը գնում է գէպի սրբի դուռը:

Համբարձման տօնի նախընթաց երեկոյին կէս գիշերից վատը ժողովուրդն ընդունում է որ իւր ծաղիկները խօսում են միմեանց հետ, չարտնելով այդ միջոցին ան թէ իրանք ինչ ցաւերի և հիւանդութիւնների համար կարող են զեղ դատնալ, կամ թէ չէ դուշակում ևն այդ միջոցին մի տեսակ խմանալ նոցա խօսակցութիւնը և դուշակել իրանց բաղդը:

Ծաղիկներով հմալութիւնը կար և՛ հին ժամանակում: Թէպէրաստոր պատմում է որ նոցա օրով բոցները հմալութիւնը կատարում էին խաշխաշի թերթով: Նոքա վերցնում էին այդ թերթն և գնում մի ձեռքի լիւթմատի և ձկտալի վերալ և միւս ձեռքով ցրան խոխում. եթէ այս միջոցին թերթը ճաղթում էր՝ նշանակում էր որ հմալած անձնաւորութիւնը սիրում է նորան, եթէ ոչ՝ չէ սիրում: Այս տեսակ հմալութիւն կալ և մեր մէջ. սորա համար վերցնում են սիրի-սիրի ծաղիկը և մի մի հաա նորա ծաղիկները պակելով, ասում են՝ սիրում է, չէ սիրում, այս պատճառով էլ ծաղիկը ստացել է իւր ալմեան անունը: Ա. Վիւլլատեանցի «Հօրւտ-Մօրւտ» տառնաւորի մէջ այս ծաղիկի մասին ասւած է՝

Բացւիր ծաղիկ, սէր-սիրիկ,
Բացւիր, քաղի քեզ մատիկ,
Վիճակ ձգի իւր բաղդիկ
Մեր գեղերի խեղճ աղջիկ:

Այն տեսակ հմալութիւն կատարում է Գէօթէի Մարգարիտը «Ֆաուստի» մէջ, երբ նա ծաղիկի թերթերը մէկ մէկ պակելով «սիրում չէ, սիրում է» կրկնում:

Բաղդը դուշակելու համար հագերի մէջ կան էլի ուրիշ բոցեր: Մի բաղմածաղիկ բոցի ճառագայթածի ծաղիկները մի մի հաա պակելով հմալոյն ասում է՝ ապրիմ—ջապրիմ, և ծաղիկն էլ ստացել է իւր անունը. կոչւելով «ապրիմ—ջապրիմ»: Նոյնպէս հմալում են երեքնուկ՝ երեք տերեւենեղով բոցով. եթէ հմալոյն այդ բոցի վերալ չորս տերեւ դանէ, իւր բաղդի դուշակութիւնը կատարւած է համարում: Այս բոցի մասին Վատուրբակյանի բնակիչներն և՛ ուրիշ աւանդութիւն էլ ունին, որ վիշում է Գ. Ե. Սրանձատեանցը «Մանանայ» գրքի 112 երեսում: «Երեքնուկ խոտ, որ երեք տերեւ ունի և որ չաճախ ամեն տեղ կը գտնւի, մուրիկ մուրիկ կը փնտռեն անոնց մէջէն բոց մը, որ չորս տերեւ ունենալ խաչածի. և աշուհետե սղատ կը լինին դա՛ն իրանց վրալ՝ պահողներն ամեն չարէ և կախարդանքէ»:

Ծաղիկները նույնպէս ունին իրանց վէպը. նորա առհասարակ ներկայացնում են՝ մէկը քույր, միւսն եղբայր. կամ երկու քույր մէկը մայր, մէկը կենքա-
հայր, միւսը սանամայր. մէկը տէրաէր՝ միւսը տիրուհի, մէկը սիրողը՝ միւսը սիրւած, երկու որը եղբայր. մէկը արնոտ սիրտ՝ միւսը օձի թուր կամ
միտած խառն ջալ. մէկը կլծոց լի կաթն է սպիտակ և անարատ, միւսը թոյն թափող հրեղէն վիշապ և ալլն ¹⁾:

Կուժկոտրուկ ծաղկի մասին ասում են աւանդաբար, թէ ով այդ ծաղկը քաղէ, նորա տան կուժը և միւս ամանները կը կոտրատուին:

Հալաստանի լեռնալիւն կողմերում բուսնող վառւառուկ բոլոր մասին հետեւեալ աւանդութիւնը կալ: Եթէ որ և է հնարով կարելի լինի, չափա-
կելով այս բոլոր կրիակից, ձգել զարանակալ մարդու կուրծքում նորա քնած ժամանակ, խկոյն և եթ ալ բոլոր կը հանէ մարդու սրտից նենգաւոր
չարութիւնները, եթէ միայն նա իւր սրտի մէջ հղացել է ալ չարութիւնները
գործելու: Ասում են նոյնպէս, որ եթէ ալ բոլոր գնեն որ և է զոց եր-
կաթէ կողպէքի վերալ, կողպէքն առանց բանալիքի կը բացուի:

Կլնամոնի (գարշինի) մասին աւանդութիւնն ասում է, որ եթէ մէկն
ալ բոլոր գնէ քնած մարդու շրթունքի վերալ և բան հարցնէ, պատաս-
խան կը ստանալ նորանից:

Խարթութի ծառը շատ տխուր տեսք ունի և ալ պատճառով ժողո-
վուրդը տարաբաղդութեան նշան է համարում ալ ծառը: Աշխատում են
ալլումն ալ ծառը տանից հեռու տնկել:

Խաչագոսակ բոլորից կալ մի փոքրիկ բոլս, որ մեկանում կոչւում է
չանգ և թաթիկ: Այս բոլոր ժողովրդի մէջ պատող աւանդութեամբ խոր-
հրդաւոր է համարում: Հիւսիսային Աֆրիկայի և Պաղեստինէի չոր հո-
վիտներում, նոյնպէս Արաբիայի աւազոտ անապատում ալ բոլոր վայրերի
է: Չանգը փոքրիկ թուփ է հինգ կամ վեց լողաչափ (գիւմ) բարձրութեամբ:
Ծաղկի թափելուց շատ բոլոր տեսիլքով է լինում, ոտները չորանում
են, գէպի ներս են ուրուում և ամբողջ բոլոր մի գնդաձև բան է դառնում:
Ալլ միջոցին բոլոր իւր արմատով զիւրութեամբ պոկուում է գետնից և
անապատի միջով գլորւելով, հասնում է մինչև խոնաւ տեղը: Երբ զիւրում
է ջրին, խկոյն ուղղւում է, ստանալով իւր նախկին ձևը: Բոլոր խոնա-
ւութիւնից ուղղւելու չափութիւնն առիթ է տւել ալն աւանդութեան կալ-
մեկու, թէ նա փթթում է Փրկչի ծննդեան օրն և ալ պատճառով նո-
կուում է Մարիամի վարդ, իսկ Ս. Գրոց մէջ անւանւած է վարդ Նրիքովի ²⁾:

Աւանդութիւնն ասում է, որ Ս. Մարիամ Կոյն երկանց ժամանակ
բռնել է ալ բոլոր և ապաւել է Մանուկ Քրիստոսից: Մեր հասարակ

¹⁾ «Գրոց-Բրոց», Երես 35.

²⁾ «Նւ իրրէ զարմաւենի բարձրացայ յենգաղս և իրրէ զտունի վարդէնուդ յերիքով»: Սիրաբ. Իդ. 18.

տատմադրերը մեծ վտխ են ծախսում աղբ բոլոր Պաղեստինէից բերել տալու համար, որովհետեւ իրեն միջոց դործ են ածում ծանր երկանց ժամանակ: Աղբ ժամանակ նորա ձգում են աղբ բոլոր ջրի մէջ. բոլոր խոնաւութիւնից ուղղում է և նորա լոյս են տալիս ծննդականին չաջողութեամբ աղատուելու, լեռնոյ աղբ ջրից քիչ քիչ խմեցնում են նորան, իրեն երկունքը թեթեւացնելու միջոց, թէպէտ ինքը բոլոր չունի բժշկարար չատկութիւն:

Հալաստանում կաղ աղբերաց արիւն կոչւած մի վտրբ վարդաձե, վառվում, մաղ կարմրադուն ծաղիկ: Կուտանաց երգերի մէջ նմանեցնելով աղբ ծաղիկը սիրելուն, ասում են՝

Ա՛յ աղբերաց արիւն՝
Որ բուսար մեջ քարերում,
Աչուիդ ի նարկիզ նման,
Մէկն ի քուն ու մէկ արթում:

Կաղ Նունպէս Համասպրամ կամ Համասփիւռ անունով մի բոլո: Սորա ծաղիկները պաշտաւ են և պէսպիսացուն: Բուսում է քարոտ լեռանց ձորերում և մի որոշեալ օր երևում է գիշերանց լուսնի լուսով: Աւանդութեամբ սա մեծ զօրութիւն ունի, մինչև անգամ իբր սա մարդուն որամուտութիւն է պարզեում ¹⁾: Սորա մասին կաղ մի ուրիշ աւանդութիւն ևս, որ ստում է թէ սորա ծաղիկն ուսողը կամ իւղի հետ խառնած իւր անդամներին քսողը կը խօսի ամենայն աղպաց լեզու և կը լցւի ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ: Մի ուրիշ տեղում էլ ասւած է՝

Այն Համասփիւռ ծաղիկն որ կաղ, ծաղիկը ծառով հաղարագուն.
Կոյր աչերուն լոյս կու բերէ, եթէ Տէրն տալ Աղամորդուն.
Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարւոյն.
Ամեն թփին գոյն մի ծաղիկ, մարդ կու մալլի անոյզ հոտոյն.
Արքալիկն Օձն է թագաւոր, ինքն սպիտակ սրպէս ղձիւն,
Համասփիւռին կու հետի և զօրութիւն կառնու հոտոյն ²⁾:

Պէտք է լիշեւ և ալն, թէ ծաղիկներն ալնքան մեծ պատիւ են վալեւ լիւիս եղել հալերի մէջ, որ մեր գեղեցիկ սեռը նոցանից մի քանիսի անուններն է կրում: Շուշան, Նարդիդ, Ռէհան, Մանուշակ, Համասփիւռ, Անթաւամ, Վարդիթեր և ալն թէ հին և թէ՛ նոր ժամանակներում մեր կանանց սովորական անուններն են:

¹⁾ Յուշիկ Հայրենեայ Հայոց. Դ. Վ. Ալիշան, Հատոր ա, Երես 52.

²⁾ Համոյ-Հոտով. «Գովասանք ծաղկանց» Երես 278.

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՊԱՅՈՒՄ

Գ. Ա. ՇՈՒՌՄՊՅ-Ի

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

II

Մեր առաջին յօդաձուժ հայերէնագիտութեան յառաջգիմութեան մասին, մենք տեսութիւն արինք 19-րդ դարուց առաջ եղած նշանաւորագոյն հայկաբաններին:

Մեր այդ դործը զժաւարին չէր՝ շնորհիւ այդ զիանականների փոքր թւին. և նա աւելի ծանր չէր լինիլ եթէ մենք կամենայինք զբաղել հայ հայկաբաններով:

Վիկտոր Լանգլուան իւր «Հայաստանի հին և նոր պատմագիրների ժողովածուի» (Collection des historiens anciens et modernes de l'Arménie) յառաջաբանում ասում է՝ «Հայոց գրականութիւնը, որ քրիստոնէական Արեւելքի ամենաբեղմնաւորներից մէկն է, սկսել է լրջօրէն գնահատուել Եւրոպայում միմիայն կէս դարուց դէս: Մինչ այն ժամանակ Վիլլոմի և Լա Կրոզի փորձերը 17-րդ դարում և արբայ գը Վիլլիթրուաի, Շրօդէրի և Վիստոն եղբայրների փորձերը 18-րդ դարում անպատու էին մնացել: Պէտք է հասնել մինչ 18-րդ դարու կէսի մօտերը՝ որ հանդիպենք հռչակաւոր Միխիթար Սեբաստացու ջանքերին, որ նա արաւ ազգային զրականութեան վերածնութեան նպատակով: Շնորհիւ այդ հանձարեղ մարդուն՝ հայոց գրականութիւնը կէս դարուց դէս սկսել է կրկին ձեռք բերել իւր նախկին փայլը և երբ ես այժմ գրում եմ (1868 թւական) Յունաստանի հռչակաւոր աքսորւածի ուժով զարկից առաջացած մեծ շարժումը ամենեւին չի դադարում: Վենետիկ, Վ. Պոլիս, Վիեննա, Պարիզ, Սանկտ-Պետերբուրգ, Մոսկւա, Թիֆլիս, Երուսաղէմ՝ կենդան-

ներն են այդ մտաւոր շարժման, որը ամեն օր աւելի մեծ ծաւալ է ստանում և զուշակում հայկի ազգի զրականութեան համար աւելի լաւ օրեր և նոր ապագայ:

Մենք սկսում ենք այս ուսումնասիրութիւնը Թրանսիայից, բայց ոչ մեր ազգային համակրութիւնների պատճառով, այլ որովհետեւ մեր երկրին (Թրանսիային) է պատկանում հայկաբանութեանը այս դարում առաջին զարկը տւած լինելու արժանիքը: Այդ արժանիքը վիպած է ամեն կողմից՝ պր. պրոֆ. Հ. Հիւբշման, Սարասբուրգի համալսարանից, այդ մեր արժանիքը լիովին բնութենում է իւր գեղուցման մէջ 18 մայիսի 1877 թւականի ուղղած Լոնդոնի Ֆիլոսոֆիական Բնկերութեան, և հէնց նորերում, արեւելեան լեզուների պրոֆեսորը Գոտտինգենի համալսարանում պ. դը Լագարդ ¹⁾, Goettingische gelehrte Anzeigen թերթում առ 16 ապր. 1887 թ. ամենաշոգոքորթ գովեստն էր արել պ. Սքիւստ Կարրիէրի մասին, որը Պարիզի Արեւելեան լեզուների դպրոցի պրոֆեսոր է: Եւ վերջապէս բաւական է ձեռքն առնել Արձանագրութիւնների և զրականութեան Ակադեմիայի (Պարիզում) հրատարակած «Ժողովածու խաչակրաց պատմադիրների՝ հայկական ղեկումենտներ» (Recueil des historiens des croisades: Documents arméniens), համոզելու համար թէ որքան լուրջ են հայկական ուսումնասիրութիւնները Թրանսիայում: Այդ գեղեցիկ աշխատութեան հրատարակիչը, հանգուցեալ Մ. Է. Դիւլլորիէ, ծրագրել է այդ ուսումնասիրութիւնների պատմութիւնը 1867 թւականին Պարիզում կայացած Աշխարհանդէսի առիթով. բայց այդ գեղուցումը Կալէիւս չը պէտք է մատչելի լինի, քանի որ նա մինչև անգամ չը կայ Բրիտանական Թանգարանի զրադարանում: Պր. Կարրիէրը Mélanges Orientaux հրատարակութեան մէջ որ հրատարակում է Արեւելեան լեզուների դպրոցը (Ecole des langues orientales), մեզ տալիս է ոչ պակաս թանկագին մանրամասնութիւններ: Վերջապէս մենք օգուտ քաղեցինք այն գեղուցումներից որ արել են Պարիզի Ասիական Բնկերութեան քարտուղարները՝ Ժիւլ

¹⁾ Մեր առաջին լոգւածում այդ գիտնականին սխալմամբ համարել էինք առաջնածարանութեան պրոֆեսոր, մինչդեռ նա արեւելեան լեզուների պրոֆեսոր է:

Մահի, Էրնեստ Ռշնան, Ջեմս Դարմեստեր և գերմանական արևելա-լագիտական Ընկերութեան քարտուղարները:

I

ՋՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ և ՁՈՂՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

Մենք արդէն առաջին յօդածում խօսեցինք Արեւելեան կենդանի լեզուների մասնագիտական դպրոցի մասին, որ հիմնեց Դաշնակցութիւնը ¹⁾ շնորհիւ Լուի-Մատթէոս Լանգլէ (1763—1824 թ.) գիտնական հայրենասէրի ջանքերին: Մենք նորա պատմութիւնը կը ներկայացնենք որքան նա հայերէնին է վերաբերում: Առաջին զատնութեամբ բացուեց 1796-ին, բայց միայն 1798 թ. գեկտեմբերի 11-ին կարողացան յայտարարել թէ՛ Չիրբիէդ ²⁾ ազգով հայ, կը տայ իւր մայրենի լեզուի դասերը: Ուսուցիչը՝ Յակոբ Շահան Զրպետեան ծնեց Երեստայում 1772 թւականին և Հոովմում հոգեւորական ասպարէզն էր ընտրել: 1792-ին նա եկաւ Պարիզ, ուր նա երգում տւեց հոգեւորականութեան քաղաքացիական սահմանադրութեան և պատկեց մի Ֆրանսուհու հետ: Դժբաղդարար նա բաւականաչափ չը գիտէր ֆրանսերէն որ աշակերտները նորան հասկանային, այնպէս որ դասերը ընդհատուեցին 1801 թւականին:

Զրպետեանը սակայն չը վհատուեց, այլ այն տոկունութեամբ որ յատուկ է հայկական բնաւորութեան, նա սկսեց ուսանել ֆրանսական լեզուն: 1806-ին աշխատակցութեամբ Ֆ. Մարտէնի (որ չը պէտք է խառնել Սէն-Մարտէնի հետ) նա հրատարակեց մի ալլանդակ և անարժէք ֆրանսերէն գիրք, խորագրւած՝ Հետազոտութիւններ Ասիայի հին պատմութեան մասին ³⁾, և 1810 թ. գեկտեմբերի 10-ին նա թոյլտուութիւն ստացաւ առժամանակ նորից բացել իւր կուրսը: Նորա այն ժամանակայ աշակերտներից մէկը, դոքտոր Բելլօ (Bellaut),

¹⁾ Այսպէս էր կոչուում այն չեղափոխական կառավարութիւնը որ իշխեց Ֆրանսիայում սկսած 1792 թ. սեպտ. 21-ից մինչ 1795 թ. հոկտեմբերի 26-ը: Ծանօթ. իմբ.

²⁾ Չիրբիէդ (Curbied) — Զրպետեանի խալաքրած անունն է:

³⁾ Recherches sur l'histoire ancienne de l'Asie.

հեղինակ մի «Փորձի հայոց լեզւի մասին» (Essai sur la langue arménienne ¹⁾, Պարիզ 1812), որ յետոյ իրան նւիրեց եկեղեցական կոչման, մեզ տեղեկացնում է թէ Զրպետեանը սկսեց իւր դաստառութիւնը 1811 թ. փետրւարի 5-ին մօտ քսան աշակերտներով, որոնցից միայն հինգը շարունակեցին, բայց նոցա մէջ ինքը Բեյլօ և Յովհաննէս-Անտոն Սէն-Մարտէն (Jean Antoine Saint-Martin, 1791—1832), «մէկը նորագոյն գիտնականութեան փառքերից և գլուխը ֆրանսիական հայկաբաններին» ²⁾: 1812 թ.-ին հայերէնի ամբիօնը վերջնականապէս հաստատուեց կայսերական դեկրետով տրւած Մոսկւայում ³⁾: Զրպետեանը նոյն այդ թւականին հրատարակեց ֆրանսերէն լեզւով «Տեղեկութիւն հայերէն երկու ձեռագիրների մասին» (№ 95 և 99 կայսերական Գրադարանի), որ բովանդակում են Մատթէոս Երէցի պատմութիւնը և քաղւածք այդ պատմութիւնից վերաբերեալ խաչակրաց առաջին արշաւանքի, հայերէն և ֆրանսերէն, Պարիզ, in 4^o: Այդ հրատարակութիւնը հարազատ չէ, որովհետեւ Զրպետեանը աշխատել էր հեղինակի բնագիրը ուղղել և անգամ նորա ոճը դեղեցկացնել: 1813-ին լոյս տեսաւ նորա «Ընդհանուր պատկեր Հայաստանի» (Tableau général de l'Arménie) և 1816-ին «Փորհուրդների ուսաց կայսերութեան հարուստին նահանգների հայերին» խոտային բամբակի մասին: 1818-ին նա հայերէն մասով աշխատակցեց այս հրատարակութեան՝ «Տեղեկութիւն Պարսկաստանի ներկայ գրութեան մասին, պարսկերէն, հայերէն և ֆրանսերէն, Միր Դաւութ Մատուրի, Լանդլէի և Զրպետի» ⁴⁾: 1820-ին Ֆրանսիայի Հնագիտական Ընկերութեան Յիշատակարանի համար ⁵⁾ (հատոր II, երես 262—311) նա գրեց մի յօդւած հին հայերի կառավարութեան և կրօնի մասին:

¹⁾ Դա մի տարրական գիրք է և պարունակում է մի կարճատև քերականութիւն, ընտիր հատւածներ և մի բառգիրք:

²⁾ Այս խօսքերը վիկտոր Լանդլուսինն են:

³⁾ Նապոլէօն I կայսրը այն ժամանակ մղում էր իւր արշաւանքը Ռուսիայի դէմ և գտանում էր Մոսկւայում: Ծանօթ. խմբ.

⁴⁾ Notice sur l'état actuel de la Perse, en persan, arménien et français, par Myr Davoud Zadour, Langlès et Cirbied.

⁵⁾ Mémoires de la Société des Antiquaires de France.

ազգրով նա կարողացաւ լեհական ձեռագրի պակասորդները և սխալները լրացնել և ուղղել: Նա դորանից մի պատճէն վերցրեց Սուրբ Ղազարի Մխիթարեան միաբանութեան համար, իսկ մի երկրորդն էլ՝ իւր համար: 1816 թւին նա այդ զիւտի մասին ծանօթացրեց Անջելօ Մաի'ի (Angelo Mai) գրածքի միջոցով, խորագրւած՝ „De Philonis Judaei scriptis novem ineditis“.

1796-ին Զոհրաբեանը հրատարակեց սուրբ Ղազարու մոլանէս Խորենացու ճարտասանութեան ձեռնարկը թանկագին ծանօթութիւններով հանդերձ: Այս ձեռնարկի մասին մենք յետոյ կը խօսենք Արդի Բառամշարների աշխատութիւնների առթիւ: Զոհրաբեանը աշխատեց նաեւ Մխիթարեանների բառարանի վերայ: 1749 թւի հրատարակութիւնը ձեռնարկել էր Մխիթար Սեբաստացին, որը նորա խմբագրութիւնը յանձնեց իւր աշակերտներին, ի միջի այլոց Մկրտիչ Անանեանին: Առաջին հատորը լոյս տեսաւ 1749-ին, երկրորդը հրատարակեց միայն 1769-ին: Շուտով գտան այդ հրատարակութեան սխալները և թերութիւնները, և երեք գիտնականների յանձնեց նորան բարեփոխել: Դոքա էին Գաբրիէլ Աւետիքեան, որ հեղինակ էր մի պատուական հայոց քերականութեան, Խաչատուր Սուրմէլեան և Յովհաննէս Զոհրաբեան: Այս աշխատակիցները պէտք է բոլոր յայտնի ձեռագրերը կարդային և նոցանից քաղածքներ դուրս բերէին: Աշխատեցին 1784-ից մինչ 1790, երբ Ֆրանսիական յեղափոխութեան պատերազմները խանգարեցին գործի շարունակութիւնը: Ֆրանսիական արշաւանքի հէնց սկզբից՝ Բոնապարտը ուղեց փակել սուրբ Ղազարը, որպէս վանական մի հիմնարկութիւն: Զոհրաբեանը դնաց Միլան նորան առարկելու որ այդ մի վանք չէ բառիս բուն մոքով, և կոնսուլը համաձայնեց թողնել որ գոյութիւն ունենայ „Academia armena di Venezia“ (Վենետիկի Հայկական Ակադեմիա) անունով:

Զոհրաբը նաեւ խմբագրեց սուրբ Ղազարի գրադարանի գրացուցակը և 1805-ին Վենետիկում նա տպել տւեց Հին և նոր Ստաւարանի կարճառօտ պատմութիւնը աշխարհիկ լեզուով: Երկու տարում երկու մեծաքանակ տպագրութիւն էլ երևաց 1874-ին: Յայտնի է որ Աստուածաշունչը թարգմանեց հայերէն Մ. Բ. Գաբուր սկզբում Սահակ կաթողիկոսի և գիտնական Մեսրոբի ձեռքով, որին վերագրւում է հայոց տասերի զիւար: Այդ թարգմանութիւնը հիմնւած

էր «Եօթանասունքի» բնագիրներից մէկի վերայ, որ փոխ էր տւած Կ. Պոլսի պատրիարք Մաքսիմիանուսը: 1666 թւին Սահան եպիսկոպոսը լոյս ընծայեց Աստուածաշունչի այդ հայերէն թարգմանութեան առաջին տպագրութիւնը Ամստերդամում, բայց նա մէջ մտցրեց նաև իւր սեպհական թարգմանածները, որ հիմնւած էին Վուլգատայի ¹⁾ վերայ: Զընայած դորան այդ հրատարակութիւնը վերատպւեց 1705-ին Կ. Պոլսում և 1733-ին՝ Վենետիկում: Զոհրաբեանը 1805-ին առաջինը հրատարակեց նորա քննադատական տպագրութիւնը, հիմնւած 1319 թւականի մի ձեռագրի և բազմաթիւ ուրիշ ձեռագիրների վարիանտների վերայ: Նա, հիմնւելով բազմաթիւ աստղանշանների վերայ, ցոյց տւեց, որ հայերէն թարգմանութիւնը կատարւած է ըստ Որիգենէսի Hexapla-ի: Ընդհանուր յառաջաբանները քննադատութեան խիական օրինակներ են: Զոհրաբեանը աւելցրեց մի քանի ապօրինի գրքեր և մտադիր էր գեւելի աւելցնել: Այս նոր յաւելւածի ձեռագիրը դրսևում է Պարիզում, և պ. Կարրիէրը (Carrière) նորանից մի քաղւածք հրատարակեց Nouveaux Mélanges Orientaux հրատարակութեան մէջ 1886 թ.: Իսկ Յովսէփ գեղեցկի և Ասանէթի պատմութիւնն է: Ասանէթը Սնի քահանայ Պոտիֆերայի աղջիկն է, որ Փարաւոնը կնութեան տւեց Յովսէփին: Փարաւոնի որդին ուզում է փախցնել Յովսէփից, բայց նա խառնւում է և յետ դառնում:

1816-ին Զոհրաբեանը Սուրբ-Ղազարում լոյս ընծայեց հայոց հին այբբենարանի օրինակներ: 1818-ին նա հրատարակեց Անջելօ Մալիի հետ Եւզեբիոսի Ժամանակագրութեան հայերէն ձեռագիրը (Միլան, in-4), որի մասին Սէն-Մարտէնը ասում է թէ այդ մի կատարեալ ընդօրինակութիւն է ձեռագրի ²⁾: Հրատարակիչը յետոյ այդ ձեռագիրը նւիրեց Ասիական Ընկերութեան (Պարիզում): Հռչակաւոր Զիօկամօ Լէօպարդի (Leopardi) աւելի ուշ հրապարակեց իւր «Annotazioni» (Ժանօթութիւններ), հիմնւած Վատիկանի № 154 ձեռագրի վերայ (1823): Նոյն տարին, 1818-ին, երբ Զոհրաբեանը այն

¹⁾ Վուլգատայ—Աստուածաշունչի լատին թարգմանութիւնն է:

Դանօթ խմբ.

²⁾ Journal des Savants, 1819.

հրատարակեց, հայր Ժ. Բ. Օչերը (Aucher) նորանից մի երկրորդը հրատարակեց, հիմնւելով Սուրբ-Ղազարի ձեռագրի վերայ, և Ձոհրաբեանին մեղադրեցին որ չի հետեւել ակադեմիայի կանոններին հրատարակելով իւր ձեռագիրը: Այդ հակաձառութեան մասին, որ պատմել է Ժ. Հ. Պետերման, կարելի է կարդալ Շեօնէի (Schœne) հրատարակած Եւզեբիոսի մէջ իւր լատիներէն թարգմանութեան ծախսին (1876): Ձոհրաբեանի լատիներէն թարգմանութիւնը վերաուպեց յունաց եկեղեցու հայրերի մի ժողովածուի մէջ (Collection Migne des Pères de l'église grecque) Անեցու Սամուէլ թարգմանութեան հետ:

Այն ժամանակ երբ լոյս տեսաւ Զրպետեանի քերականութիւնը, Ձոհրաբեանը ձեռնարկեց թարգմանել նոր կտակարանը աշխարհիկ լեզուով Լոնդոնի Բիբլիական Բնկերութեան համար, որը ուզում էր այն տպագրել Պարիզում՝ թարգմանչի աշխերի տակ ¹⁾: Journal asiatique թերթի խմբագրական յանձնաժողովը խնդրեց Ձոհրաբեանին որ մի զեկուցում անէ Զրպետեանի քերականութեան մասին: Նորա քննադատութեան տոնի մասին կարելի է զաղափար կազմել այս տողերից՝

«Յո չը գիտեմ թէ ապա տարօրինակ զոքտորը որ այնքան համեստութեամբ խորհարդներ է տալիս, երբ և իցէ դպրոցում եղել է. չամենայն զէպո նա պատիւ չի բերում իւր վարժապետին. նա աւելի լաւ կ'անէր աղնտեղ վերադառնար, քան ուրիշներին դատեր տար.», Նա այնպիսի սխալներ է անում որ փոփոխ աշակերտն էլ չի անիլ. գրեթէ երես չը կառ ուր չը դանենք բարբարիզմներ և կամ չի՞նծու ոճեր և այլն»:

Զրպետեանը բարձր ձայներ արձակեց և պատասխանեց 40 երեսանի մի բրոշյւրով (ւէներքումն մի քննադատութեան, զետեղւած Journal asiatique թերթի 12-րդ տետրում, վերաբերեալ պ. Զրպետեանի մի քերականութեան, Պարիզ, 1823.), որ թերթը մերժել էր իւր մէջ ընդունել յօգւածի չափազանց երկարութեան պատճառով: Զրպետեանը այդ մասին դառնագին գանգատեց և մեղադրեց իւր աշակերտ Սէն Մարտէնին. վերջինս պատասխանեց թէ ինքը անմեղ է և որ ինքը շուտով պէտք է զեկուցում տայ Journal des Savants թերթին, բայց որ Journal asiatique չի թոյլ տալիս վայր

¹⁾ Նա լոյս տեսաւ 1825-ին:

ի վերոյ քննադատութիւններ և որ նորա սրտին մօտը՝ սխալմունքների ցրւելն է և ճշմարտութեան յաղթել տալը: Զոհրաբեանը իւր կողմից պատասխանեց Journal asiatique թերթում 1828 թւի (հատոր III, երես 170—190) և բազմաթիւ քաղաքներով ապացուցեց որ Զրպետեանը մեծաքանակ սխալներ է արել: Այսպէս նա յանդիմանեց նրան որ կառ խօսքը կառ ք խօսքի հետ շփոթում է, քանի որ առաջինը փշալից տերեւով մի տունկ է (chardon), նաև թէ բարբարոս մակբայներ է կազմում, որպէս՝ հրապարակաբար փոխանակ ասելու հրապարակաւ և այլն:

Զրպետեանը դժբաղդութիւն ունեցաւ առաջարկել իւր բրոշիւրը փիւլ Կլապրոթին (Klaproth ¹) մի նամակով առ 19 օգոստոսի 1823 թ., որի մէջ նա ասում էր որ իրան ծանր է թւում տեսնել նորան ընկերացած այդքան չարամիտ ընկերների հետ: Կլապրոթ, որ շատ քնքոյշներիցը չէր, պատասխանեց թէ ինքը ընդհակառակը շատ բաղդաւոր է զգում որ անձամբ ընկերացել է այդքան նշանաւոր գիտնականների հետ և թէ ինքը հիացած է որ երբեմն երբեմն առիթ է ներկայանում ոգիւնութեան երեսից զիմակը հասնել և անհիմն հաւասնութիւնները իրանց ճիշդ արժէքին վերածել: Նա աւելացրեց որ Զրպետեանի նախկին աշխատութիւնները այնպէս չէին որ մեծ հաւատ ներշնչել տային: «Ինձ զարմանալի թւեց որ մի մարդ, որ իրան բերականագէտ է համարում, չը զիտէ իւր սեպհական անունը Ֆրանսերէն գրել, որովհետեւ Cirbied ամենևին փոխադրութիւնը չէ Զրպետի (Dchrbied ²): Դուք կը ստանաք այս նամակը տպագրւած, որպէս զի նորան մամուլին յանձնելու ներդրութիւնը չը քաշէք»:

Այդ արդէն վերջին հարւածն էր: Զրպետեանը այլ ևս երկար չը մնաց Պարիզում: 1824-ին նա գեռ հրատարակեց Mémoires de la Société royale des antiquaires de France, այսինքն՝ Ֆրանսիացի հնութիւնների թաղաւորական Ընկերութեան Ֆիլատափարան-

¹) Արենելագէտ, ծնւեց 1783 թ., մեռաւ 1835 թ. Ծանօթ. խմբ.

²) Ինչու Կլապրոթը չէր մաածում որ Զրպետեանը ոչ թէ ողիտութիւնից այլ միայն եւրոպացու ականջին աւելի զիրար զարձնելու համար իւր աղպանունը Cirbied (Ֆրանսերէն արտասանութեամբ Արրբիէ) էր գրում.

Ծանօթ. խմբ.

ների մէջ Գոնիսիոս Թրակեցու քերականութիւնը, զուրս բերած Գրադարանի հացերէն երկու ձեռագիրներից (համարներ 127 և 124) ¹⁾։ 1826-ին նա պահանջեց արձակուրդ երեք տարով Թիֆլիս ուղեւորւելու համար, ուր Ներսէս արքեպիսկոպոսը նորան խնդրել էր կազմակերպել մի յատուկ դպրոց եւրոպական լեզուների համար։ Նա այդտեղ էլ մեռաւ 1834-ին ²⁾։

Ինչ վերաբերում է Զոհրաբեանին, նա զեռ. օգնեց Սէն-Մարտէ-նին՝ Վարդանի ընտիր առակների հրատարակութեան մէջ ֆրանսերէն թարգմանութեամբ Ասիական Ընկերութեան համար, և 1828-ին նոյն Ընկերութեան համար նա հրատարակեց Ներսէս Կլայեցու էլէզիան՝ վերաբերեալ Յդեստա քաղաքի նւաճմանը սարացիներից 1143 թւին (ձեռագիր n^o 80 Գրադարանի)։ Նա աշխատակցեց նաև Մովսէս Խորենացու հրատարակութեան (Սուրբ Ղազար, 1826 թ. ³⁾։ Նա մեռաւ 1829 թ. մայիսի 8-ին Վերսայլում, կտակելով Ասիական Ընկերութեան 500 ֆրանկի զումարը, որ այն ժամանակաւ մինիստր

¹⁾ Պր. Գուստաւ Ուհլիգ (Uhlig), Հալդէլբերգի դիմնադի վերատեսուչը, հրատարակեց 1883-ին Գոնիսիոս Թրակեցու քերականութիւնը քննադատութիւնով հանդերձ՝ Dionysii Thracis ars grammatica edidit G. Uhlig praemissae Adalberti Merxii de versione armeniaca disputatio, Lipsiae, 1883։ Մերքը իւր ուսումնասիրութիւնը արել է Սուրբ-Ղազարում։ Նորա զիտերտացիան բռնում է երես LVII մինչ LXXIII.

²⁾ Պր. Վէտրգ Չմշկեանի մի լօղւածում, տպւած «Մուրճ», 1889 թ. № 1, երես 134։ Յակոբ Շահան Զրպետեանի մահւան տարին և օրը ցույց է արւած 1833 թ. օգոստոսի 16։ Նոյն ալը լօղւածում, որ նւիրւած է սրբ. Գաբրիէլ Սունդուկեանցի կենսադրութեան, սկզբի երկու երեսներում (երես 133 և 134) լիշատակութիւններ կան Զրպետեանի մասին՝ վերաբերեալ Թիֆլիսում նորա անցկացրած տարիներին, որոնց մասին պրոֆ. Շուումպֆը ակնարկում է։ Պր. Չմշկեանի այն ստղերից, երևում է, որ Զրպետեանը հրաւիրւած էր Թիֆլիս Ներսէս Աշտարակցու կողմից, սորա արքեպիսկոպոս եղած ժամանակ, Ներսիսեան զպրոցը հիմնելուց լիտու։ Զրպետեանը և իւր ֆրանսուհի կինը, ծննդեամբ Denise Marguerite Wolantum բնակւում էին քաղաքի Անչախատ կոչւած թաղում Սունդուկեանների տանը։ Նորա մօտ է սկսում ուսել և կրթւել մանուկ Գաբրիէլ Սունդուկեանցը, սկսած 1832 թ-ից։

Շահոթ. Խմբ.

³⁾ Հռչակաւոր ֆրանսիական պետական մարդ և պատմաբան, ծնւ. 1787, մեռաւ 1875 թ. Շահոթ. Խմբ.

Հանգուցեալ Գիզո (Guizot ¹⁾) թոյլ աւեց ընդունել այս պայմանով որ նորա գերեզմանի վերայ արձանագրութիւն անւի Ֆրանսերէն և հայերէն լեզուներով: Journal Asiatique թերթում 1835 թ. (հատոր XV, երես 572—576) Եւգենիոս Բորէ (Eugène Boré) խօսում է նորա մասին այս կերպ. «Այստեղ տեղն է երախտիք յայտնել զոքտոր Զոհրաբի յիշատակին, որը խորատուզել էր իւր ազգի լեզւի և նորա գիտութեան մէջ և շնորհակալութիւն յայտնել յանուն այն երիտասարդ հայագէտների, որոնց թիւը Ֆրանսիայում միշտ աճում է: Այս գիտնականը մէկն է նոցանից, որոնք ամենից շատ են ծառայել հայոց գրականութեան: Նորա բոլոր աշխատութիւնները կրում են իսկական և խղճմտալի գիտնականութեան կնիքը»:

Մենք հարկաւոր համարեցինք մանրամասնօրէն պատմել Զրպետեանի և Զոհրաբեանի կոիւը, որովհետեւ այդ բանակուից մեծ մասամբ բղխեց այն լոյսը, որը այդ ժամանակից դէս չի դադարել լուսաւորել հայկաբանութիւնը Ֆրանսիայում:

Մենք կը վերջացնենք մեր յօդածը Ֆրանսիայի նկատմամբ՝ խօսելով Զրպետեանի յետնորդների մասին, որոնք են՝ Լըւայլան դը Ֆլորիւալ, Է. Դիւլլորիէ և պ. Կարրիէր, որպէս նաև Սէն-Մարտէն, Էւարիստ Պրիւզօմ, Եւգենիոս Բորէ, Բրոսսէ, Վիկտոր Լանզլուա և այլն:

Յետոյ մենք կ'անցնենք ուրիշ երկիրներ՝ Դերմանիա, Աւստրիա, Ռուսիա, Իտալիա, Բելգիա, առանց մոռանալու ամերիկական միսիոնարների աշխատութիւնները:

¹⁾ Նոր հրատարակութիւն 1880 թ.ին: Տես նաև Մովսէս Խորենացու վիականար շարագրութիւնները, Ս. Ղազար, 1842 և 1864.

ՄՄԲԱՏ ԶԱՅԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱԳԱՐԱԿԱՆՈՍ

ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆԻ

Ազատամիտ ողւոյլ ներշնչւած Կոմս Էմանուէլի բանաստեղծութիւնները, սահուն և համարձակ լեզւով թարգմանած՝ Սաղաթեանի «Գեւոր», ինչպէս, և ուրիշ՝ երկրորդական բանաստեղծների արտադրութիւնները կրում են իրանց վրայ «Հիւսիսափայլ»-ի վերահորդիչ — խմբագրի գաղափարների և արտայայտւելու ձևերի անջնջելի դրոշմը: Բայց չը նայած որ Նազարեանցի ազդեցութիւնից շատ քչերն են զերծ մնացել՝ վաթսկական թւականների «Հիւսիսափայլ»-ի բանաստեղծ-աշխատակիցներից ոչոք այնքան չէ տոգորւել «Հիւսիսափայլ»-ի միջնորդով և մանաւանդ նրա խմբագրի աշխարհայեցողութիւնով, մտածելու և խօսելու եղանակով, որքան Սմբատ Շահազիզեանը:

Վեւ ևս դպրոցական նստարանից տոք կոխելով գրական ասպարէզը՝ աշխարհաբար և գրաբար ոտանաւորների մի փոքրիկ ժողովածուով, Շահազիզեանը Լազարեան ձեմարանի զիննազի կուրսը աւարտելուց յետոյ՝ սկսում է գրել «Հիւսիսափայլ»-ում: «Ազատութեան ժամերը» — այս է նրա՝ առանձին հատորով լոյս տեսած առաջին գրական փորձերի ընդհանուր վերնագիրը — ներկայացնելով վեցերորդ դասարանի աշակերտի առաջին սիրոյ միմունքները և (հայրենասիրական բաղձանքները), բայց ընդհանուր իդէալով միացած չը լինելով չիշեցնում են Նազարեանցին աւելի իրանց արտաքինով լեզւովն ու ոճով: Մի նոր բարոյական աւազանում մկրտւած ենք տեսնում մեր

բանաստեղծին՝ «Հիւսիսափայլ»-ի աշխատակից դառնալուցն ի վեր։
Նահազիզեանի սիրոյ երգերը այդ ժամանակահատկէն կորցնում են իրանց
վաւաշտու-զգայնական բնաւորութիւնը, իսկ հայրենասիրականների մէջ
մուտք է գործում խելացի հասարակական տենդենցիա։ Բաւական
է այդ. Նահազիզեան կատաղի կռիւ է հրատարակում Նազարեանցին
հակառակող բանակին և, մանեւ ինչպէս կարգերի անուշով մարտնչող
պոլիցիստների շարքը՝ ակնարկութիւններ է անում իւր ժամանակի
խաւարաւորների մասին. առողջ մտածողն աղան վաւոր է, — կար-
գում ենք «Ազգային վիճակ» բանաստեղծութեան մէջ՝

Ճշմարիտ խօսողն — Հայի ոխերիմ,
Ինչ որ Հային է — այն երկնքից է,
Դատ արա սոցա, տէ՛ր իմ, Աստուած իմ։

Ո՞վ չէ չիշում Արարտեան — Ձերքեզեան խմբի դէմ՝ Նազա-
րեանցի արձակած շանթերը։

«Հիւսիսափայլ»-ի ճակատը զարդարող մակագրութեան մէջ ի-
միջի այլոց կան այս խօսքերը. «Այսուհետեւ լոյս և ճշմարտութիւն
և ազատութիւն խաւարի բարելոնեան գերութիւնից»։ «Հանդիսացէք
լոյս և ճշմարտութիւն, թող փախչի զիշեր մռայլած սրտերի»։ Բա-
ցադանչում է Նահազիզեան։ Յայտնի է, թէ որքան դատապարտում
էր «Հիւսիսափայլ»-ը իւր ժամանակի հայերի նիւթապաշա ողին։
Նոյն բողոքը բարձրացնում է և Նահազիզեան՝

Նիւթապաշտութիւնն մահու կապանքով
Խեղդել է դոցա ծանր լծի տակ,
Ձեռներն ու ոտներ պինդ կաշկանդելով,
Վարում է անզիւա կորստի յատակ։

«Կը դաց մի օր, ասում էր Նազարեանց իւր ժամանակի օբսկու-
րանտների մասին, — կը դաց մի օր և հեռի չէ արդէն, երբ այդ
պատուելիքը իրանց թշաւութեան պարծանքը Կլիօյի արդարաւելու-
ձեռքով կը տեսանեն պատմութեան տախտակների այն պարծանք-
ների շարքումը, որ գտել են աշխարհիս մէջ Հերոսարատոս յոյնը,
հրէական ազգի գպիրքը ու փարիսեցիքը, Դանթէի թշնամիքը
ու Գալիլէոս հալածողքը պապական Խալկիացի մէջ։ Մեր հայեացքը

շրջելով այդ գարշելի հոգեսպան կերպարանքներից, դարձուցանում ենք մեր հոգեպայծառ հանդէսի վերայ, ու հայկական հոգու առաքինութիւնը, բողբոջելով և կանաչելով օր ըստ օրէ, տալիս է մեզ մխիթարական լոյսեր գալոց օրերի համար:

Նոյն տեսակի մարդկանց Շահազիզեանը ուղարկում է հետևեալ աբառնալիքը՝ նոյն «Ազգային վիճակ» բանաստեղծութեան վերջում:

Բայց սարսեցէ՛ք, որդիք խաւարի,
Կը գայ ձեր վերայ ահեղ դատաստան,
Նորան գրաւելու չեն ոսկելի
Պանծերն ու պարկերն սև հարստութեան.
Կ'երթան, կ'անցանեն այս դառն օրերը,
Կը գայ երևան նոր ազգ, նոր կեանքով,
Նա կը դատէ ձեր վատթար գործերը,
Ամօթու արձան ձեզ նւիրելով:

Մեր բանաստեղծի մանր ոտանաւորներից կարելի էր բերել և ուրիշ հատուածներ, «Հիւսիսափայլ»-ի և Շահազիզեանի զաղարարների մօտիկ ազգակցութիւնը ցոյց տալու մտքով. բայց այդ հաստատու համար կարելի է բաւականանալ Շահազիզեանի ամենախոշոր բանաստեղծական գրեածքի՝ այն է «Վեռնի վշտի» ուսումնասիրութիւնով:

Հեղինակը «առ ընթերցողը» ուղղած յառաջարանում ուղղակի յայտնում է, որ իւր պօէմի նիւթը ժամանակակից հայ հասարակութեան պիտոյքներն են կազմում, ուրեմն հրապարակախօսական խնդիրներ: Այնուհետև մի «նախերգանք»-ի մէջ բացատրելով թէ ինչու ինքն աշխարհիկ լեզուով է գրում և մերկայնելով գրաբարեան կուսակցութեան բթամտութիւնը և բարոյական ոչնչութիւնը, գիմում է իւր զլխաւոր նպատակին: Այս «նախերգանք»-ը մեզ ակամայ չիչեցնում է «Հիւսիսափայլ»-ի առաջին համարի առաջնորդ յօդւածը, որով Նազարեանցը, որպէս գիտնական և հրապարակախօս ձուլելով նոյն նիւթի մասին, աշխատում է հաստատել աշխարհիկ գրականութեան քաղաքացիութեան իրաւունքները: Բուն պօէմի բովանդակութիւնը հետևեալն է:

Մոսկւայում ուսում առած մի հայ երիտասարդ, համեմատելով

իւր ժամանակի բարգաւաճ և քաղաքակիրթ ազգերի գրութիւնը իւր խղճուկ ազգի գրութեան հետ, զայիս է այն և զրախացութեան, որ հային էլ պէտք է մօտեցնել լուսաւորութեան և բարեկեցութեան նոյն պայմաններին: Այդ նւիրական մոտածութիւնով նա անց է կացնում երկար և տխուր տարիներ՝ առանձնութեան մէջ, մինչև վերջապէս վճռում է թողնել Ռուսաստանի մայրաքաղաքը և գնալ հայրենիք՝ Կովկաս: Իւր սիրած օրիորդին վերջին հրաժեշտը տալուց յետոյ՝ իւր հետ մի քանի զրքեր առած, Լեոնը ճանապարհ է ընկնում: Ահա և մի հայաբնակ քաղաք: Այդտեղ հովիւը իւր անառակ վարքով դալթալիզութիւնների տեղիք է տալիս իւր հօտին, ժողովուրդը պատրաստ է իւր հոգեւոր հօրը հրապարակ քաշել և խայտառակել: Լեոնը անէծք է կարդում հովւի դիւին, որ հասարակաց արդարադատութիւնից խոյս տալու համար դիմում է զանդատով հիւսիս: Շարունակելով ճանապարհը Կովկասեան լեռների միջով, Լեոնը տխուր խորհրդածութիւնների մէջ է ընկղմւում, տեսնելով մի կողմից երկրի բնական հարստութիւնները, միւս կողմից ժողովրդի խորին ագիտութիւնը: Նա մոտածում է և իւր ազգի մասին, որի մէջ նիւթապաշտութիւնը մեռցրել է և միտք և հոգի և հաւատ:

Նիւթապաշտ է հայն, ցուրտ որպէս սառույց,

Հաշիւների մէջ թաղւած և մեռած.

Նա արդէն սրտից մերժել է վաղուց

Գեղեցիկ տիպը — վկայ է Աստուած:

Հայի այդ և բազմաթիւ ուրիշ թերութիւններին շուտով ականատես վկայ է դառնում Լեոնը մի ուրիշ հայաբնակ քաղաքում: Այդտեղ նա ցաւով նկատում է նաև հայ ընտանեկան կեանքի ալլանդակ կազմակերպութիւնը՝ մեծի բռնակալութիւնը, կնոջ ստրկական վիճակը, մանուկների և մանաւանդ աղջկերանց կրթութիւնը և այլն: Լեոնը բողբոջում է այդ գրութեան դէմ, առաջարկելով հայ կնոջը ազատել իրան ճնշող կապանքներից, տալ նրան ինքնուրոյնաբար զարգանալու միջոց, մանուկներին դաստիարակել և ազգի մեծատունների գանձերը գործադրել հասարակաց հաստատութիւնների և հանրաշահ գործերի վերաց: Սակայն երիտասարդ հրապարակախօսի ձայնը մնում է «ձայն բարբառոյ յանապատին»:

Վերջին (Գ.) գլխում Լևոնին տեսնում ենք պատմական Հայաստանի հողի վրայ: Նա հիանում է իւր հայրենիքի բնութեան վրայ, բայց սիրով արիւն է կաթում տեսնելով որ այդ զեղեցիկ աշխարհում չը կայ կեանքի և դոյքի ասպահովութիւն. ժողովուրդը ագէտ է և հեծում է սոսկալի չքաւորութեան բեռի տակ: Խաբեբայ լատին քարոզիչները յաջողութեամբ առաջ են տանում իրանց դժոխային դիտաւորութիւնները, իսկ խաւարամիտ և անտարբեր հայ կղերը իւր նեղ շահերի ետեւիցն է ընկած: Երազի մէջ Լևոնին երևում են հին հայկական եկեղեցու պանծալի ներկայացուցիչները՝ Սահակ, Մեսրոպ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի և Ներսէս Լամբրոնացի, որ մեղադրում են այժմեան հոգևարականութիւնը իւր անտարբերութեան համար: Զարթնելով, Լևոն մտածում է որ մեր ազգի փլուկութիւնը կախած է լաւ ուսուցիչներից և լաւ ուսումնարաններից: Նա մատնացոյց է անում մանաւանդ կրօնուսուցիչների պակասութեան վրայ և, եկեղեցու արժանաւոր պաշտօնեաներ պատրաստելու համար, առաջարկում է Մայր-Եջմիածնում բանալ հոգևոր Ախպետիա:

Այստեղ մենք կարող ենք կանդ առնել:

Կարծեօք, շատ սուր քննական հայեացք չէ հարկաւոր՝ Շահագիզեանի հերոսի և Նազարեանցի միջև համամտութիւն տեսնելու համար: Լևոն չէ շօշափում ոչ մի հասարակական խնդիր՝ որ շօշափած չը լինէր «Հիւսիսափայլ»-ը: Նա տնտղում է նոյն վէրքերը, որ տնտղել էր Նազարեանցը և այդ վէրքերը բուժելու համար նա առաջարկում է նոյն միջոցները, որ առաջարկել էր «Հիւսիսափայլ»-ի խմբագիրը: Համեմատութեան համար գնում ենք այստեղ մի երկու հատուած՝ Նազարեանցի յօդածներից:

«Հայերը տակաւին այն տեղը հասած չեն, որ հասկանան թէ և հայոց կեանքը ունի ներքին խնդիրներ, և դոցա վերայ պիտոյ է միշտ անաչառապէս մտածել, խօսել և վերջապէս գործով իրադործել... Թէ ի՞նչպէս պիտոյ էր բարւոքել մեր ներկայ կեանքի կերպարանքը Ռուսաստանի մէջ, որ նա փոքր ի շատէ կարողանար մասնաւորապէս յարակցել Եւրոպայի հետ, մասնակից լինել նոր ժամանակի գիտութեանը... այդ մասին շատ փոքր զրոյց կայ հայերի մէջ, և հոգաբարձութիւն աւելի ևս փոքր:

«Կրօնի ուսումը, և դասատուութիւնը, ասում է Նազարեանց,

ինչպէս ամենայն առարկայի ուսում և դասատուութիւն, մնացել է հայերի մէջ իւր խորին ողայական հասակում: Այն մանուկների և ոչ չափահասների կրօնական դաստիարակութեան համար չը կայ ոչինչ հոգաբարձութիւն. այդտեղ քրիստոնէական կրօնի պարունակութիւնը դարձել է մի քանի դաւանաբանական հիմքեր և մի քանի հեշտ լցուցանելի արտաքին կարգեր: Մի զիտութիւն կրօնի, բանաւորապէս բմբռնելով նորա էութիւնը և մասնաւորելով աշակերտին, մի գիտութիւն կրօնի, որով փառաւորել են հայկական եկեղեցին մեր երանաշնորհ հարքը, զորօրինակ մի Ներսէս Շնորհալի, մի բաղմահայ յեաց ուսումնական և պայծառ մտածող ու առեւտրանող Լամբրոնացի... մի անգոյ բան է այժման հայկական սերունդի մէջ: Բայց որ ինչ շունին հայք այսօր, կարող են ունենալ մի օր, եթէ կամենային, հոգով և սրտով կամենային. այնուհետև ձեռքն ևս, որ մինչև այժմ մնացել են անգործ դրած զոգերումը, կը լցուցանէին իրանց զովանի, առաքինական վաստակը... Յանկալի էր միայն որ կրօնի դասատուքը լինէին ուսած, ընդհանրապէս կրթւած և մտածող մարդիկ: Բայց այսպիսի մարդիկ սունկի պէս չեն բուսում գետնից... Նւ այս պատճառով պարտք կայ ազգի հոգեւոր իշխանի վերայ, ՀՈԳԵԻՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ ընդհանուր գիտութեան և աստուածաբանական կրթութեան հիմնարկել, ուստի կարող էին ժամանակով արժանաւոր սպասաւորք և ուսուցիչք Աստուծոյ բանի յաւաքանակ ազգի մէջ¹⁾:

¹⁾ Հաճախ. Դեհագիւ, — Որքան հալ դաւակն ուսումնարանից

կարող էր քաղիլ կրօն և հոգի.

Չէ, չու չկալ ալք վարժապետներից,

Հին է չինւածը — պէտք է նորոգելու

(«Լեռնի վիշտը» II),

Հասաւ ժամանակ — մեք բողբոսում ենք.

Մեք ազգի տնդամ և երեսփոխան,

Ակադեմիա մեք պահանջում ենք

Պահանջում է ազգ, թէ և կիսաձայն...

Եւ ալք կարելի, և ոչ երազ ալք,

Միայն պիտոյ էր խնամք և վաստակ:

(ibid., IV)

Եթէ բերած օրինակները չեն կարող համարուել զօրաւոր ապացոյցներ Նազարեանցի և Նահազիզեանցի համերաշխութեան, մենք ունինք այդ մասին նաև «Հիւսիսափայլ»-ի վկայութիւնը: Ամենեւին ուղիղ և ճշմարիտ ձայն է տալիս Աւոնը,—կարգում ենք Նահազիզեանի զրւածի մասին խմբագրի գրած զեկուցման մէջ,—ուժգին բարձրացնելով իւր բարբառը, թէ միակ ճանապարհը փրկութեան է ուսումնի, դպրոցի, բանագէտ վարժապետքի, խելացի կրօնուսոյցքի, ոչ հնամուլ ուսուցիչք հայոց ճարտասանութեան, այլ նոր ժամանակի հոգուն և պիտոյքին քաջ ուշադիր մարդիկ, որով միայն կարելի էր դարման տանել աղգային ցաւերին բուն արմատից սկսանելով ցաւադարւած ազգի բժշկագործութիւնը: Մենք առ ի սրտէ ձայնակից ենք Աւոնին և բանաստեղծի գեղեցիկ ու առողջամիտ գաղափարներին, ասում է Նազարեանցը, և մի փոքր յետոյ աւելացնում է. «Աստուած տալ որ այդ սուրբ հոգեզմայլութեամբ յափըշտակւած բանաստեղծի բարբառը չըլինէր դարձեալ ձայն բարբառոյ յանապատի, ինչպէս հազարաւոր ձայներ մինչև օրս անխելի ցնդւած են հայկական կեանքի տրտում անմխիթար անապատի մէջ»:—Վասկած չը կայ որ այստեղ «հազարաւոր» խօսքը չափազանցութիւն է և քննադատը ինկատի ունի զլիաւորապէս իւր սեպհական յօդւածները: Բարեբախտաբար, մի ուրիշ կողմից էլ մեզ օգնութիւն է գալիս ինքը Նահազիզեան, մի ամբողջ գիրք նւիրելով յատկապէս Նազարեանցի քարոզած մտքերի պաշտպանութեան, մի գիրք, որի ամեն մի էջը ներշնչւած է խորին յարգանքով դէպի պաշտպանելի անձնաւորութիւնն ու նրա հրապարակախօսական գործունէութիւնը, և խորին զգանքով դէպի թըշնամական կրիտիկայի հայեացքներն ու կարծիքները: «Այսպէս այն մարդը, որ իւր կեանքի ազնւագոյն մասը նւիրել էր հայերի լուսաւորութեան, և ահա—մինչդեռ նորա մաքուր հոգին՝ դուրս թռչելով հոգեղէն մարմնից, կամէր յաւիտենական հանգիստ վայելել,—այն մարդը նորից դարձաւ քսութեան առարկայ, և գերեզմանը, դեռ ևս կանաչ ծաղիկներով զարդարած, զղրուեց և շարժեց... Այո՛, ընդհանուր օգևորութեան չը զիմացաւ թշնամին. մինչդեռ հայ երիտասարդները ու օրիորդները Նազարեանցի դագաղին հիւսում էին ծաղկափունջեր, փորը դեանին քսելով դուրս եկաւ իւր որջից հայ-

կական նախանձ,¹ մեր հինօրեան պատմական նախանձը, սկսաւ օձի նման շնչել և թռնաւորել այն զեղեցիկ գրաւականը սիրոյ — այն կուսական արտասուքը ու պսակը: Բայց թո՛ղ ձեր սիրտը չը մորմոքէի, ազնիւ պարոններ ու ակնայք. դուք արժանաւոր կերպով լցուցել էք ձեր առաքինութիւնը. դուք չէք խնկել մի մեծատուն հարստականի յիշատակը, որ ասէինք թէ ձեր երկրպագութիւնը նորա արժաթին էր տւած. դուք պատել էք մի աղքատ հեղինակ, մի առաքինի և վաստակաւոր մարդ: Քե՛զ եմ ասում, եկեղեցի Հայաստանեայց, մի՛ տրտմիր, մի՛ վշտանար. դու հանդիսաւոր զանգահարութեամբ, խաչերով և բուրվաւներով օրհնում ես քո ընտիր որդու յիշատակը. մեր դարեւոր կործանման վկայ լինելով, դու տեսել ես քո բարձրութիւնից թէ որքան պատական մարդիկ անարգուել են ակաւամն զրազէտներից. — մարդիկ՝ որոնք քաջութեամբ սպասաւորել են քեզ և քաջութեամբ մտել գերեզման»¹): Արդեօք այս սրտաշարժ զօրովալիր բանաստեղծական զեղման մէջ չէ՞ հնչում երախտագէտ աշակերտի վշտի ու զայրոյթի ձայնը: Բայց ահա՛ և Նահազիզեանի սեպհական խոստովանութիւնը. «Աւ այստեղ մենք, մեր աշակերտական դէմքը շրջելով դէպի այն պատկերը, որ բերել է մեզ այնքան հոգեւոր արտնութիւն և ուրախութիւն, մենք կամէինք հայոց պատերազմի և խաղաղութեան նկարագիրը կնքել նոյն ան հռաց տղամարդի (Նաղարեանցի) խորհրդածութեամբ»²):

(Էջ չարունակւի)

¹) «Հրապարակախօս Չալնո», եր. 53—54. ²) *ibid*, եր. 292.

ՀՈՂԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Ըստ ԳԼԷԲ ՈՒՍՊԵՆՍԿՈՒ

ԵՐԻԱՆԳ ԴԱՉԱՐԵԱՆԻ

I

Ռուս երևելի ժողովրդագետ Գլէր Ուսպէնսկին, իւր նշանաւոր չափադասութեան մէջ՝ Влaсть землi, գիւղացու բնադրութիւնը, նորա բաշտակեան հասկացողութիւնները և զգայմունքները կապում է հողի հետ, հողի ազդեցութեան, «իշխանութեան»՝ հետ։ Գիւղացու ամբողջ կեանքը կը կախուի և երկրագործական աշխատանքով. նա իւր կեանքի նպատակը, իւր կեանքի ամենարարձր երջանկութիւնը գտնում է աչդ աշխատանքի, աչդ երկրագործութեան մէջ։ «Արդեօք—ասում է Ուսպէնսկի—երկրագործ գիւղացու ամեն մի քաղը, ամեն մի մտածմունքը կախում է հողից։ Նա ամբողջովին գերի է աչդ հողի, աչդ կանաչ խոտի ձեռքում։ Նորա համար ալնքան դժուար, ալնքան ծանր է հողի իշխանութիւնից ազատելը, հողի ցոյց տաւ ճանապարհից չեղելը, որ երբ գիւղացուն հարցնում են թէ՛ որն է ուղում՝ ծեծ ուտել, թէ բանտը նստել,—նա անշուշտ կը հտախաղան ծեծ ուտելը, որպէս զի չուտով ազատուի, չուտով զնա իւր գործին, եթէ ոչ նրա տէրը և իշխանը—հողը, նրան չի պատիլ՝ հարկաւոր է քաղել, հարկաւոր է անասուններին խոտ պատրաստել. իսկ աչդ անասունները «հարկաւոր են» երկրին, հողին։ Գտանելով հողի մշտական ազդեցութեան տակ, տանելով հողի մշտական ազդեցութիւնը, տանելով իւր ուսերի վրայ հողի բաղմամբիւ պիտուքները, բաղմամբիւ նեղութիւնները և հոգսերը, գիւղացին գլուխ է, որ ինքը մենակ, ինքնուրույն կերպով անկարող կը լինէր կատարել աչդ ամենը՝ եթէ, նրան իւրաքանչիւր բոլի էր հրամայէր հողը, իւրաքանչիւր վարկեան չիշխէր, էր կատաւարէր նրա բոլոր գործերը և մտածմունքները։ Հողի մշտական իշխանութիւնը և ճնշումը անհամեմատ թեթեւացում է երկրագործի համար նորա աշխատանքը և

ապք պատճառով երկրագործ գիւղացին ամենալին իրաւամբ կարող է ասել՝ որ նրան «սիրում է մալը հողը»:

Ահա ալի հողի «խլանութիւնը», որ գիւղացու բերանում փոխւում է «սեր» խօսքի, հողի ալի ճակատագրական ազդեցութիւնը կազմակերպում է միլիոնաւոր մարդոց՝ երկրագործ ամբոխի բարոյական աշխարհը, նրա հողեկան կեանքը, նրա մտածելու, զգալու բոլոր կարողութիւնները, նրկրագործ գիւղացիների ամբողջ կեանքը, նրանց թէ՛ ընտանեկան և թէ՛ հասարակական բոլոր կեանք և բարդ շարաքրութիւնները հողի ազդեցութեան սակ՝ ստանում են որոշ գոյն, որոշ բնաւորութիւն. երկրագործական պարապմունքը, հողի և առհասարակ բնութեան ուժերի հետ ունեցած մշտական մօտիկ, անմիջական շարաքրութիւնը տալիս է գիւղացու հողեկան ուժերին, ընդունակութիւններին մի առանձին, որոշ, սպեցիֆիկական չատկութիւն, որով նա, ալի գիւղացին, բաժանւում, զատւում է հասարակական միւս դասակարգերից՝ վաճառականներից, արհեստաւորներից, չլնոյնիկներից և ինտելիգենցիալից:

Ինչո՞ւն է կապւում գիւղացու բնաւորութեան ալի առանձին աչքի ընկնող չատկութիւնը, ինչ հոգեբանական փոփոխութիւն է մտցնում հողի իշխանութիւնը գիւղացու ներքին բարոյական աշխարհում:

II

Պէ՛տք Ուսուցենսկին, որ աչքան սիրով ու հմտութեամբ ուսումնասիրում է ուսու ժողովրդի կեանքը, նորա հողեկան աշխարհը, որ աչքախի մեծ հանճարով լուսաւորում, պարզում է մեր առաջ ժողովրդի ստորին խաւերի մոլթ անկիւնները—այս խնդրում նույնպէս իւր սովորական գիտելու, ուսումնասիրելու եղանակով՝ կարողանում է ճիշդ և հստակաւ ի կրակացութիւններ տալ միւս՝ Նորա ամբողջ շարաքրութեան (Власть земная) գլխաւոր նպատակն է պարզել թէ՛ ալի ինչ անհասկանալի և անըմբռնելի «ուժ» է, որ ուսու ժողովրդականները գտնում են իրանց գիւղացու մէջ, ալի ինչ ներքին հողեկան մեծ կարողութիւն է, որ պաշտպանել է ուսու գիւղացուն պատմական շատ փոթորիկների ազդեցութիւնից, որ ազատել է նրան թաթարների օրդաններից և գերմանական բերօկրատալից: Ուսու ժողովրդականների կարծիքով՝ ալի «ուժը», ալի առանձին հողեկան կորովը, որ նկատւում է իրանց երկրագործ մուծիկների մէջ, մի աչքախի առանձնաշնորհութիւն է, որով կարող է պարծենալ միայն ուսու գիւղացին, և որ կազմում է ուսու գիւղացու միակ չատկանիչ սեպհակաւնութիւնը: Նրանք ողորում, հիանում էին իրանց ժողովրդի ալի հողեկան մեծ հարստութիւնով, նրանք երկրպագում էին ալի «ներքին», «աներկով» «առտուածալին» ուժի առաջ, որ նրանց կարծիքով, հիմքն է ուսուց կեանքի չառաջադիմութեան, որ տանելու է ուսաներին գէպի լուսաւորում:

թեան և լառաջագիւմութեան «աւետաց երկիրը»... Սակաւն ախոսս, որ ալդ անկեղծ ժողովրդասէր մարդիկ բաւականանում էին միայն անորոշ խօսքերով և բացականչութիւններով, նրանք զխելին լոկ ոգևորեւ, սքանչանալ վերացական, անհասկանալի ենթադրութիւններով... Գլէր Ուսպէնսկի, որ թէ անկեղծութեան և թէ նոյն իսկ ոգևորութեան կողմից ոչինչով պակաս չէ ալդ վերադասեալ ժողովրդասէրներէր, — ունի նաև մեծ տընտեսական գիտութիւն, գիտող, ուսումնասիրող խելք և խորը թափանցող, պրական տաղանդ: Հնորձիւ ալս անձնական լատկութիւններէ՛ր՝ նա կարողացաւ ալդ հարցին տալ խելացի և ճիշտ բացատրութիւն: Ուսպէնսկու ամենագլխաւոր և անհերքելի տեսակէտը ալն է, որ ժողովրդին ճանաչելու, նրա հոգեկան աշխարհը ուսումնասիրելու համար՝ անհրաժեշտ է «մտնել ալդ ժողովրդի կեանքը», թափանցել զիւղացու խրճիթի մէջ և աշտեղ տեսնել և զգալ նորա կեանքը իւր բոլոր հիմնական պարզութեամբ: Հաստատրիմ մնալով իւր ալս ընդունած տեսակէտին՝ նա իւր ամբողջ տաղանդը և գիտութիւնը ծառայեցրեց և ծառայեցնում է ժողովրդի կեանքի գրական ուսումնասիրութեանը, ամբողջ էութիւնով նա տրեցաւ ժողովրդին և իւր զրչի միակ և անհրաժեշտ նիւթը դարձրեց ռուս ժողովրդի կեանքը, նորա թէ ընտանեկան և թէ հասարակական բոլոր մանրամասն ներկայները... Ապրելով ժողովրդի մէջ, շարունակ և անզպար գիտելով նորա կեանքը, նորա թէ հոգեկան և թէ տնտեսական հանգամանքներն ու երեկոյնները՝ Ուսպէնսկին բազմաթիւ պատկերներով, բազմաթիւ մանր ու խոշոր լուսաճներով հեղեղում է ռուս լառաջագիւմ մամուլը, որտեղ նա միշտ և անզպար խօսում, մտածում է գիւղացու մասին, նորա աշխատանքի, նորա ապրուստի մասին: Իւր ամբողջ հոգով Ուսպէնսկին մտել է ժողովրդի կաշու մէջ, իւր ամբողջ տաղանդով նա աշխատում է լուսաւորել ալդ ժողովրդի կեանքը, լուսաւորել ոչ թէ իրան, ժողովրդի համար, ալ ընթերցողների համար, հասարակութեան ալն բարձր դատակարգի համար, որի աչքերից միշտ խուսափել, միշտ ծանկեւ է ժողովուրդը, որի համար «գիւղացի», «ժողովուրդ», «մուժիկ» և ալ խօսքերը անորոշ, անշտա և անբացատրելի հասկացութիւններ էին ներկայացնում: Ռուս ինտելիգէնցիան ապրելով Պետերբուրգում, չըջապատւած քաղաքակրթութեան բոլոր շարմարութիւններով՝ երբեմն հանգիստւոր տօների և խնճուքների ժամանակ, կամ թէ չէ հասարակական պիտուքներով ոգևորւած՝ սկսում էր արտատանել ժողովուրդ և մուժիկ խօսքերը, սալով ալդ խօսքերին խորը կարևոր նշանակութիւն: Ռուս ինտելիգէնցիան ալդ բարձր ոգևորութեան բոլորներում սիրում էր մտաբերել ալն «տժը», ալն մեծ «տոկուշնութիւնը», որով գիւղացին տանում է կեանքի բոլոր նեղութիւնները և վտրձանքները, որով ժողովուրդը «ապրում է» և պաշտպանում է մտքի և զգացմունքների մշտական թարմութիւնը... Բայց թէ ինչո՞ւն է կաշնում ալդ «տժը», ալդ «տոկուշնութիւնը» լինողէս է առաջացել նա ժողովրդի մէջ, ինչ պայմանով

և օրէնքներով պաշտպանւում է աղքատ երկար պատմական ժամանակների ընթացքում—աղք մասին շատ քիչերն էին մտածում, աղք մասին աւելորդ էր համարւում անգամ մտածել...

Նրկարատե ուսումնասիրութիւններից ու դիտողութիւններից լիտւոյ Ուսպէնսկին նույնպէս համոզւեց, որ իրաւ ուսու ժողովրդի մէջ կալ մի ուժ, կալ մի անչաղթելի տոկոնութիւն, որով աղք ժողովուրդը զանազանւում է միւս դասակարգերից, որով ուսու գիւղացին աննկարագրելի համբերութեամբ կուտւմ է բոլոր կենսական դառնութիւնների, բոլոր արգելքների ու անչափողութիւնների դէմ: Համոզւելով աղք բանում, Ուսպէնսկի շարունակեց իւր դիտողութիւնները, իւր տնտեսական և հոգեբանական ուսումնասիրութիւնները ժողովրդի մէջ՝ որպէս զի պարզ գաղափար կազմէ աղք (ուժի) մասին և, որպէս զի «դանի» նորա առաջանալու, զարգանալու, կազմակերպուելու պատճառները, օրէնքները: Այս դիտողութիւնների մէջ նա բոլորովին նման է մի ուսումնական բնադէտի, որ գիտելով, նկատելով բնութեան մէջ մի երևոյթ, իսկոյն աշխատում է հասկանալ աղք երևոյթի էութիւնը, իսկոյն սկսում է քննել և բացատրել նրան առաջացնող բնական և ընդհանուր պատճառները:

III

Նախ մեզ անհրաժեշտ է բացատրել թէ ինչ բան է ուժը, տոկոնութիւնը կեանքի մէջ, թէ ինչպէս պէտք է հասկանալ աղք խօսքերը ժողովրդի, գիւղացու վերաբերութեամբ: Ասական չը կալ, որ ուժ անելով աշխտեղ պէտք է հասկանալ բարոյական ուժ, տոկոնութիւն, տոկոնութիւն: Կեանքի մէջ բարոյապէս ուժեղ կամ տոկոն կոչւում են այն մարդիկ կամ այն բնաւորութիւնները, որոնց մէջ բոլոր թէ բարոյական և թէ մտաւոր հասկացողութիւնները կազմում են մի ընդհանուր ներդաշնակ ամբողջութիւն, որոնց հոգեկան աշխարհը ազատ է ներքին հակասութիւններից, ներքին տարակուսանքներից, կասկածներից ու երկբաւութիւններից: Նրբ մարդու խղճի և զգացմունքների ձալնը ներդաշնակ են գործում, երբ նրա մտքի, զատողութեան հսկողութիւնը անպայման հաստատում, ամրացնում է աղք ներդաշնակութիւնը՝ այն ժամանակ մարդը դառնում է բարոյապէս մի անխորտակելի էակ, այն ժամանակ նրա բոլոր գործերը, մտածմունքները և զգացմունքները կը կատարեն խիստ կանոնաւոր, ճիշտ և անբաժան միաւորութեամբ: Աղք տեսակ մարդը կամ բնաւորութիւնը կոչւում է ուժեղ մարդ, ուժեղ բնաւորութիւն: Ուժեղ այն մարդով, որ կեանքի մէջ նա միշտ կը գնալ իւր ճանապարհով, կեանքի բոլոր արգելքները, բոլոր խոչնդոտները կը փչւեն, կոչնչանան նրա զօրեղ և լուզած բնաւորութեան առաջ: Այսպիսի մի զօրեղ և ներդաշնակ բնաւորութիւն (гармоничная натура) Դ-ը. Ուսպէնսկին քույր է տալիս մեզ իւր (Парамонъ

ЮРОДИВЫЙ» անունով փոքրիկ գրածքում, ալսպիտի բնաւորութիւն նա զիտում և նկատում է նոյնպէս և բոլոր ռուս զիւղացիներին մէջ՝ Ուսպէնսկին չարունակ դուրս է բերում ռուս զիւղացու ալի բնաւորութիւնը, նրա հոգեկան կեանքի ներդաշնակութիւնը, հարմոնիան, նրա թէ բարոյական և թէ տնտեսական համոզմունքների անյողոզղ ամբողջութիւնը, ուժեղութիւնը։ Ռուս զիւղացին Ուսպէնսկու կարծիքով՝ նրա զխտողութիւնների և նկարագրութիւնների համաձայն, բարձր է բոլոր միւս հասարակական դասակարգերից՝ մինչև անգամ ինտելիգենցիայից ոչ թէ իւր խելքով, — գիտութիւններից զուրկ է «խաւար» ևսմիկը — ալ նա բարձր է իւր բնաւորութեան պարզութիւնով, իւր հոգեկան ներդաշնակութիւնով, իւր կեանքի ընդհանուր անկեղծ և ճշմարիտ ոգով, որին, ալ ճշմարտութիւնը, Ուսպէնսկին անւանում է правда (ոչ справедливость)։ Ահա ռուս զիւղացու կեանքի ալի ճշմարտութիւնը, ալի правда-ն է, որ կազմում է նորա բարոյական ուժը, նորա գոյութեան հաստատուն և ամբողջիմբը, նորա միակ և ամենապինդ նեցուկը՝ աշխարհիւ բոլոր դատնութիւնների, վտանգների մէջ... «Մեզանում — ասում է Ուսպէնսկի» — միլիոնաւոր ամբոխը ապրում է առանց կեղծիքի, առանց ինքնախաբէութեան, ահա մեր լուսը, մեր ապաւէնը։ Այս մշտական և անփոփոխ լատկութիւնը, որ չարունակ երկար տարիների ընթացքում պահպանել է իւր մէջ ռուս ժողովուրդը՝ կարող է ծառայել, որպէս գրաւական՝ ապապալ չառաջադիմութեան համար, կարող է ճշմարիտ մխիթարել և ոգևորել ամեն մի անկեղծ ժողովրդական մարդու... Մատնացուց անելով այս լատկութեան վրա՝ Ուսպէնսկին ամուր շեշտում է, որ ահա ալի է ռուս ժողովրդականների կարծեցեալ, երեւեակաւ, անորոշ և անըմբռնելի «ուժը», «կորովը», որ գտանւում է իրանց ժողովրդի, իրանց երկրագործ մութիկի մէջ։ Ալի ուժը հիմալ պարզ է մեզ համար, հիմալ մենք հասկանում ենք նորա էութիւնը, հիմալ կարելի է նրան «ստալով ցուց տալ» — ասում է Ուսպէնսկին։

Ըմբռնելով և բացատրելով զիւղացու կեանքի «ուժը», մանրամասն ցուց տալով ալի ուժի բոլոր արտադրութիւնները կեանքի մէջ՝ Ուսպէնսկին դարձեալ չի կանգնում ալի կէտի վրա, դարձեալ չարունակում է իւր զխտողութիւնները, որպէս զի հասկանալ և բացատրել թէ ինչպէս և ինչ պայմաններով է առաջացել զիւղացու ալի ուժը, ինչ բանի հետ է կապւած նորա բարոյական ալի մեծ և զարմանալի տոկոսնութիւնը։

Գարձեալ սկսում է կեանքի մէջ խորատուգել Ուսպէնսկին, դարձեալ ուզում է իւր խոր հոգեբանական և տնտեսական զխտողութիւնները զիւղացու վրա... Եւ ալի բոլոր հետադատութիւնների, ուսումնասիրութիւնների հետեանքը եղաւ այն երևելի գրածքը, որի տնուն է Власть земли («Հողի իշխանութիւնը») և որի մէջ, նոյն իսկ վերնադրից սկսած՝ խօսւում է հողի իշխանութեան, հողի աղղեցութեան, երկրագործական աշխատանքի և զիւղացու մասին։ Ալի չարագրութեան մէջ՝ Ուսպէնսկին զարմանալի խորը զի-

տողութիւններով, տալիցնայ համեմատութիւններով և օրինակներով լսացատրում է՝ թէ ինչպէս հողի և սահառարակ երկրագործական աշխատանքի աղիւղութեան տակ՝ ամրացել, կազմակերպել և ինքն ըստ ինքնիւն աղնւացել է գիւղացու կեանքը, նորա բարոյական աշխարհը՝ Գիւղացու հոգեկան բոլոր ուժերը, նորա բարոյական հաստատ և անվրդալ համոյմունքները, նորա բոլոր զաղափարների և զգայմունքների սատարիկ անկեղծ ճշմարտութիւնը հետեանք են նորա երկրագործական պարապմունքի, նորա մշտական շարաբերութեան՝ հողի և բնութեան միւտ տարրերի հետ... Եւ ահա թէ ինչպէս Գիւղացին իւր ամբողջ կեանքում գործ է ունենում հողի, ջրի, անձրևի, քամու, ամպի, կալծակի, մէկ խօսքով բնական ուժերի և երևոյթների հետ։ Նորա սնտեռական կեանքի, նորա երջանկութեան և անբաղաժանեան, ուրախութեան և վշտի զլիաւոր ֆակտորները՝ ալլ բնական ուժերը, ալլ երևոյթներն են։ Երկրագործութիւնը, որ գիւղացու բոլոր զբաղմունքների և հոգսերի կենդրոնն է, լիովին կապւած է բնութեան հետ. բնութեան ուժերը, երևոյթները և անփոփոխ մշտական օրէնքները ալստեղ կատարում են ամենազլիաւոր, ճակատադրական դերը գիւղացու կեանքում։ Իւր ամբողջ երկրագործական աշխատանքի սէզոնում գիւղացին ստիպւած է գիտել նրանում կատարուող ամենահասարակ և չնչին փոփոխութիւնները և երևոյթներն անգամ Բնութեան մէջ կատարուող ալն բոլոր փոփոխութիւնները՝ օրինակ՝ զարնան բացելը, ձիւնի շուտ կամ ուշ հալւելը, անձրևային եղանակները, քամիների ցուրտ կամ տաք լինելը, հողի մէջ երեցած կենդանիների, բուսերի զանազան հիւանդութիւնները և ալլն և ալլն—որոնք համարեալ բոլորովին աննկատելի, կամ անհետաքրքիր են քաղաքացու համար,—գիւղացու կեանքում նշանաւոր, աչքի բնկնող և կարևոր հանգամանքներ են կապում։ Արքան ուրախութիւն, վիշտ, արտմութիւն ևն պատճառում գիւղացուն ալլ երևոյթները, որքան չօսեր, ցանկութիւններ և իղծեր են պարունակում երկրագործի համար բնութեան ալլ հասարակ և սովորական խաղերը, կապրիոյները... Սկսած իւր աշխատութեան առաջի օրից, երբ գիւղացին զուրս է քշում գոմից իւր եղները և սկսում է վարել առաջին գործողութիւնը, մինչև իւր աշխատանքի վերջին պտուղների ստանալը, նա ամբողջ հոգով մտած—խորատուգած է բնութեան մէջ, ամբողջ էութիւնով թափանցած է նորա խորը և «անքննելի» օրէնքների երևոյթների մէջ... Իւրաքանչիւր ամպի կտորը, իւրաքանչիւր անձրևի կաթիլը, արևի իւրաքանչիւր ճառագայթը, քամու փչիլը, կալծակի փաղկելը... Խորը հոգեկան չուրմունքներ են պատճառում գիւղացուն, նրան երբեմն ուրախացնում, ցնծութիւն են սրբալուծ, երբեմն չուսահատեցնում, տրտմեցնում, վշտահար են անում նրան։ Եւ ալլ բոլորը կատարում է ամեն օր, ամեն րոպէ, ալլ զգայմունքներով, ալլ հոգսերով և մտածմունքներով «ստրում է» գիւղացին իւր աշխատութեան բոլոր ընթացքում։

Բաւական չէ, որ գիւղացիք ինքը աշխատում, արեան քրտինք է թափում, բաւական չէ, որ նա չի խնայում ալդ աշխատանքի վերաջ ոչ ուժ, ոչ առողջութիւն, ոչ կեանք... ալդ բոլորը բաւական չէ. հարկաւոր է, որ նորա աշխատանքը «ծիլ», արդիւնք տալ երկրի երեսին, հարկաւոր է, որ իւր վարած, փորփրած, ցանած և պահած հողը բուսցնէ նորա ցտրենի հատիկները:

Իսկ այդ «բուսցնեիլ» արդէն կախած չէ գիւղացուց, ալդ բանում՝
գիւղացիին անգօր է, ոտրուկ է բնութիւան ձեռքում: Եւ ահա, իւր դաշ-
տալին բոլոր պարտականութիւնները սրբութեամբ կատարելով, իւր աշ-
խատանքի և հարստութեան վերջին կաթիլը լանձնելով հողին, նա, ալդ
բազմաչարչար երկրագործը, ընկնում է ծնկները վրայ և սկսում է աղօթել
Աստուծուն՝

«Յոյսն ահա, որքից տակին փռած է:

• Բո սուրբ Աջը որա վրալ տարածիր »:

IV

Մենք տեսանք, որ երկրագործութիւնը ստիպում է գիւղացուն ուսումնասիրել բնութեան ոլոքերը, ստիպում է նրան չափ մօտիկ հոգեկան շարաքերութիւններէ մէջ մտնել աղի անշունչ, անխօս-անլեզու բնութեան հետ: Տեսանք, որ գիւղացու կեանքի երջանկութեան, կամ թշուառութեան, ուրախութեան կամ տխրութեան միակ և ամենաճիշտ բարոյնորդ դարձեալ աղի բնութիւնն է, դարձեալ նրա ղանադակերալ ոլոքերի փոփոխութիւններն ու երեւոյթներն են: Վտանկելով բնութեան հետ աղքատ քնքով հոգեկան շարաքերութիւններէ մէջ, իւրաքանչիւր օր զգալով իւր վերաջ աղի բնութեան տարրերի՝ կամ ուրախացնող կամ տխրեցնող ազդեցութիւնը, գիւղացին աճնու ամենաճիւճ ներքուստ, հոգեպէս համոզւած է, որ բնութիւնը, նրա ոլոքերը և օրէնքները միշտ արդար, միշտ ճշմարիտ, միշտ աղնիւ և անխաբարսիկ են նորա համար. նա համոզւած է, որ իւր ցանած և փայլեալած արտը «չի պահելու» իւր մէջ ցորենի և գարու հատիկները, համոզւած է, որ երկինքը անշունչ կը «պալլոյն» նրան թէ անձրև, թէ լուս և թէ ջերմութիւն... Այդ բաներում նա իւր կերպով համոզւած է: Նա համոզւած է նոյնպէս որ եթէ իւր ցանքը բարեպաշտ լինի, ալսինքն, եթէ չը պատահի որ և է զգբաղմութիւն—կարկուտ, երաշտութիւն, մարեկ (որոնք գիւղացու կարծիքով՝ դարձեալ բնութիւնից, Աստուծուց են գալիս, որպէս արդար պատիժ նորա «մեղքերի» համար...) և ուրիշ անսպասելի վտանգ—աճն ժամանակ նա կը ստանալ իւր արդար աշխատանքի պտուղները, նա առատ հունձ կունենալ, որ կը ճշանակէ՝ գիւղացու մի տարաւ կեանքը պարհոյւած է, որ նա միջոց կունենալ ձմեռը հանգիստ և ուրախ լինել, միջոց կունենալ անձնատուր լինել հոգեկան բաւականութիւններով:

հարսանիք անկույ իւր բարեկամներին հիւրասիրելու, քահանային «ժամոց» աւալու, երեխային պատշաճաւոր կերպով մկրտելու և ալլն և ալլն:

Անպիտակ գիւղացու հունձքի աջողակը, որ կապւած է բնութեան տարբեր ուժերի և երեւոյթների հետ, պայմանաւորում է նրա կեանքի մի շարք տնտեսական և հոգեկան շարժումները, վաշխները: Իսկ ալլ տնտեսական և հոգեկան շարժումները և վաշխները՝ կախւած լինելով հունձքի չափողակուց՝ միևնույն ժամանակ՝ խիստ կերպով միացած են և ալլն բնական ուժերի, երեւոյթների ու օրէնքների: հետ, որոնք առաջացնում են գիւղացու համար առատ հունձք, որոնք բուսցնում, զարգացնում և հասցնում են նրա արտը, նրա ցորենի և գարու հասկերը...

Գիւղացու և բնութեան մէջ կրած ալլ անխզկի տնտեսական և հոգեկան կապը, ունենում է իւր խոր, անջնջելի ճակատագրական ազդեցութիւնը գիւղացու վրա, նրա թէ ֆիզիքական և թէ մանաւանդ հոգեկան ուժերի վերաջ: Ապրելով միշտ բնութեան հետ, նրա գրկում, գիտելով, ուսումնասիրելով և զգալով բնութեան անփոփոխ, չափաւորական, խելացի և արդար օրէնքները, որոնք միշտ գործում են միևնույն կանոնաւորութիւնով, միևնույն ճշգրտութեամբ՝ առանց խտտութեւ, չեղելու իրանց բնական, սահմանւած ընթացքից՝ գիւղացին բոլորովին ակամաջ ենթարկւում է ալլ օրէնքների և ուժերի ազդեցութեանը, ակամաջ նորա խելքը և զգացմունքները ստանում են նույն ճշմարիտ, կանոնաւոր, խելացի և անկեղծ ուղղութիւնը, ինչ որ մենք նշմարում ենք բնութեան մէջ, նորա ուժերի և օրէնքների մէջ: Բնութիւնը կրթում, դաստիարակում է գիւղացուն: Ասկալն ալլ կրթիւնը, դաստիարակիւնը գործողութիւնը կատարւում է բոլորովին անկախ գիւղացու ցանկութիւնից, հա ինքը ամենին հակացողութիւն, գաղափար էլ չունի ալլ կրթութեան մասին. բնութեան, ճշմարիտ և խիստ ուժերը, օրէնքները, երեւոյթները ներշնչում են գիւղացուն՝ անկեղծ և ճշմարիտ ողի, տալիս են նորա մտքին և զգացմունքներին կանոնաւոր, խիստ, որոշ և չափազանց պարզ, չափազանց անմեղ ուղղութիւն... Եւ գիւղացին կրելով իւր մէջ բնութիւնից ստացած ալլ հոգեկան բարիքները՝ ամենին չի էլ կարծում՝ թէ ինչ բան է ալլ, ամենին չի էլ կարծում, որ ինքը, ալլ խելճ, աղքատ և չնչին գեղջուկը,—իւր մէջ պահում է ալլքան վսեմ, ալլքան թանկագին հոգեկան գանձեր... Նորա բնաւորութեան անխաղախ պարզութիւնը, նորա մտաւոր և բարոյական ուժերի ստատիկ կանոնաւոր հետեւողականութիւնը, նորա զգացմունքների աշխուժ թարմութիւնը, որ զարմանալի ներդաշնակութեամբ միացած, ամրացած են նորա մէջ՝ բնութեան զօրեղ ուժերի ազդեցութեամբ,—չառ նման են մի վայրենի բուսած և ծաղկած շուշանի, որ ինքն էլ չը գիտէ թէ՝ որքան չքեղ ու փարթամ են նորա ծաղիկները, որպիսի քաղցր անուշահոտութիւն են պարունակում նորա ծաղկի իւրաքանչիւր թերթիկները: Ալլ բոլորը առաջ են կիկ ինքն ըստ ինքեան, ակամաջ, առաջ են կիկ, որով-

հետև նախախնամութեան անքննելի տնօրէնութիւնը աղպէս է կամեցել... Եւ ալս է պատճառը, որ գիւղացիին ալնքան հաստատ, ալնքան տմուր և ուժեղ է իւր հոգեկան ընդարձակութիւնների մէջ, ալս է պատճառը, որ մենք հեռուից նայելով գիւղացուն՝ զարմանում, հիանում ենք նորա բարոյական ուժի, կորովի վրայ: Այդ բարոյական ուժը, ալս կորովը բնութիւնը սերմանած և բուսցրած պտուղն է, զորանում խառը է մարդու անկատար և թող ձեռքի աշխատանքը: Ահա աղպէս է հասկանում Գլ. Ուսպէնսկին գիւղացու բնասորութեան առաջ զալը, աղպէս է մեկնում նա գիւղացու բարոյական ուժի և տոկունութեան կազմակերպելը: Հողի իշխանութիւն տանելով՝ չը պէտք է հասկանալ միայն հողը, արալ... Այստեղ միայն զխաւոր դեր խաղացողը հողն է, որովհետև նա է կապում, ամրացնում գիւղացուն բնութեան հետ, նորա տարրերի և օրէնքների հետ: Հողը և երկրագործական պարապմունքը երես առ երես են դնում գիւղացուն բնութեան հետ. իսկ մնացած բոլոր փոխիւթութիւնները լնքնաւորութեան կատարում են՝ շատ զանազանակերպ հանգամանքներից ու պատճառներից զրդւած:

V

Ուրեմն պարզ է հողի, երկրագործական պարապմունքի նշանակութիւնը գիւղացու համար: Հողը հարկաւոր է գիւղացուն՝ ոչ միայն իրրի տնտեսական փակտոր, ալև իբրեւ բարոյական, զատիարակչական միջոց, իբրեւ մի «դպրոց», որտեղ սերնդաբար կրթւում, ազնւանում է իւր մտաւոր և բարոյական ուժը, կարողութիւնը: Եւ ալս է պատճառը, որ ամեն տեղ և ամեն ժամանակ՝ գիւղացին ալնքան սերտ, իղէալական կապերով միացած է իւր ցանած, մշակած հողի հետ, որ նա երբէք չի համաձայնի բաժանել իւր հողից ու ելթէ, զանազան ստիպող հանգամանքներից ծնւած՝ բաժանելի էլէ—ալդ բաժանումը շատ ծանր կը լինի նրա համար... Եւ ալս ստում եմ, առհասարակ՝ ամեն երկրի գիւղացու համար, որովհետև հողի և գիւղացու մէջ եղած կապը ընդհանուր է, ամեն տեղի, ամեն ազգութեան համար: Գիւղացին ամեն տեղ գիւղացի է, հողի և առհասարակ բնութեան ազդեցութիւնը ամեն տեղ միևնույն է երկրագործի վերաբերութեամբ: Այս կարծիքի հետ համաձայն է և Ուսպէնսկին:

Եւ խնդրում եմ ընթերցողից չը չփոթել՝ գիւղացու բնասորութիւնը, նորա ընդհանուր բարոյական կազմը (нравственный склад), նորա ունեցած քաղաքական սովորութիւնների և զաղափարների հետ: Ֆրանսիացի երկրագործ—գիւղացին՝ իւր ընտանեկան, հասարակական սովորութիւններով ու զաղափարներով՝ ի հարկէ տարբերում է օր. հալ գիւղացուց: Բայց մեր խօսքը աչտաչ գաղափարների ու սովորութիւնների վրայ խօչէ. մեր խօսքը գիւղացու հոգեկան ուժի մասին է, նորա մտաւոր—բարոյական ամրութեան, անկեղծութեան, ներդաշնակութեան վրայ է: Այդ

կողմից՝ թէ ֆրանսիացի թէ գերմանացի, թէ առա, թէ հաղ և թէ առհասարակ ամեն տեղացի, երկրագործ—գիւղացիներ թողորովն նման են իրար։ Նման են, որովհետեւ նրանք թողորն էլ միևնույն պաշտանների, միևնույն ուժերի և օրէնքների ազդեցութեան տակ են գաստիարակւած. միևնույն հողը, ջուրը, օդը, անտառը, արեւը, քամին, անձրեւը՝ իրանց անփոփոխ ուժերով, լատիւթիւններով ու երեւոթներով՝ չբնապատում են ամեն տեղի և ազդութեան պատկանող երկրագործին, նորա աշխատանքի ժամանակ, նորա կեանքի բոլոր հոգսերի և զբաղմունքների ժամանակ։ Եւ զարձեւալ կրկնում եմ՝ հողը լոկ նիւթական ապրուստի համար չէ պէտք գիւղացուն. գիւղացին, որ անքան կապւած է իւր հողի հետ, լոկ արնտեսական հաշիւներով ու գաստղութիւններով չէ առաջնորդւած ալդ բանում։ Իբրեւ ապացոյց, թէ ի՞նչ աստիճան դժուար է գիւղացու համար բաժանել հողից, և թէ որքան թանգ է նստում նորա վրայ ալդ բաժանումը. ես դարձեալ մասնացոյց եմ անում Գլ. Ուսպէնսկու բաղմաթիւ նկարագրութիւնների ու պատկերների վրայ, որոնց մէջ հիւսնալի ճշտութեամբ դուրս է բերւած ռուս գիւղացու բարոյական պատկերը հողից դուրս, երկրագործութեան ազդեցութիւնից հեռու։ Տնտեսական սաստիկ նեղ հանգամանքները ստիպում են ռուս գիւղացուն թողնել հողը և գնալ քաղաք, գնալ մօտակալ գործարանը կամ երկաթուղու կայարանը գործ ձգելու, փող աշխատելու։ Քիչ դժարութիւններից փոքր ալդ բանը աջողւում է գիւղացուն։ Սկզբում կարծես թէ նա շատ բաւական է իւր գրութիւնից, փողի համեմատական առատութիւնը, կեանքի զանազանակերպութիւնը, ղեկորացիալի նման շուտ շուտ փոխւող հանգամանքները... ալդ բոլորը մի առժամանակ գրաւում, շրջնում են գիւղացուն։ Բայց նա շուտով է հիատթախւում ալդ բաներից. քաղաքալին կեանքի ցիւր և աղականութիւնը սկսում է քիչ քիչ անտանելի դարձնել նորա համար նոր կեանքը, նա սրտանց էլի դառնում է գէպի գիւղ, էլի սկսում է մտաբերել իւր հողը, եղները, արար և արօրը։ Այս նոր հանգամանքների մէջ՝ գիւղացին սկսում է որոնել իւր տաւալալ հողեկան մաքրութիւնը, անարտառութիւնը, իւր մտաւոր և բարոյական հարմոնիան. նա սկսում է ասնջւել հողեպէս, սկսում է տիրել, մտածել, երեւկալել... Եւ ալդ նորա հողեկան տանջանքները ստաջ են գալիս միայն նորանից, որ գիւղացին իւր նոր կեանքի մէջ էի գտնում այն կենսական բնդհանուր ճշմարտութիւնը, այն անկեղծ և պարզ առաքինութիւնը, որով նա սնւել, գաստիարակել մեծացել է, որի մէջ նա ամրացրել, կազդուրել է իւր մաքի և հոգու բոլոր ուժերը։ Նոյն բանը կարելի է նշմարել և հալ գիւղացու մէջ՝ երբ նա թողնելով գիւղը, գալիս է Թիֆլիս, Բագու, Բաթում և ալ առևտրական կենդրոնները՝ փող գատելու «Հալ Գիւղացու սե օրը»... Այս խօսքերը գատարկ խօսքեր չեն, սրբա կենսական—ճակատագրական միտք ունեն հալ գիւղացու համար։ Ափսոս, որ պ. Սելիք-Շահնագարեանը իւր ալդ գեղեցիկ պատկերի մէջ

Համարեա ուշադրութիւն չէ դարձրել Բագուստ աշխատող պանդուխտ գիւղացիների հոգեկան աւելի խոր, աւելի արժեւ փոթորիկների և կռիւների վրայ, Բագուսի գործարտեում աշխատող, մշակութիւն անող հալ գիւղացու թշուառութիւնը, նորա (սե օրը) առաջ է դաշխ ոչ թէ նրանից, որ աղ գիւղացիները հեռացած են իրանց ընտանիքից, իրանց բարեկամներից և աղակտաններից. աղ գիւղ ալեքան մեծ թշուառութիւն չէ, Գլխաւոր թշուառութիւնը նրանումն է, որ հալ գիւղացին, իւր պանդխտութեան մէջ, իւր աղ նոր կեանքում՝ կորցրել է իւր առաջաւ պարզ, առաքինի և անկեղծ կեանքի թիւը, որ ալտեղ նա տանջւում է բարոյապէս, նա իւր խզի, իւր բարոյական զգացմունքների կորուստն է ողբում։ Այս կէտի վրայ պէտք է առանձին և իւր ուշադրութիւն դարձնել, ի հարկէ սպէտ և անուշում գիւղացին չը գիտէ արտադրուի իւր աղ հոգեկան անբաւականութիւնը՝ մեղ ամենիս հասկանալի ձեով ու եղանակով, նա ինքն էլ չի հասկանում իսկապէս՝ թէ ինչ է իւր տիրութեան բուն պատճառը։ Միայն նա զգում է, օրգանական կերպով զգում է, որ աղ կեանքը, աղ քաղաքային խառնակ, անկանոն, ասլականւած կեանքը (անարգար), մոլորիցնող կեանք է, նորա կանոնները, սովորութիւնները և աղ ակն իւր «Աստուծուն հաճելի չեն», — не по-божески, — ինչպէս ասում է Ուսպենսկին։ Խօսեցեք փորձի համար, Թիֆլիզի, Բագուսի, Կոտանդինապոլսի և ալ գլխաւոր կենդրոնների աշխատաւոր մշափ հալերի հետ. հարցրեք նրանց կեանքի, աղ բուստի մասին, — և դուք կը նկատէք, որ պանդուխտ գիւղացին մի քանի խօսքից կտող՝ մտաբերեց իւր գիւղը, իւր երկրի «հոջն աւ ջուրը», իւր մամլաքեռովը, իւր գութանը, իւր եղները, իւր կնոջը, զաւակներին և ալն և ալն, մէկ խօսքով գիւղի երկրագործական կեանքը՝ իւր բոլոր մանր ու խոշոր սրարազաներով։ Աւ ամենից հետաքրքիրն ալն է, որ նա հաւաստաւորապի սիրում է ամեն բան, ինչ որ գիւղին է վերաբերում, ինչ որ կապւած է երկրագործութեան հետ։ Սիրելով հողը, երկրագործութիւնը՝ գիւղացին միևնոյն ժամանակ՝ ամենաքնքշ զգացմունք է տածում և զէպի ալն բոլոր առարկաները, որոնք օգնում, նպաստում են նրան իւր աշխատանքի մէջ, որոնք մասնակցում են նորա ուրբը և ալնիւ գործին։ Ո՛րքան անկեղծ և սրտաշարժ է գիւղացու սէրը՝ դէպի պառուած ամակտար եղը, որ ալնպէս՝ գեղեցիկ դուրս է բերւած «Մինասի եղը» վերնագրով հիանալի պատկերի մէջ (Տես «Մուրճ» № 1, 1891 թ.)։ Այն ընթերցողը չէ կարդացել՝ թող կարդա ալ Ա. Նամալեանի աղ փորձիկ պատմութիւնը. թող կարդա և համոզի՝ որ հալ գիւղացին, իրաւ, գիտէ սիրել իւր աշխատանքը, գիտէ խէլալականացնել աղ աշխատանքի հերոս՝ կանը

Ես մատուղ եմ եղանը՝

Որ կը պահէ իր իշխանը.

Առտուած էլի զըւամի տալ:

Մեր աճաբար կղանը:

Այսպէս է գտնում հալ գիւղացիին իւր եղանքը, և ով կարող է կասկածել, որ աչք խօսքերը արտադրում են գիւղացու ամենաջիւր և անկեղծ սիրտը զգացմունքը՝ ղէպի իւր աշխատանքի ընկերը, ղէպի իւր ամենամօտ և հաւատարիմ բարեկամը... Ա. Նամակեանի գրած աչք պատկերը—«Մինասի եղը» մի փոքրիկ, բայց թանկագին ակն է մեր հալ գիւղացու կեանքին վերաբերեալ գրականութեան մէջ, մի աչքայիս ակն, որ իւր մէջ ցոլացնում է ամբողջ ժողովրդի, երկրագործ ժողովրդի՝ հոգեկան աշխարհը, նորա բարոյական ազնիւ և անխաղախ կեանքի ճշմարտ, խկական գոյնը, աչնսկէս, ինչպէս, որ փոքրիկ աղամանդը ցոլացնում է իւր մէջ ամբողջ արեղակի պատկերը:

Գ Ր Ա ի Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Հեղինակ ? — «Լ.Ի.Թ.Կ.Մ.Ի.Ո.Ր.», ըստ Շէքսպիրի: Ժողովրդական ընթերցանութեան համար փոխադրեց օրիորդ Շ. Տէր-Նիկողոսեան (երկու պատկերով): Թիֆլիս, տպարան «Արօր» Նաղարեանի, 1891 թ., փոքր քառաձալ, 38 երես, տառ № 12, գինն է 3 կոպէկ:

Վերջին ժամանակներս սկսել են զաճախ երևալ թարգմանական և ինքնուրույն հրատարակութիւններ ժողովրդական ընթերցանութեան համար. աղբիւրներ կատարուած է թէ առանձին մարդկանց, թէ հաւաքական ուժերի: ձեռնարկութեամբ: Աղբիւր տարակութիւնների նպատակն է տարածել ժողովրդի մէջ տարրական գաղափարներ և շարունակել նորա սրբութեամբ բարի և աղին զգացումներ. աղ նպատակին է հետևում և նորիւրումս լոյս տեսած «Վիր թագաւոր» գրքակիր:

Շէքսպիրի «Վիր թագաւոր» ալն գրածներից է, որոնք իրանց ներքին խմտաւոր և բովանդակութեամբ մատչելի են թէ մեծին թէ փոքրին. լաւնարձակ և խոր աշխարհայեցողութեամբ աշտուղ պարզւած են ծնողական և օրդիական շարաբերութիւնները իրանց լուսաւոր և ալանդակ, խաւար կողմերով, և ալս արաղելիան, լալանի շէքսպիրիստ Դոսու-

դէնի կարծիքով, «հիւսիսալին հանձարի ամենաւարձը և ամենաբանատեղծական արտադրութիւնն է»: Բնագրին մօտիկ և բաւականին լաւ ջող թարգմանութիւնը մենք տնինք արդէն պ. Մ. Մալխասեանի շնորհիւ:

Բալց ահա մեր ձեռքի տակ և «Վիր թագաւոր» ժողովրդական ընթերցանութեան համար: Այս գրքը, մենք համուշած ենք, սիրով և հաճութեամբ կը կարդայելի, մանաւանդ որ թարգմանութիւնը կատարւած է թեթի և մատչելի լեզուով: Չնչին փոփոխութիւններով նա թարգմանւած է ռուսերէն հրատարակութիւնից, որ օժտւած է, որքան վիշում ենք, 7—8 պատկերներով. իսկ ռուսերէնը թարգմանւած է անգլիացի Լամբից, որ լալանի է, իբրեւ Շէքսպիրի գրածների պատմող: Հալերէն հրատարակութեան կցել տուի լալող և թւով շատ պատկերներ երևի անկարելի է եղել զուտ արտաքին պատճառներով, կարելի էր բաւականանալ միայն ա-

ռաջին պատկերով, որովհետև երկ-
րորդը մենք համարում ենք անպատշաճ,
քան չ'արտապատշաճ։ Մի նկատողու-
թիւն եւս։ Ինչպէս ասացի, այս գրք-
քովը թարգմանւած է Վամբի պատ-
մածի ռուսերէն հրատարակութիւնից.
ինչու ռուսն գրքովի երեսի վերայ

չը վիշատակել Վամբի անունը, փո-
խանակ գրելու «ըստ Շէքսպիրի»,
«փոխադրութիւն» — բառեր, որոնք
միայն տարակուսանքի առիթ են
տալիս։

Մ.

ԼէՅ. — «ԴԱԻԻԹ ԵՒ ՄՀԵՐ» (Ժողովրդական վէպ). Քննադատութիւն.
Արտատպած «Գրականական և Պատմական Հանդիսից»։ Մոսկւա. Տպա-
րան Մկրտիչ Բարխուդարեանի, 1891, Միջին զիրքով. 41 երես.
տառ № 12, գինն է 15 կոպէկ։

Պր. Լէօն երկու գրքովը կարգաց-
ւում է մեծ հաճութեամբ։ Նա հար-
կաւոր գրքովի էր և նորա երկան
դալուն պէտք է շատ ուրախ լինել։

«Դաւիթ և Մհեր»-ը հալ ժողո-
վրդական վէպի մնացորդներից մէկն
է։ Նա սլաւոնում է Սատունի գիւ-
ղական ժողովուրդի շրջանում շատ
հին ժամանակներից և հասել է մինչև
մեր օրերը, պահպանելով իւր մէջ հին
վէպի ոգին և կազմութիւնը և մա-
սամբ փոխիւթած դանաղան ժամա-
նակների ազդեցութիւնից։

Սատունական վէպից առաջմ
չալանի են երկու մեծ կտոր, որոնցից
մէկը գտել է հայր Գ. Սրուանձտեանը,
իսկ-միւսը պ. Մ. Աբեղեանը։ Սրուանձ-
տեանի դառն կտորը չալանի եղաւ
1874 թին «Սատունցի Դաւիթ կամ
Մհերի Գուռ» անունով, իսկ Մ.
Աբեղեանինը 1889 թին «Դաւիթ և
Մհեր» անունով։

Լէօն գրքովը վերաբերում է այս
վերջին հազներգութեան։ Այս կտորը

գրւած է տեղական բարբառով և հա-
սարակ ընթերցողների համար իբրեւ
ընթերցանութեան առարկալ դժա-
րութիւններ է ներկայացնում։

Լէօն պատմում է մեզ վէպը իւր
խօսքերով և աշխատում է լուսա-
րանել վէպի մէջ պարունակող անց-
քերի և երեւոթների էութիւնը և
նշանակութիւնը։

Նիթ ընթերցողը համաձայն եւս
չը լինի Լէօնի հալապքներից մի
քանիսի հետ, այնուամենայնիւ. նա
մեծ հետաքրքրութեամբ կը կարդալ
գրքովը և կարգացածի մէջ կը գտնի
կէտեր, որոնց վերալ կանդ կ'առնի
ուշադիր լինելու ժողովրդական ալդ
տեղիւմագործութեան առանձն աշատ-
կութիւններին։

Թէև գրքովը անւունւած է քննա-
դատութիւն, բայց նորա գլխաւոր
արժանաւարութիւնը մեք համարում
ենք ալն խելօք ձևով պատմու-
թիւնը, որ արել է հեղինակը։

Իբրեւ քննադատական մի գրւածք

Նա կարօտ է աւելի մանրամասն մշակութեան: «Գաւիթ և Մհերը» արժանի է լուրջ ուսումնասիրութեան և համեմատական քննադատութեան: Այն ակնարկները, որ անում է պ. Աֆան Ֆրիդլանդը Շահ Նամէլի հերոսի վերաբերմամբ, չափ են թուցիկ և պատահական: Պ. Աֆան հակառակ է կարծելու, որ մեր վէպը ինքնուրույն է և պարսկական Բուստամիայի արձագանքը չէ: Թէև այդ կարծիքը հաւանական է, այնուամենայնիւ պահանջում է ուսումնասիրութեան վերաջ հիմնում հզորակացութիւն: Աֆան փորձում է լամենալն դէպք համեմատել Մհերին և Ռուստամին միմեանց հետ՝ իբրև մեծ դիւցազնական ոգի (թէև տարբեր լատիւթիւններով), իսկ աւելի լատ կը լինէր՝ եթէ համեմատութիւնը մնար Գաւիթի վերաջ: Առանձին-առանձին առած՝ գուցէ Պարոն Աստղիկին կարելի լինէր մօտեցնել մասնամբ Զոհրարին, Սառիւղին—նմանեցնել Կելիաուսի երկրորդական կին Սուգարէին, և այլն: Մհերը ըստ երևութիւն ինքնուրույն դիւցազն է, աւելի հին ծագումով և

վստի է խառնել տեղակոն հերոսներին հետ:

Այս համեմատութիւնները գուցէ որոշէին Շահնամէլի և մեր ժողովրդական վէպի մէջ եղած նմանութիւնը (եթէ նա էական է և ոչ պատահական) և տալին մեզ կարողութիւն—ընդհանուր իրանականից—դտելու բուն հայկականը և տեղական պատմականը:

Ըստ երևութիւն Սասունականի (Սասունիադա) հիմքը կազմում է տեղական պատմութիւնը, որի մէջ ծծւել է հին գուսանական դիւցազներգութիւնը: Թողնելով զխնական քննադատական հետազոտութեան մասին մեր խօսքը մի շարմարաւութիւն—այժմ պ. Աֆանի դրքուկի վերաբերմամբ՝ լայնենք ցանկութիւն, որ նա գտնի ընթերցողների մեծ շրջան մեր հասարակութեան մէջ:

Վստ չէր լինիլ, եթէ մէկը փորձ փորձէր Գաւիթ և Մհեր վէպը աւելի հասարակ և դիւրամատչելի լեզուով տար մեր ժողովրդին—առանձին ամանակին գրքովիով:

Ք.

ԿԱՐՄԷՆ ՍԻՆՎԱ (Նդիսաբէթ, Թագուհի Բումինիոյ) «ՕՄՈՒՆ» մանկական վէպ, Թարգմանեց Գրիգոր Շահբուղաղեանց:

Ի՞նչ կ'ասէիք մէկին, որը տեսնելով խեղդողին և ձեռքի տակ ունենալով նաև փրկելու միւս գործիքները, դէն չպոտէր այդ բոլորը և ինքն նետէր կատաղի հոսանքի մէջ, խեղդողին փրկելու համար. չէիք ասիլ, որ նա անմիտ է վարում, որ նա չէ օգտուում իւր ձեռքի տակ

եղած միջոցներից իւր մերձաւորին փրկելու համար: Աւելի խիստ չէիք գատապարտիլ մի արքայազնի, որը սաստիկ ծարաւ ունենալով թեթեացունէլ տառապեալներին և թշուառների վրձակը, թողնում է հալոհնական տունը և զորա հետ միասին ապագայում Թագաւոր լինելու ցոյսը և հա-

տարակ մարդու անունով դրադուում է ալսպիսի գործերով, ինչպիսիքն են. օգնել մի պառաւ կնոջ՝ նորա ծանր բեռը տուն հասցնելու, խնամել վիրաւորւածին, իբրեւ բանւոր օգնել աղքատ գիւղացիներին, բժշկել հիւանդներին և այլն: Չէ որ մնալով թագաւորանդ և ժամանակով դահի հասնելով՝ նա կարող էր անհամեմատ մեծ չափերով խնամք տանել հիւանդների, ծերերի, աղքատների և այլ սրանց նման թշուառների մասին, առաջ բերելով համապատասխան հիմնարկութիւններ. ով ցանկանում է օգնել իւր մերձաւորին, նա իւր իշխանութիւնը, զիրքը պիտի միայն ծառայացնէ այդ նպատակին, և ոչ թէ հրաժարւի նորանից, բացի ի հարկէ այն հանգամանքներից, երբ զրանք արգելք են լինում նպատակին հասնելու համար: Ալսպիսի մի արքայազնէ գրքի հերոսը:

Բայց եթէ երևակայենք, որ գրքի հերոսը մի արքայազն չէ, այլ մէկը, որը իւր ձեռքի եկածով աշխատում է թեթևացնել տառապելաների վիճակը, մենք կը տեսնենք, ինչպիսի ինքնազոհութեան ընդունակ է մարդկային բնաւորութիւնը, երբ նա տողորւած է սիրով դէպի իւր թշուառ եղբայրը, դէպի իւր մերձաւորը և իբրեւ

մի ալսպիսի անձնաւորութեան պատկեր, աչս զիրքը կունենալ իւր բարոյական ազդեցութիւնը ընթերցողի վերայ: Կասկածելի է միայն, թէ որքան մի ալսպիսի անձնաւորութիւն հասկանալի կը լինի մանուկներին. մեզ թւում է, թէ մանուկներին հասկանալի կարող է լինել ծնողական, որդիական, ընկերական սէրը, բայց ոչ սէր դէպի մարդը առհասարակ: Երբ մէկը ալսպիսի սիրով ոգևորւած գործում է, ուշք չ'դարձնելով մարդկային ապերախտութեան, անձնական թշուառութեան վրայ և իւր վարձատրութիւնը իւր խղճից սպասելով:

Բայց չը նայած դորան, գրքովը կարող է հետաքրքրութեամբ կարդացւել. գոնէ Ռուսաստանում արւած փորձը այդ է ցոյց տալիս: Մանուկների չըջանում այդ հեքիաթը կարդալուց չետ, լսող աղջիկներից մէկը բացականչել է՝ «կարծեմ մենք երբէք ալսպիսի լաւ հեքիաթներ չենք կարդացել», իսկ միւսը՝ խելօքներից ասել է՝ «ես կ'ուզեմայի, որ այդ պատմութիւնը երբէք չ'վերջանար» (Համեմատէք «Что читать народу», հատոր II, Երես 401):

B.

ՌԱՅՆԱ ԴԵՐԳԻԵԻՍԵԻ իՆԻՏԱԿԵՆՍԱԿՐՈՒԹԻՒՆԸ (կրճատութեամբ [Ժարգմանւած]: Մոսկւա. տպարան Մկրտիչ Բարխուդարեանի, 1891. փոքրադիր ութածալ 67 երես, տառ. № 12, գինն է 5 կոպէկ:

Աչս փոքրիկ ինքնակենսագրութեան մէջ արձանագրւած է բուլղար ժողովրդի իւր վերակենդանութեան համար արած ճիգերի պատմութեան

մի սրտածմլիկ էջը: Ռաջնա Գէօր-
գիւեան եղել է մի վարժուհի, որ
լաւ հասկացած լինելով կրթութեան
նշանակութիւնը բուլղար ժողովրդի
համար, ներած է եղել իրան առ-
միշտ դպրոցին: Բայց ահա մի կող-
մից ներցեղովինալի լատնիդէպքերը,
միւս կողմից բաշխուողներին և
չերքեզներին նոր կատաղի լարձա-
կումները, բռնել են տալիս աչն
կաջը, որ բուլղարների սրտում
մնացել էր հինգ դար շարունակ իբրեւ
ազատութեան կարօտ և որ վարդա-
նալու ներթ էր ստացել նոր երի-
տասարդութեան քանքով: Վարժուհին
լետ չէ մնում ընդհանուր գործից:
Նա դառնում է կենդանի օրինակ
այն բանի, ինչին պէտք է ձգտելին

նորա սանիկները ապագայում, իբրեւ
բուլղար աղգի զաւակներ:

Թարգմանութիւնը կատարւած է
բաւականին լաջող. գիրքը կարգաց-
ւում է գիւրութեամբ: Նա հասարակ,
անպաճաճ, միևնույն ժամանակ պրա-
ւիչ մի պատմածք է, որ ունի իւր
մէջ ուսանելի կողմեր: Գրքոյկի
իրեւ գրական հեղինակութեան՝ պա-
կասութիւնները մոռացւում են շնոր-
հիւ նորա բովանդակութեան, շնորհիւ
այն կենսական խնդիրներին, որոնց
հետևում է ընթերցողը: Գրքոյկի
թուղթը ափսոս չափ է բարակ. այդ
պատճառով ընթերցանութիւնը փոքր
ինչ զժւարանում է: Գինը չափ չա-
փաւոր է և ժողովրդին մատչելի:
Փլ.

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ քահանայ. — Սոխակ:

2) «ՀԱՆԳԻՄ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ, գիրք չորրորդ, հրատա-
րակութիւն Մկրտիչ Բարխուդարեանցի»: Մոսկւա, 1891, տպ. Մ. Բար-
խուդարեանցի, գինն է 2 ռ.:

3) ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ. — «ԱՆԱՀԻՏ»: Թիֆլ. տպ. Նազարեանցի, 1891,
գինն է 15 կոպէկ:

4) «ՄՈՒՍԻՆԵԱՆՑ, Մկրտիչ». — Շերամապահական խրատներ: Արտա-
տուած «Մշակ» լրագրից: Հրատարակ, Յ. և Մ. Մուսինեանցների Սերմա-
տան: Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանի 1891, գինն է 7 կոպ.:

5) ՌԷԿԼԻԻՑ, Էլիզէ. — «Ռուսական-Հայաստան» կամ «Արաքսի աւա-
զանը», Ուրմիա լիճ և Առաջուոր Ասիա: Թարգման, Միաբան Վաղարշա-
պատ, տպ. Սուրբ Կաթ. Էջմիածնի, 1891 թ., գինն է 30 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ահա մեզ մօտ միաժամանակ հիւրեր են երեք փաշուն աստղեր ար-
տիստական աշխարհում՝ տիկին Ժիւզիկ, օր. Նիկիտան, պ. Ռադէշնաուէր:
Վերջինիս Թիֆլիսի և Բաքւի հասարակութիւնները ծանօթ են երկու-երեք
տարւանից դէս, իսկ առաջինները առաջին անգամն են ոտք դնում Ալփ-
կասի մալրաքաղաքը: Այդ երեքից որի վերաջէ ամենից շատ լարւած հա-
սարակութեան ուշադրութիւնը, մի փոքր դժւար է ասել: Սկզբում անկաս-
կած Ժիւզիկն էր ամենից գրաւիչը: Բանն այն է, որ տիկին Ժիւզիկը դա-
ւիս է մեզ մօտ երբ նորա մասին ամենքը վաղուց լսել են, թէ օպերետի
թագուհին է, և մինչդեռ Նիկիտան և Ռադէշնաուէր երկուսն էլ ասպագային
են պատկանում, տիկին Ժիւզիկը արդէն իւր արտիստական աստղարկի
արեւմուտքին է հասել. մի քանի տարիներ ևս—և նա միանգամայն կը հե-
ռանալ աստղարկից: Նա արդէն մօտ 45 տարեկան կին պէտք է լինի,
մինչդեռ նորա խաղացած դերերը մեծամասնաբար սիրտհար ջանքի ազ-
ջիկներ են ներկայացնում: Եւ այն դերերից որ նա կատարում է, շատերը
ստեղծւած են չափով նորա, տիկին Ժիւզիկի համար, երբ նա, զլիսաւո-
րապէս Խոթանաճական թեատրոններին, զիւս ևս երիտասարդ էր և Պա-
րիզի Variété (Վարիետե) թատրոնի ուժեղ մագնիսն էր: Variété թատ-
րոնի համար Ժիւզիկը այն էր, ինչ Comédie française թատրոնի համար
Սարա Բերնարն էր: Այժմ այդ երկուսն էլ թափառում են, մէկը, Սարա
Բերնարը՝ Ամերիկայում, Ժիւզիկը՝ զլխաւորապէս Արեւելեան երկիրներում:
Նգիլափոս, Կ. Պոլիս, Թիֆլիս և այլն: Պարիզի համար նա արդէն ժամա-
նակը այգեկացրել, բայց և այնպէս տաղանդը մնացել է, վարպետութիւնը
կատարեալ է: Եւ առիթ ունեցալ այս անգամ նորան տեսնելու Ռուսոս,
Լիւրի, Նինիշ և Նիտուշ պիեսներում: Բացի Նինիշից, որը անմիտ պիես է,
բոլոր մնացեալներում տ. Ժիւզիկը աննման է խաղում: Այդ չորսից Ռու-
սոսը (Շիկահէր) ըստ իս ամենից լաւ պիեսն է, ապա Լիւրի և փոքր միայն
Նիտուշ: Լիւրի դերը մէջ ևս տեսել ևմ տ. Ժիւզիկին տաճերկու

տարի առաջ, Պարիզի վերին տէ թատրոնում, երբ արտիստուհին դեռ եւ իւր փառքի աճման չբջանումն էր: Անկասկած է որ ժամանակը իւր զրօշմը կնքել է նորա վերաջ: Բայց և աչնպէս տաղանդը մնացել է: Գովել աչ տաղանդը ինձ չի պատկանում. ամբողջ աշխարհը արդէն դատել է նորոն: Եւ եթէ ես աչնու ամենաչնիւ կանդ եմ առնում նորա վերաջ՝ աչդ ոչ թէ տ. Ժիւզիկի փառքի վերաջ մի վկայութիւն ես առելցնելու համար է, աչ միաչն մի ցանկութիւն՝ բնատուրչելու նորա տաղանդը և արժանիքը, միաժամանակ և սլարտք կատարելու ընթերցողներին առջև: Թեթիս սէր— ահա տ. Ժիւզիկի ժանրը. բայց կոմիկական դերը մի աչդ տեսակ թեթիս սիրոյ՝ արտապատել սլարդօրէն, ճիշդ չափով, քնքշութեամբ, հումորով և հաւասար թեթիւութեամբ— ահա տիկ. Ժիւզիկի մեծ տաղանդը: Այսպէս նա չի անում— և ինչ կատարում է՝ անում է կատարելութեան տպաւորութիւնը թէ խօսելու, թէ չարժեւելու և թէ երգելու մէջ: Երբ հարկաւոր է նա մի ջաշէլ անմեղ աղջիկ է, աշխարհքից անտեղեակ. երբ հարկաւոր է նա մի կոկոտ կին է ամենաբարձր չրջաններին. երբ հարկաւոր է մի պառաւ կին է բարոյականութեան դասեր տուող: Նորա երգերը— շանսոնետներ են, օպերետալին երգեր. ունենալով լեզւի աննկարագրելի ճկունութիւն— նա, երգելով աննման կերպով արտապատում է սրաչն մարդկալին ծաղրելի թուլութիւնները, նուչնպէս և զանաչան գրութիւնները:

Տիկին Ժիւզիկի խաղացած օպերետները մի առանձին տեսակի են: Օպերետներին մէջ էլ կան լուրջերը, կան և թեթիւները: Ժիւզիկի համար գրւածները— հէնց աչ թեթիւներին են: Եւրջ օպերետներին մէջ մուղիկան առաջնակարգ տեղ է բռնում. աչտեղ արտիստը՝ երգիչն է և երգչուհին, ինչպէս և օպերային մէջ: Օրինակ Կարմենը— օպերետ է, և Կարմենին դերը կատարողը անպատճառ պէտք է մշակած լաւ ձաչն ունենալ և երգեցողութեան լուրջ չկողա անցած երգչուհի լինի: Աչ է տիկին Ժիւզիկի համար գրւած օպերետները, ուր երգեցողութիւնը լոկ հատհատ երգեր են— շանսոնետներ, — որոնք ոչ աչնքան ձաչն են պահանջում, որքան մի առանձին տաղանդ՝ երգի կոմիկականը դուրս բերելու: Եւ շատ անգամ աչն, ինչ կաղմում է մի աչղպիսի երգի ձիւքը և հրապուրը, աչդ աչն հուշարն է, որով նա երգի մէջ զգացնել է տալիս մի որ և է պարզ գործողութիւնից առաջացած ձաչն, օրինակ՝ ձաչնը կակալ կոտրելուց, սառը ջրից նոր դուրս եկածի դողողոց, զինւորական փողի ձաչնը, զանգակի հնչիւնը կամ երեխաչի, երիտասարդի, ծերի ու պառաւի խօսակցութիւններ և աչն և աչն: Տիկին Ժիւզիկի համար գրւած օպերետներին մէջ գործողութիւնը առաջնակարգ տեղն է բռնում, աչնպէս որ նորա տաղանդը չափւում է ոչ միաչն շանսոնետներ երգելու կարողութիւնով, աչ դեռ ամենից առաջ խաղի կատարելութեան աստիճանով. իսկ աչդ աստիճանը աչնքան բարձր է, որ աչ ևս քննադատութիւնը խօսք չի գտնում ստելու: Գորա վերաջ է հիմնում Ժիւզիկի տաղանդի հոչակը:

Բայց նկատենք և այս, որ օպերետի ալն տեսակը, որի հետ կատարած է տ. Ժուզիկի անունը, չի կարողացել ցայտմ ստեղծել մի դիմացկուն կլասիկական բեպերտուար: Ալն պիեսները որ նա խաղում է՝ պահպանում են շնորհիվ Ժուզիկի տաղանդի, միմիայն մեծ տաղանդը կարող է ալն դերերը հետաքրքրական դարձնել առանց դիմելու ալն բանին, ինչ ռանգին ալնքան արտապատիչ կերպով անւանում են ПОШЛОСТЬ. եւ տ. Ժուզիկի մեծ արժանիքը ալն է, որ նա երբէք ալ բանին չի դիմում. նորա խաղի արտիստականութիւնը միանգամայն մոռացնել է տալիս շատ տեսարանների ամօթալի բնասութիւնը: Այդ արժանիքը լաւ կը գնահատեն միմիայն նոքա, ովքեր զիտեն թէ որքան մօտ է փորձութիւնը՝ մի քալ ներքեւ անել կաֆէ շանտանական ծափահարութիւններ վաստակելու համար: Տիկին Ժուզիկի հասարակութիւնը սակայն եղել է միշտ տաղանդ գնահատողների հասարակութիւն:

Տիկին Ժուզիկը, որպէս վերը նկատեցի, արդէն քառասունը անց կին է, բարձր հասակով, լիքը կազմածքով, համակրելի դէմքով, խնօք աչքերով, փոքր բայց զուրկական ձայնով:—Իմ հարցմունքին, ունի արդեօք որ և է զրւածք իւր անձնատրութեան և անցեալի մասին, նա պատասխանեց թէ ոչինչ չունի, բայց որ ուրախութեամբ կը պատասխանէր, եթէ ես նրան զրաւոր հարցմունքներ տամ: Սակայն տիկնօջ ալ սիրալիրութիւնից եւ ժամանակ չ'ունեցալ օգտելու ալժմեալ քոնիկիս համար: Եթէ հարկաւոր լինի—մի ալ անգամ:

Տիկին Ժուզիկի աջակիցն է՝ մի տասնեակ դերասաններից բաղկացած խումբը առհասարակ և պ. Գիլիէն մասնաւորապէս, որը տաղանդով կոմիկ է: Գէմքի անմեղ արտապատութիւնը ամենածիծաղելի դրութիւններում—ահա պ. Գիլիէնի ուժը, խաղը սլարդ, առանց չարժի, երբէք չի անցնում հարկաւոր չափը, միշտ զիտակ, մշակւած ձևեր—Գիլիէնի արժանիքներն են: Լաւ պիեսներում հասարակութիւնը գրեթէ նոյնքան հրճում է պ. Գիլիէնի խաղից, որքան հիանում տ. Ժուզիկից: Գովելու արժանի է նաև խաղի անսամբը:

Տիկին Ժուզիկի խումբը ահա արդէն երրորդ տարին է ինչ ճանապարհորդում է: Այդ ժամանակամիջոցում մինչ ալս օրերս խումբը տւել է 100 ներկայացում: Հաստատ աղբիւրից իմացալ որ միմիայն տ. Ժուզիկը, պալմանի համաձայն, ստանում է անտրպրենետի զը Գլադերից ամեն ներկայացման համար 2000 ֆրանկ կամ մօտ 700 լուրի:

ԼՈՒՍԻՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի հետաքրքրական ժամանակ է այժմ: Ոչ քաղաքական մեծ կոմբինեացիաներ, այլ մասնավոր ղեկավարներ են, որ կազմում են այժմ եւրոպական քաղաքական աշխարհի ամբողջ ինտերեսը: Բայց դոքա ինքն ըստ ինքեան մանր ղեկավարներ և իրողութիւններ չեն և շատ բնորոշ են դրութիւնը ճանաչելու համար: Փրանսիայում այն շարժումը որ յառաջացաւ կարգինալ Վալիժէլի հանրապետութեանը յարելուց, նոյն Փրանսիայում մաքսային մեծ ընդհանրութիւն, որով մի առանձին դիրք է ստեղծւում Փրանսիայի համար՝ վերաբերութեամբ բոլոր միւս տէրութիւններին. ապա Փրանսիական նկարիչների մերժումը՝ Բերլինի գեղարւեստահանգէսին մասնակցելու, Իշխան Բիւմարկի և Վիլհէլմ II կայսեր մէջ այժմ իշխող հակառակութիւնը — դոքա բոլորը մի-մի խնդիրներ են, որոնցով զբաղւած է այժմ եւրոպական մամուլը:

Այդ խնդիրներից մի երկուսի մասին խօսելը բոլորովին անյետաձգելի է, որպէս ամուսնայ հետաքրքրութիւնը կազմող նիւթեր: Դոքա են՝ իշխան Բիւմարկի և կայսր Վիլհէլմ II-ի մէջ ծագած հակառակութիւնը և Փրանսիական նկարիչների մասնակցելու խնդիրը Բերլինի գեղարւեստական հանդիսին:

Բիւմարկը հեռացաւ Փրանսիայի կանցլերի և պրուսական մինիստր-նախագահի պաշտօնից ոչ իւր կամքով, այլ երիտասարդ կայսր Վիլհէլմ II-ն էր որ նրան առիթ տուեց իւր հրաժարականը տալու, որ և անմիջապէս ընդունուեց: Այն ահագին ուշադրութիւնը, որ ներքեց եւրոպական մամուլը այդ եղելութեան՝ անշուշտ բոլոր ընթերցողների չիղողութեան մէջն է: Այդ օրից դէս ևս տարին չի

լրացել: Կուսակիցներ թէ թշնամիներ—ամենքը զգացին և վիպեցին, որ Բիսմարկի հրաժարականով կատարուած է մի նշանաւոր պատմական եղելութիւն: Զգացեց, որ մի ինչ որ մեծ ծանրութիւն վերացաւ Եւրոպայի քաղաքական աշխարհից. քառորդ դար շարունակ եւրոպական քաղաքական անցքերը այն աստիճան կապուած էին այդ պետական մարդաւ ձեռնարկութիւնների հետ, որ արդէն դժւար էր թուում առանց Բիսմարկի երեւակահել այժմեայ դիպլոմատիկական Եւրոպան: Բիսմարկը վայելում էր մեծ հեղինակութիւն. և իւր ազգը սովորել էր նայել նորա վերայ, որպէս իւր ապահովութեան ամենամեծ գրաւականի վերայ: Արքան մեծ և համարձակ գործեր էր կատարում նա, բայց ամենքը՝ փորձով համոզւած՝ գիտէին որ նա ի դուր չի անում այդ, գիտէին, որ նա լաւ մտածել է իւր արած քայլի բոլոր հետեւանքները և որ այդ հետեւանքները անպատճառ նպաստաւոր են լինելու իւր հայրենիքի և ազգի մեծութեան և քաղաքական ապահովութեան: Այդ մեծ հայրենիքը ինքն էր ստեղծել. այդ պատճառով էլ նա համարում էր նաև այդ հայրենիքի առաջին քաղաքացին և առաջին հայրենասէրը: Ահա ինչու, չը նայած որ Բիսմարկը իւր ծանրութիւնով դրականապէս անտանելի էր դառել բոլոր կուսակցութիւններին,— չը նայած այդ բոլորին, նա մեծ ժողովրդականութիւն էր վայելում նոյն իսկ ամբողջի մէջ—թէ և շատերը պատրաստ լինէին նրան քարկոծել, այնքան կատաղի էր թշնամութիւնը Բիսմարկի և նորա հակառակորդ և երկար տարիներ ճնշւած կուսակցութիւնների մէջ:

Այդ բոլոր սրտածառներով էլ երբ Բիսմարկը հետացաւ պաշտօնից, թէ և մի մեծ թեթևութիւն զգացեց քաղաքական մթնոլորտում, բայց մի ընդհանուր զգացմունք տիրեց ամենքի սրտերին, որ նորա հետ միասին գնում է նաև մի մարդ, որը դժւար բուսկներում միակն է որ կարող է հանգամանքների տէրը լինել և նրանց տալ այն ուղղութիւնը, որ հարկաւոր է խաղաղութիւնը պահպանելու համար թէ ներքինում և թէ արտաքինում թէ կուղ այդ լինի լոկ գերմանական շահերի տղտակէտից: Եւ այդ, զգացմունքը տարածւեց ոչ միայն գերմանացիների վերայ, այլ և Եւրոպայի վերայ գրեթէ հաւասարապէս. իսկ մասնաւորապէս գերմանացիների աչքում Բիսմարկի անունը կապուած է մի շարք նշանաւոր գործերի հետ,

որպիսին է գերմանական կայսերութեան վերականգումը, կաթոլիկ կղերական ոգււն և իշխանութեան դէմ մղած կռիւը Գերմանիայում; (թէև այդ կռիւը՝ «կուլտուրկամարթի կուլաժ» վերջացաւ զիջումներով պային), այնուհետև Գերմանիայի մաքսային և տնտեսական քաղաքականութիւնը, որով Գերմանիան դառաւ Անգլիայից և Ֆրանսիայից յետ ամենամեծ և Ֆրանսիային դրեթէ հաւասար արդիւնաբերող և առևտրական երկիրը. նոր նաւատորմիդ ստեղծելը և կոլոնիաներ ձեռք բերելը և այդպիսով խոշոր կոլոնիական պետութիւն դառնալը. յետոյ բանւոր դասակարգի օգտին ձեռնարկած մի շարք նշանաւոր և ժամանակի պահանջներին համապատասխան օրէնսդրական հաստատութիւններ ստեղծելը (չպետական սոցիալիզմ), որով Գերմանիան դառաւ և մնում է սոցիալական — քաղաքականութեան նկատմամբ Եւրոպայի ամենաօրինակելի երկիրը (թէև այդ մեծ ընթերցմանը Բիսմարկին յաջողւեց իրագործել կատաղի պատերազմով մի կողմից հին լիբերալների կուսակցութեան դէմ, որ այդպիսի ընթերցմանը չէր ուզում և միւս կողմից սոցիալիստների կուսակցութեան դէմ, որը այդ ընթերցմանը անբաւարար էր համարում, այս զանազանութեամբ սակայն, որ լիբերալների կուսակցութիւնը նա դրեթէ ջնջեց իւր հեղինակութեան ոյժով, իսկ սոցիալիստներին միմիայն առժամանակ լռեցրեց, ստեղծելով յատուկ օրէնք այդ կուսակցութեան դէմ): Աւելացնենք այդ բոլորին վերջապէս նորա քաղաքական ամենախոշոր գործերից մէկը՝ Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի մէջ քաղաքական դաշնակցութիւն կապելը 1879 թւին, դաշնակցութիւն, որի ամենամեծ հետևանքներից մէկը եղաւ այն, որ Ռուսիան կորցրեց իւր ազդեցութեան ոյժը միջին Եւրոպայի վերայ և միւս կողմից Բալկանեան թերակղզու վերայ, ապահովելով այդպիսով Եւրոպական կուլտուրայի ազդեցութիւնը Արևելեան Եւրոպայի այդ մասի վերայ: Այդ դաշնակցութիւնը, որպէս յայտնի է, ուժեղացաւ Իտալիայի մասնակցութիւնով որ և տևում է ցայսօր:

Ահա թէ ինչ մարդ հեռացաւ իւր պաշտօնից հակառակ իւր կամքի: Բնական է թէ ինչու մի տեսակ անորոշ դրութեան և անորոշ ապագայի զգացմունքներ տիրեցին գերմանացիների սրտերին, երբ իմացուեց, որ Բիսմարկի հրաժարականի առիթը տւել է երիտասարդ կայսր Վիլհելմ II: Բնական է նաև թէ ինչու ոգիները

խաղաղացնելու համար՝ երիտասարդ կայսրը բարձրագոյն յայտարարեց, որ «առաջւայ կուրսը կը պահպանուի», այսինքն թէ նա կը շարունակի առաջւայ ձևով կառավարել: Բնական է նաև, որ երիտասարդ կայսրը, արդարացնելու համար իւր արած չափազանց վստահ քայլը, պէտք է աշխատէր իւր կատարած գործերի մեծութիւնով և իւր անձնական աշխուժութիւնով և կենդանութիւնով այնքան աչքի ընկնել, որ մոռացնել տայ իշխան Բիւսարկին: Այդ նպատակին նա մասամբ հասաւ, լինելով ներքին թէ արտաքին քաղաքականութեան մէջ համարձակ, քաջ, յառաջադէմ և ցոյց տալով ղեկավար մարդու շատ յատկութիւններ: Այսպէս, օրինակ, նա վերացրեց սոցիալիստների համար ստեղծած յատուկ կամ բացառիկ օրէնքը, որով սոցիալիստները իրանց պրոպագանդայի համար ստացան իրանց նախկին ազատութիւնը, որպէս 1878 թւականից առաջ: Նա մեղմացրեց անցագրային օրէնքը, որը շատ դժւարացրել էր Փրանսիացիներին մնալ Էլզաս-Լոթարինգիայում: Իւր վերայ վերցնելով թէ սոցիալիստների դէմ մարտնչելու և թէ բանւորներին զոհացնելու հոգսերը, նա մի կողմից զուսմարեց Բերլինում «կոնֆերանցիան բանւորական խնդրի համար», միւս կողմից ծրագրեց միջնակարգ դպրոցների ընթերցմը՝ դիւստորապէս այն մտքով, որ դպրոցական աշակերտներին աւելի սերտ կերպով կապէ նորագոյն Գերմանիայի պետական պատմութեան հետ, սիրել տալու համար նոր ժամանակւայ ձևւք բերած քաղաքական, սոցիալական և ազգային հաստատութիւնները, և հէնց զորանով յետ կանգնացնելու համար նոր սերունդներին՝ սոցիալիստների յեղափոխական ոգուց: Այնուհետև հակա-հրէական շարժման պարագլուխ պալատական պատուոյ յայտնի նտեօկերի արձակումը, որին տեղահան անելու համար Բիւսարկին ևս ապարդիւն կերպով աշխատել էր, կոմս Վալդիբրգէին հեռացնելը գլխաւոր շտաբի կառավարչի պաշտօնից, մինչդեռ կոմսը յայտնի էր պատերազմական կուսակցութեան պարագլուխ: Արտաքին քաղաքականութեան մէջ ևս Վիլհելմ II կայսրը յաջողեց երևակայութիւնների վերայ ազդող քայլեր անել. նորա այցելութիւնը ռուսաց թագաւոր կայսրին, տեսակցութիւնը Աւստրիա-Ունգարական կայսեր հետ, այցելութիւնը Անգլիայի թագուհուն և տեսութիւնը անգլիական մեծ նաւախմբին, այցելութիւն թիւրքաց Սուլթանին, Անգլիայի

հետ համաձայնութիւն կայացնելը Աֆրիկայի կողմնասիրի նկատմամբ, Հելզոլանդ կղզին ձեռք բերելը Գերմանական ծովում, գերմանական նաւատորմի զարգացման նւիրած մեծ ուշադրութիւնը և նրան տւած մեծ զարկը այս վերջին տարում, առանց մի բոլոր մոռացութեան տալու ցամաքային զօրքի զարգացումը, — այս բոլորը միասին առած այն տպաւորութիւնը առաջացրին, որ չը նայած իւր անփորձութեան՝ կայսր Վիլհելմ II ընդունակ է Գերմանիան իւր փառքի և մեծութեան մէջ պահել առանց հարկաւորութիւն զգալու՝ իշխան Բիսմարկին խորհուրդի կանչել:

Մի բան, որ մանաւանդ ընդունակ էր Վիլհելմի հռչակը բարձրացնելու, այդ նորա ձգտումն էր մի տեսակ համերաշխութիւն կայացնել Եւրոպայի պետութիւնների մէջ: Եւ այդ գերը կարծես նրան նամանաւանդ սաղում էր, որ նա միևնոյն ժամանակ ապացոյցներ էր տալիս որ զինուորական գործը և սիրում է և հասկանում: Այդ ճանապարհի վերայ նա այնքան հեռու գնաց, որ ուղեց մինչև անգամ փորձ փորձել Ֆրանսիայի հետ բարեկամական շարաբերութիւն կցելու. այնպէս որ նրան սկսեցին վերագրել նոյն իսկ այս ամենահամարձակ զինուորութիւնը՝ այցելել Ֆրանսիայի մայրաքաղաք Պարիզը: Այն միանգամայն սիրալիր ընդունելութիւնը որ նա արեց Ֆրանսիական ներկայացուցիչներին՝ Բերլինում գումարւած բանորական խնդրի կոնֆերենցիայի ժամանակ, անցագրային խիստ կարգադրութիւնների մեղմացնելը Ֆրանսիական սահմանի համար, իւր բարեկամական շարաբերութիւնը և նամակագրութիւնը գեներալ Բուլլըգէֆրի հետ, այն ցաւակցական հեռագիրը, որ կայսրը նորերումս ուղարկեց Գեղարեւոտների Ակադեմիային մեծ նկարիչ Մէսոնիէի մահւան առիթով. յետոյ վերջապէս այն հրաւերը որ արեց մօտերումս Ֆրանսիական նկարիչներին որ մասնակցեն Բերլինի նկարչահանդէսին (դէպք, որի մասին այս յօդւածում զեռ պէտք է խօսք լինի), այս բոլորը պէտք է նախապտորաստէր Ֆրանսիացիներին՝ գերմանական կայսեր կողմից Պարիզը այցելելու զէպքի համար:

Զը մոռանանք, որ այս բոլոր մեր պատմածը ոչ այնքան կայսր Վիլհելմին բնորոշելու համար է, որքան նորա և իշխան Բիսմարկի մէջ ծագած թշնամական շարաբերութիւնների առիթով է: Բանը նրանումն է, որ այն բոլորը ինչ արաւ Վիլհելմ II այս վերջին տա-

րին՝ գերմանական ազգի մի մասին մոռացնել չը տւաւ Բիսմարկին։ Ինքը Բիսմարկ, որպէս դժգոհ դուրս գնաց Բերլինից, նոյնքան էլ դժգոհ մնաց իւր առանձնութեան մէջ Ֆրիդրիխսրուհէ՛ում, որտեղից նա սկսեց ընդունել հազար ու մի պատգամաւորութիւններ զանազան քաղաքներից և կորսորացիաներից, այցելութիւններ այլ և այլ կարևոր մարդկանց կողմից։ Նրան արձան կանգնացնելու համար առաջարկը ընդունեց այնքան մեծ ոգևորութեամբ, որ այլ և այլ քաղաքների կամաւոր նպաստներով շուտով գոյացաւ մօտ մի միլիօն մարկի ահազին գումարը, այսինքն մօտ այնքան, որքան և Վիլհելմ I կայսեր արձանի համար։ Այդ բոլորը կատարւում էր և այժմ էլ շարունակում է կատարւել, երբ ամենքին յայտնի է կայսեր և նախկին կանցլերի մէջ եղած յարաբերութիւնների լարւածութիւնը և երբ Բիսմարկի հակառակութիւնը արտայայտւում է թէ բերանացի և թէ հրապարակապէս, թէև ոչ ուղղակի՝ իւր անունով՝ «Համբուրգեան նորութիւններ» (Hamburger Nachrichten) թերթի միջոցով։

Շատ երկար կը լինէր պատմել մի առ մի բոլորը, ինչ ունեցել է Բիսմարկը մինչ այժմ յայտնելու ներկայ գերմանական կառավարութեան դէմ։ Բիսմարկի քննադատութիւնը ըստ երևոյթին տարածւում է Վիլհելմ II-ի արած բոլոր կարգադրութիւնների և արած բոլոր քայլերի վերայ՝ ներքին քաղաքականութեան և թէ արտաքին քաղաքականութեան նկատմամբ։ Նա հակառակ է և սխալ է՝ համարում սոցիալիստների դէմ 1878-ից մինչ հոկտեմբերը 1890 թ. գոյութիւն ունեցած բացառիկ օրէնքի վերացնելը, նա մեծ սխալ է համարում, որ կայսրը ուզում է բաժանել կայսերութեան կանցլերի պաշտօնը՝ պրուսական մինիստրների նախագահութեան պաշտօնից, նա մեծ սխալ է համարում, որ ամեն մի պրուսական մինիստրին առանձին պատասխանատու է դարձնում իւր առջև, փոխանակ բոլորի պատասխանատուութիւնը կենդրոնացնելու պրուսական մինիստր-նախագահի անձնաւորութեան մէջ, որ միևնոյն ժամանակ կայսերութեան կանցլեր պէտք է լինի, որպէս զի կատարեալ համերաշխութիւն լինի կայսերական քաղաքականութեան մէջ։ Նա վտանգաւոր է համարում, երբ, զրկելով կանցլերին առաջնաց մեծ հեղինակութիւնից՝ ինքը կայսրն է միացնում իւր անձի մէջ՝ նաև անմիջական պատասխանատուութիւնը բոլոր գործերի համար և

այլապիսով ենթարկում իրան կուսակցական կռիւներին, որից անաջող դէպքերում կարող է նւագել կայսերական թագի վեհութիւնը և պրեստիժը ժողովրդի աչքում. նա գտնում է թէ Գերմանիան այժմ արդէն ստիպւած է Աւստրիայի բարեկամութիւնը սրահպանելու համար նորա յեռեկից վագել, և որ եռապետեան դաշնակցութեան մէջ թէ ասաջ անկասկած ղեկավարը Գերմանիան էր՝ այժմ կշիռը թեքում է դէպի Աւստրիա-Ունգարիա, շնորհիւ Վիլհելմի բռնած անաջող դիրքի դէպի Ռուսիան. նա գտնում է, որ Անգլիայի հետ կայացրած համաձայնութիւնը գերմանական կոլոնիաների սահմանների մասին միմիայն օգտակար է եղել Անգլային և որ Անգլիան շլացրել է Վիլհելմ կայսրին՝ զիջանելով նրան փոքրիկ և իբր թէ անարժէք Հելգոլանդ կղզին և դորա փոխարէն իւր ձեռքը զցել Զանզիբար կղզին, որը Աֆրիկայի հարաւ-արեւելեան մասի ամբողջ առւտուրի իշխողն է. վերջապէս այս նորերս «Համբուրգեան նորութիւններ» թերթը, որպէս Բիսմարկի օրգան, զզուշացրեց Վիլհելմին, սխալ քայլ համարելով նորա մօր Ծրիդրիխ կայսերուհու այցելութիւնը Պարիզ քաղաքին, ասելով թէ «չը պէտք է կոնֆլիկտ առաջացնել Ֆրանսիական ազգի բնական քաղաքավարութեան զգացմունքի և բնածին հայրենասիրական զգացմունքների մէջ»:

Մենք չիշեցինք միմիայն ինչ ներկայ տողերը գրելիս՝ մեր չիշողութեան մէջն է: Բայց բաւական է այդքանն էլ, ցոյց տալու համար իշխան Բիսմարկի քննադատութեան ուղղութիւնը:

Ակզբում Բիսմարկի բռնած դիրքը դէպի գերմանական այժմեայ կառավարութիւնը վիրաւորւած առիւծի մանչիւն ընդունեց: Բայց մէկ, երկու, երեք և արդէն այն դատաւ մի քաղաքական խնդիր: Հասարակաց կարծիքը սկսեց դորանով արդէն լրջօրէն զբաղւել. կայսր Վիլհելմ և իւր կառավարութիւնը յուզւեցին. կանցլեր Կապրիւին հարկաւոր համարեց թերթերի օգնութեան դիմել և «Հիւսիսային գերմանական ընդհանուր լրագիր» (Norddeutsche Allgemeine Zeitung) մի ժամանակ թունդ Բիսմարկեան թերթի միջոցով կիսապաշտօնական պատասխաններ տալ Համբուրգի թերթին: Լուրեր տարածւեցին, թէ կայսրը մտադիր է դատի կանչել իշխան Բիսմարկին: Ահագին թւով յօդածներ գրւեցին մինչև անգամ այս թեմայի վերայ թէ արդեօք Բիսմարկը իրաւունք ունի խօսելու և գրելու քա-

ղաքական գործերից թէ ոչ: Բիսմարկին դատի կանչելու մասին լուրը բնական յուզմունք պատճառեց, որովհետեւ շատերը այն կարծիքի են որ մի այդպիսի անցք չի կարող առանց հետեւանքի անցնել նոյն իսկ կայսերական գահի հաստատութեան համար: Այսպէս սակայն նորերումն մի օտար պետութեան, ենթադրում են թէ Ֆրանսիայի դեսպանին յայտնել է որ ինքը երբէք աշխարհքին այդպիսի տխուր տեսարան ներկայացնելու պատճառ չի դառնալ:

Բիսմարկի և Վիլհելմի մէջ տիրող լարածութեան ծանրութիւնը նրանումն է կայանում, որ Գերմանիան բուն պարլամենտական երկիր չէ: Եթէ պարլամենտական երկիր լինէր— Բիսմարկը կը ընտրէր րէյխստագի (գերմանական կայսերութեան պատգամաւորների ժողովի) անդամ, կը կազմէր իւր կուսակցութիւնը և եթէ այդ հակադիր կուսակցութիւնը ջաղթէր ընդհանուր ընտրութիւնների ժամանակ՝ նորա չէ՛քը՝ Բիսմարկը նորից կը կանչէր կառավարութեան մէջ և կը ստանար իւր նախկին պաշտօնը ու կը կառավարէր իւր ձեռով, մինչև որ նորա հակառակ կուսակցութիւնը ջաղթէր: Բայց հէնց Բիսմարկի ստեղծած գերմանական սահմանադրութիւնը՝ չափած և ձևած պրուսական տրագիցիանների վերայ, այդ տեսակ երևոյթի տեղի ունենալուն արգելք է դրել: Այդտեղ կայսրը ունի իւր կառավարութիւնը և իւր պաշտօնեաները բոլորովին անկախ պարլամենտական կուսակցութիւններից. այնպէս որ ամեն մի զօրեղ ընդդիմադրութիւն կառավարութեան դէմ՝ արդէն կուսակցական ընդդիմադրութիւն չի համարուում, այլ անձնական թշնամութիւն. իսկ այս դէպքում, երբ Բիսմարկն է հակառակողը— այդ անձնական թշնամութիւնը կարող է լինել միմիայն Բիսմարկի և կայսր Վիլհելմի մէջ: Եւ հէնց շնորհիւ այդ հանգամանքի Բիսմարկը, որպէս հասկանալի է, երբէք չի կարող կրկին կանչւել կառավարութեան մէջ՝ առանց գորանով խախտելու կայսր Վիլհելմ II-ի անձնական դիրքը: Ասել է թէ այդպիսի դէպք դուրս է ամեն հաւանականութիւնից և Բիսմարկը բոլորովին շանս չունի կրկին Գերմանիայի կանցլեր և պրուսական մինիստր-նախագահ դառնալու բացի ամենակրիտիքական բոպէներից:

Գորանով ի հարկէ խնդիր չի պարզւում, որովհետեւ Բիսմարկի ազիտացիան ընդդէմ այժմեայ գերմանական կառավարութեան՝ ունի

իւր նշանակութիւնը նաեւ բոլորովին անկախ նորանից՝ թէ Բիսմարկ կը դառնայ թէ ոչ Գերմանացի քաղաքականութեան ղեկավար-կանց-լեր և մինիստր: Կարևորը այս է որ Բիսմարկ չի ճանաչւած որպէս քաղաքականապէս մեռած մարդ. նա այժմ էլ ազդում է գերմանական քաղաքական ընթացքի վերայ, և այդ ազդեցութիւնը նւազում է կամ պակասում, նայած թէ ինչ աջողութիւն կամ անաջողութիւն է ունենում կայսր Վիլհելմ II իւր քաղաքականութեան մէջ:

Եւրոպայի մամուլի աւելի ազատասէր մասը այդ խնդրում բռնում է Վիլհելմ II-ի կողմը՝ ընդդէմ Բիսմարկի, այս բոլորովին հասկանալի պատճառով, որ Վիլհելմի ծրագրի մէջ կայ բոլոր այն յաւաքիմականը, ինչ կայ Բիսմարկի ծրագրի մէջ, բայց գոնէ առայժմ առաջինի ծրագրից դուրս է մղւած այն բունակալ ձեւը, որով Բիսմարկը առաջ էր տանում իւր՝ քաղաքականութիւնը: Բայց իրանց ներքին համոզմունքների նկատմամբ՝ նոցա մէջ գրեթէ ոչ մի տարբերութիւն չկայ: Մէկը աշխատեց ամեն կերպ՝ կայսերական զահլ ամուր հաստատել, միւսը, որ այժմեայ կայսրն է՝ օգտւում է ստեղծւած դիրքից՝ որ ինքը անձնապէս կառավարէ և ղեկավարէ: Մէկը թշնամի էր սոցիալիստներին, միւսը, կայսրը՝ նոյն չափ թշնամի է. մէկը կոլոնիաներ ձեռք բերելու կուսակից էր և ձեռք բերեց. միւսը նոյնպէս մեծ զին է դնում կոլոնիաների վերայ և աշխատեց միայն ցրւած կոլոնիաները կոլսլացնել, միութեան բերել: Մէկը սկսեց բանւորական օրէնսդրութիւնը, միւսը, կայսրը, նոյնը և նոյն ոգով եռանդով շարունակում է: Մէկը ստեղծեց եռապետեան դաշնակցութիւնը միջին Եւրոպայում, միւսը, կայսրը, նոյն դաշնակցութիւնը աշխատում է խնամքով պահպանել: Մէկը միլիտարիզմի վերայ էր հիմնում իւր ոյժը, միւսը, կայսրը, անձնաւորացած պրուսական օֆիցերն է որ կայ: Վերջապէս Բիսմարկի և նորա հոգեկան սանի, Վիլհելմ II կայսեր մէջ՝ հիմնական տարբերութիւն մենք դժւարաւնում ենք գտնել: Այդ երկուսից մէկը վարպետն է, միւսը աշակերտ — ահա զանազանութիւնը: Եւ ի զուր չէր այժմեայ գերմանական կայսրը, թազաժառանգ եղած ժամանակ՝ Բիսմարկի անունով երդւում, անգամ ընդդէմ իւր հօր՝ իսկ որ նոցանից շատ տարբեր՝ ազնւամիտ Թրիդերիկոսի դէմ, որին վաղաժամ մահը թոյլ չը տւեց, որ իւր ողին տարածւէր այժմեայ սերունդների վերայ: Բայց նա

միայն բաւականաչափ հեղինակութիւն կ'ունենար Բիւմարկի անձնական ազդեցութեան դէմ յաջողութեամբ մարտնչելու, հեղինակութիւն, որ Վիլհելմ II-ին դեռ ևս պակաս է: Եւ հեղինակութեան պակասութիւնը այնքան է, որ, ամեն մի անաշուղ դէպքում, մարդիկ կամայ ահամայ հարցնում են՝ ինչպէս կ'աներ այդ դէպքում Բիւմարկը:

Մենք կարծում ենք որ այսքանովս բաւականաչափ պարզեցինք Վիլհելմ II-ի և իշխ. Բիւմարկի տարածաշուժեան խնդիրը այնպէս ինչպէս նա կայ այժմ: Մեր տպաւորութիւնը այդ խնդրում այս է որ Վիլհելմը կամենում է միայն կանցլերից անկախ գործել, բայց որ իւր ոգով և ուղղութիւնով Բիւմարկի իդէալներին՝ հետուի գնում, այս զանազանութեամբ միայն որ Բիւմարկը աւելի լաւ էր կշռում իւր անելիքը քան Վիլհելմը: Վերջինս փորձում է աւելի խաղաղ ծանապարհով նոյն նպատակներին հասնել, փորձում է նոր յարաբերութիւններ կցել գերմանական կուսակցութիւնների հետ որպէս և օտար պետութիւնների հետ, աշխատում է մօտեցնել իրան այն ամենքին որոնք չէին մօտենում Բիւմարկի ներկայութեան պատճառով, — բայց այդ ամենի մէջ Վիլհելմը չէ ղեկավարում այլ իդէալներով քան ունէր Բիւմարկը: Եւ հէնց որ անաշուղութեան է հանդիպում նա զիմում է Բիւմարկի գործադրած միջոցներին: Նա կարծում էր, օրինակ, որ, առանց զիջողութիւնների բուլղարական խնդրում, կարող է իւր նոր ստեղծած դիրքի շնորհիւ բարեկամացնել Ռուսիային: Եւ սխալւեց: Եւ նա կարծում էր, որ առանց որ և է փոփոխութեան Ֆրանկֆուրտի դաշնադրութեան մէջ՝ կարող է իրան մօտեցնել Ֆրանսիային: Պարիզում նորերս պատահած դէպքը եկաւ համոզեցնելու որ Վիլհելմը նաև այդ խնդրում չարաչար սխալւեց: Ահա այդ դէպքն է, որ աղմկալի արձագանք ունեցաւ ամբողջ Եւրոպայում և որը որոշիչ նշանակութիւն է ունենալու Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնների համար:

Յայտնի է, որ 1870—71 թւականի Ֆրանս-գերմանական պատերազմում յաղթւած Ֆրանսիան, բացի մի քանի միլիարդ ֆրանկի տուգանքից՝ կորցրեց նաև իւր երկու զեղեցիկ պրովինցները՝ Էլզասը և Լոթարինգիայի մի մասը: Այդ ժամանակ, որքան էլ Ֆրանսիան թէ հողեկան և թէ բարոյական և թէ նիւթական ճնշման մէջ էր՝

այնու ամենայնիւ միանգամայն ակներև կերպով իրան զրեց թշնամական յարաբերութիւնների մէջ դէպի Գերմանիան, միևնոյն ժամանակ զործ դնելով պատմութեան մէջ թերևս չը տեսնուած ջանքեր և զոհողութիւններ՝ նոր զօրք ստեղծելու և երկիրը ըստ ամենայնի թէ նիւթապէս և թէ մտաւորապէս այն զրութեանը հասցնելու, որ կրկին կարողանայ իւր նախկին առաջին զիրքը Եւրոպայում ձեռք բերել: Մի խօսքով Ֆրանսիան, հազիւ պատերազմը վերջացած՝ սկսեց պատրաստուել վրէժխնդրութեան համար: Եւ ահա քսան տարի է որ «ուրանը» (վրէժխնդրութիւն) խօսքը Ֆրանսիացիների բերանում միշտ և ամեն դէպքում կրկնում է: Այդ միտքը Ֆրանսիացիներին ոչ մի բույս էի թողել, բայց նա՝ Գերմանիայի անկասկած հզօրութեան դիմաց՝ միշտ էի արտայայտուել հաւատարմապէս աղմկալի և սպառնական ձևով: Ֆրանսիան մի տասնեակ տարում արդէն այն ատօնիման վերակազդուրեց, որ ի նկատի առնելով Ֆրանսիացիների տաք տեմպերամենտը և ինքնամոռացութեան և չափազանց ոգևորւելու յատկութիւնները, որպէսնաև կառավարութեան չափազանց ենթարկւած լինելը հասարակաց կարծիքին, որ յաճախ կազմւում է ամբոխի ազմուկների ազդեցութեան տակ, — ի նկատի առնելով այդ բոլորը, ասում ենք մի նոր պատերազմ անկասկած շուտով կը բռնկւէր, եթէ Գերմանիան չը լինէր զօրքի և քաղաքականութեան մէջ այնքան ահարկու զօրեղ, որքան նա էր 1871 թւականից դէս Վիլհելմ I-ի, Բիսմարկի և Մոլտկէի օրերով: Այդ մենք համարում ենք դուրս ամեն կասկածից: Կարելի է աւելացնել, որ նոյն իսկ այդպիսի վտանգաւոր պայմաններում եղան դէպքեր, երբ պատերազմը կը դառնար անխուսափելի, եթէ միայն Ֆրանսիայում այդ բույսներում խելացի և սառն դատողութիւնը չաղթանակը չը տանէր ամբոխի բռնկւած կրքերի վերայ: Բուլանժական շարժումը նշանակեց վտանգաւոր յարաբերութիւնների գազաթնակէտը, 1888-ից սկսած մինչ 1889 թւականի առաջին ամիսները, երբ կառավարութիւնը, մանաւանդ շնորհիւ ներքին գործերի եռանդատ մինիստր Կոնտամանի, նկատելով բուլանժականութեան վտանգը թէ արտաքին և թէ մանաւանդ ներքին գործերի համար՝ ամենախիստ միջոցների չը գիկէր Բուլանժէից և սորա ընկերակիցներից կեղծ դիմակը պոկելու և նոցա դուրս վճռուելու երկրի սահմաններից:

Հանգամանքը այս է, որ վրէժխնդրութեան գաղափարը մնաց կենդանի, բայց այդ գաղափարը ամեն անգամ հրապարակ հանելը վտանգաւոր համարւեց լոկ այն պատճառով, որ բոլորովին անհաշ-ւելի են այն կորուստները, որ կը կրէ Պրանսիան եթէ նա մի երկ-րորդ անգամ յաղթէ Գերմանիայից: Իսկ այդ ինքն ըստ ինքեան շատ ուժեղ, առնւազը Պրանսիային հաւասար Գերմանիան 1879-ից դէս աւելի ևս ուժեղացաւ նախ Աւստրիայի հետ, ապա նաև Պրանսիայի հարևան Իտալիայի հետ պատերազմական դաշնակ-ցութիւն կազմելով, մինչդեռ Պրանսիան մնաց միայնակ, առանց երաշխաւորութեան թէ որևէ այլ զօրեղ տէրութիւն իրան օգնու-թեան կը գայ: Այդ տարիներումն է ահա որ Պրանսիայում սկսեց բողբոջներ արձակել Ռուսիայի հետ սերտ բարեկամութիւն պահպա-նելու գաղափարը, մանաւանդ որ Ռուսիան նոյնպիսի մի բարեկա-մութիւն Պրանսիայի կողմից սկսեց թանկ գնահատել, քանի որ Գեր-մանիայի դաշնակցութիւնը Աւստրիայի հետ ուղղակի Ռուսիայի դէմ գործելու համար կապւեց: Եւ որքան Բիսմարկը ամրացրեց Գերմա-նիայի բարեկամութիւնը Աւստրիայի և Իտալիայի հետ—նոյնքան էլ աճեց և ամրացաւ Պրանսիայի և Ռուսիայի փոխադարձ բարեկամու-թիւնը, այս զանազանութեամբ միայն, որ առաջինների մէջ դիւա-նագիտական բոլոր կանոններով թղթի վերայ, դաշն կապւեց, իսկ վերջիններիս մէջ դաշն չը կապւեց և մինչ օրս էլ չի կապւել և երևի չի էլ կապւելու:

Որ այդ պայմաններում գերմանական-աւստրիական-իտալական դաշնակցութիւնը աւելի զօրեղ է, այդ երևում է այն փաստից, որ շնորհիւ այդ դաշնակցութեան ոյժի՝ Բալկանեան թերակղզին, դորա մէջ և Բուլղարիան՝ լուեց Ռուսիայի անմիջական ազդեցութիւնից. իսկ միւս կողմից Իտալիան թէև ոչ մեծ յաջողութեամբ, բայց և այնպէս համարձակ կերպով սկսեց իրագործել իւր կոյնիական քա-ղաքականութիւնը արևելեան Աֆրիկայում և երրորդ՝ Գերմանիային յաջողեց, որ վրէժխնդրութեան զգացմունքը Պրանսիայում եթէ ոչ անցայտանայ, զոնէ միշտ և ամեն բոպէ աղմկալի և սպառնալի կեր-պով չ'արտայայտուի:

Հիմք կայ ենթադրելու, որ Վիլհելմ կայսրը շողոքորթում էր իրան այս մտքով, որ իրան կը յաջողւի գլուխ բերել այն, ինչ չը կա-

րողացաւ զլուի բերել ոչ իւր մեծ պապը և ոչ Բիւմարկը, այն է՝
 Ֆրանսիայի բարեկամութիւնը: Եւ իսկապէս այդ կէտ նպատակի հա-
 մար Վիլհելմ կայսրը սկսեց բանեցնել Ֆրանսիայի նկատմամբ մի
 քաղաքավարութիւն, որ սովորական չէր: Յայտնի է որ 1888 թ.
 մայիսին Բիւմարկը, Վիլհելմ I-ի ժամանակ, անցագրային (պաս-
 պորտ) մի յատուկ օրէնքով չափազանց զժւարացրել էր Ֆրանսիացի-
 ների երթևեկութիւնը Ելզաս-Լոթարինգիայում, որպէս զի Ֆրան-
 սիացիք հնարք չունենան այդ երկիրը ազատ գնալ ու գալ և Ֆրան-
 սիական պրուպագանդ չանեն Ելզաս-Լոթարինգացոց մօտ: Այդ օրէն-
 քով պահանջոււմ էր ամեն Ֆրանսիացուց, որը այդ երկիրնէն էր
 ուղղոււմ գնալ՝ թույլաութիւն խնդրել Գերմանիայի ղեսպանից Պա-
 րիզում: Վիլհելմը, տեսնելով թէ ինչ կատաղութիւն է յարուցա-
 նում այդ օրէնքը թէ Ֆրանսիացոց և թէ Ելզաս-Լոթարինգացոց
 մէջ, թէև չը վերացրեց, բայց շատ մեղմացրեց այդ օրէնքի գործա-
 դրութիւնը: Իբր թէ ահա մի ապացոյց, որ Գերմանիան ուղղոււմ է
 հաշտ լինել Ֆրանսիայի հետ: Յայտնի է նաև այն մեծ ուշադրու-
 թիւնը, որով շրջապատեց Վիլհելմ կայսրը Ֆրանսիական պատգա-
 մաւորներին, որ ուղարկած էին բանւորական խնդրի համար կազ-
 մած կոնգրեսին մասնակցելու համար և այն բարեկամութիւնը, որ
 Վիլհելմը շարունակեց ունենալ այդ պատգամաւորների զլուի ժիւլ
 Սիմոնի համար: Յայտնի է նորա յարաբերութիւնը գեներալ Բուա-
 դըգրեֆրի հետ, որին նա ծանօթացել էր ռուսիական զօրախաղերի
 ժամանակ: Յայտնի է վերջապէս այն հեռագիրը, որ ուղարկեց կայսրը
 Ֆրանսիական Գեղարեւոտական ակադեմիային՝ Մէսոնիէի մահւան
 առիթով: Բայց ահա և այժմ Բերլինում սարքոււմ է Գեղարեւո-
 տահանդէս, ուր Ֆրանսիական բաժնի համար պահւած էին ամե-
 նազեղեցիկ տեղերը, միանգամայն յուսալով որ Ֆրանսիացիք չեն մեր-
 ժիլ այդ հանդէսին մասնակցելու: Հանդէսի կառավարիչը՝ նկարիչ
 Վերներ զիմուսն էր արել Ֆրանսիական նկարիչներին, որոնցից շատ
 շատերը իրանց պատրաստականութիւնն էին յայտնել հանդէսին մաս-
 նակցելու: Այդ դրութեան մէջ էր գործը, երբ յանկարծ խմացւեց որ
 Վիլհելմ կայսեր մայրը ուղղոււմ է այցելել Պարիզը այդ քաղաքի
 գեղարեւոտական աշխարհի հետ անձամբ ծանօթանալու համար,
 Բայց և հաւանական համարւեց, որ կայսրուհին դալիս է Պարիզ

յորդորելու Ֆրանսիական նկարիչներին որ մեծ թւով մասնակցեն Բերլինի գեղարւեստահանդէսին: Պարիզի ժողովուրդը այդ բանին տեց քաղաքական նշանակութիւն: Նեթադրեցին թէ կայսրուհին հող է պատրաստում որ ապագայում ինքը կայսր Վիլհելմ կարողանայ այցելել Պարիզը և դորանով մի տեսակ հաշտութիւն և բարեկամական կապ հաստատել Ֆրանսիայի հետ, մոռացնել տալ վրէժ-խնդրութեան գաղափարը և, զուցէ, այդ երկու մինչ այժմ ռսերիմ թշնամիները այնքան իրար բարեկամանան, որ Ֆրանսիան թողնի Ռուսիայի բարեկամութիւնը, մօտենայ Գերմանիային և այդ բարեկամութիւնից դուրս գալ եւրոպական տերութիւնների այլ քաղաքական համախմբումն, քան մինչ այժմ Լար, այսինքն քան այն, ինչ ստեղծել էր Բիսմարկ: Կայսրուհի Ֆրիդրիխը (այսպէս է կոչւում Վիլհելմ II-ի մայրը, իւր հանգուցեալ ամուսնու անունով), որպէս առաջ յայտնւած էր, պէտք է մնար Պարիզում միայն երկու օր. բայց նա մնաց մի ամբողջ շաբաթ, որի ընթացքում, կասկածը չայտնելուն պէս, սկսեց կատաղի վիճաբանութիւն զլիսաւորապէս լրագիրների մէջ և վիրաւորական յարձակումներ կայսրուհու և Գերմանիայի վերայ: Նկատելով քաղաքական աստուծը, ազգասէրները աղմուկ բարձրացրին և սպառնացին անգամ այն նկարիչներին, որոնք կը համարձակեն մասնակցել Բերլինի գեղարւեստահանդէսին: Այդ աղմուկը բարձրացողն էր բանաստեղծ Պերուլէի, որը աւելի քան ով և իցէ վառ է պահել Ֆրանսիացիների մէջ վրէժխնդրութեան զգացմունքը, բայց մի մարդ, որը մեծապէս իւր վարկը վայր դրեց միանալով Բուլանժէի հետ, որի կուսակցութեան պարագլուխներին է նա այս մի քանի տարիներից ի վեր: Եւ այդ իսկ բանի շնորհիւն է, որ «Ազգասէրների լիգա» կոչւած ահագին և ուժեղ ընկերութիւնը, որի նախագահն էր Պերուլէի, բուլանժական շարժման ժամանակ լուծեց կառավարութեան կողմից, քանի որ այդ ընկերութիւնը, շնորհիւ Պերուլէի, ուզեց քաղաքական դեր կատարել՝ օրգան դառնալով Բուլանժէի ձեռքում: Բայց, որպէս երևում է, ընկերութիւնը թէև լուծւած է, կազմակերպութիւնը այնու ամենայնիւ մնում է, այնպէս որ հարկաւոր եղած ժամանակ՝ Պերուլէի կարողանում է ոտի կանգնեցնել հազարաւոր մարդկանց և նրանց հրահանգներ տալ: Բարեբաղդաբար նոյն իսկ Պերուլէի վճռեց կայսրուհի Ֆրիդրիխին

Թողնել ազատ շրջել քաղաքում, առանց փողոցներում ցուցեր սարքելու նորա դէմ, առանց շւացնելու, որպէս այդ եղաւ Խալանիայի հանգուցեալ Թազաւոր Ալֆոնս XII-ի նկատմամբ, որին շւացրին և ամօթահար արեցին Գերմանիայի հետ բարեկամութիւն հաստատելուց յետ՝ Պարիզ այցելելուն պատճառով:

Այժմուկը աւելի սաստկացաւ, կրքերը աւելի բորբոքւեցին մանաւանդ, երբ գերմանական մայր-կայսրուհին, իւր հետաքրքրութեանը բաւարարութիւն տալու համար, գնաց Պարիզին մօտ Վերսալը և Սէն Կլոս: Վերսալում նա այցելեց այն պալատը, որի ատշղամբից յայտարարեց 1871 թիւն գերմանական կայսրութեան հաստատուելը՝ գերմանական յաղթող զօրքերի առաջ: Սէն-Կլոսում նա այցելեց այն ամրոցները, որոնք ռմբակոծւեցին կայսրուհու ամուսնու, այն ժամանակ դեռ ևս Թազաժառանգ Ֆրիդրիխսի Գոլնդի ռմբերից: Ուրեմն կայսրուհին բոլորովին չը մտածեց, որ Պարիզ փալով, նա դոնէ պէտք է այնքան տակաւ ունենար, որ ոչնչով տեղիք չը տար Փրանսիացիներին յիշելու իրանց պատերազմական և քաղաքական անցաձողութիւնները: Կայսրուհին, ձեւացնելով իրան մի սոսկ ճանապարհորդ՝ վարեց այնպէս որպէս թէ 1870 — 71 թւականը անցած-գնացած տարի է և ինչ կատարել է — լոկ պատմութեանն է վերաբերում և կապ չունի ներկայիս հետ: Եւ նա սխալւեց: Պարիզի ժողովուրդը ուզեց հասկացնել, որ Գերմանիայում սխալւում են այդ նկատմամբ և որ Փրանսիայի ու Գերմանիայի մէջ չի կարող բարեկամութիւն լինել մինչև որ Ելզաս-Լոթարինգիան կը մնայ Գերմանիային:

Հետեւանքը այն եղաւ, որ բոլոր այն արտիստները որ խոստացել էին մասնակցելու Բերլինի հանդիսին՝ մէկը միւսի յետեւից իրանց խօսքը յետ առին, չուզեցալով հայրենասիրական գործերում երկպառակութիւն ստեղծել: Փրանսիացիք այդպիսով հրաժարւեցին գերմանական մի տօնին մասնակցելու: Յանձին իւր մօր՝ մեծ պարտութիւն կրեց կայսր Վիլհելմ II, քանի որ պարզւեց, որ իւր բոլոր պլանների մէջ Փրանսիայի բարեկամութեան նկատմամբ՝ չարաչար սխալւել էր: Դա մի քաղաքական խոշոր պարտութիւն էր, մանաւանդ որ Բիսմարկն էլ Համբուրգի Թերթի միջոցով յայտնել էր դեռ սկզբից որ կայսրուհին սխալ է գործում Պարիզ գնալով:

Անմիջապէս Վիլհելմ կայսրը պատասխանեց Ֆրանսիացիներին՝ վերականգնելով 1888 թվականի անցագրային օրէնքը իւր բոլոր նախկին խտուրթեամբ, որով իւր բարկութեան վրէժը կարծես ուզեց հանել Ելզաս-Լոթարինգցիներէն: Այդ քայլի սխալ լինելը հէնց սկզբից պարզուեց նոյն իսկ գերմանացիներին: Եւ որ զլիաւորն է այդ ցոյց տուեց Վիլհելմի քաղաքականութեան անկայուն բնաւորութիւնը, ի մեծ միտմարում թիւն Բիսմարկի այժմեայ կուսակիցներէ: Պարտութիւնը այդպիսով ոչ միայն դրսուցն էր, այլ և ներսում բայց թէ որքան մեծ է եղել պարտութեան տպաւորութիւնը, այդ երևում է նրանից, որ սկսել են լուրեր դալ Վիլհելմ II-ի և Բիսմարկի հաշտութեան մասին:

Z.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՀԵՂԻՆԷ» վէպի շարունակութիւնը, որ նշանակած էր ներկայ №-ի համար, կը տպւի հետեւեալ 4-րդ №-ում:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՎՆՊ: «Մուրճ»-ի հետեւեալ 4-րդ №-ից կ'սկսի տպագրուել վրաց վրպագրութեան ամենանշանաւոր գործը, իշխան Խլիա ճաւճաւաձէի «Կաղիա-Աղամիանի!» («Միթէ մարդ է-աղամորդի!») վէպը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ. «ԷՃԵՅՅԵ» պաշտօնական թերթում տպւած է. «Ներկալումս Պետերբուրգում Ներքին գործոց մինիստրութեան մէջ կազմւած են երկու լանձնաժողովներ, որոնցից մէկը վերաբերում է Նախակովկասի թուրքերի հողերու կառավարութեանը, իսկ երկրորդը՝ Կովկասի հայերի դրութեանը: Նրկու լանձնաժողովներին ևս նախագահում է Կովկասեան գլխաւոր կառավարիչ գեներալ-լէյտենանտ Ս. Ա. Շերեմետիւ: Յանձնաժողովը կազմւած է ղինւորական, ներքին և արտաքին գործոց և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնների անդամներից. մասնակցում է նոյնպէս Կիւնի գեներալ-նահանգապետ Իգնատիւ, մի քանի ուրիշ նահանգապետներ և ուրիշ հայկական ու թրքական գործերին տեղեակ մասնագէտներ:

Հաւոց գործերի համար կազմւած լանձնաժողովի մէջ պէտք է քննուի, ի միջի ալոց, Կովկասի հալ-լուսաւորչական եկեղեցական ղպրոցների կանոնաւորելու խնդիրը. միւս խնդիրն է՝ տէրութեան միտումներին աւելի համապատասխանող լարաբերութիւններ սահմանելը էջմիածնի ծաղրապոյն Կաթողիկոսի հետ:

ՎՈՎԿԱՍՆԱՆ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ (ցենզուրային) կ'ոմիտէ տիպէրսոն ալըպօ օրերս նշանաւոր փոփոխութեան ենթարկւեց: Փոխւեց կոմիտեի նախագահը, որի պաշտօնում մինչ այժմս էր իսկական քաղաքացիական խորհրդական Կոնստանտին Վատիլէի: Նախկինում վերջինս նշանակւեց Կովկասի կառավարչապետի խորհուրդի անդամ: Նորա տեղը զբաղեցնական կոմիտեի նախագահ նշանակւած է այժմ իսկական քաղաքացիական խորհրդական պ. Միխ. Պ.

Գահէլ, որ մինչ այժմ Կովկասի կառավարչականի մօտ առանձին լանձնարարութիւններէ պաշտօնեալ էր: Այս փոփոխութիւնից զեռ. ես ամիս առաջ հրաժարացուցիւր պաշտօնից արեւելեան լեզուներէ, գլխաւորապէս հայերէնի աւագ գրաքննիչ Ստրմոն-Աւագ-իւան Մելիք-Մհրաբեան եւ եւրոպական լեզուներէ, զխաւորապէս ռուսաց լեզւի աւագ գրաքննիչ պ. Բեզբրազով: Վերջինիս տեղը այժմ նշանակած է պ. Նեֆալ, իսկ Յ. Մելիք-Մհրաբեանի տեղը, զեռ. ես չգտնի չէ ով կը նշանակուի: Ներկայումս, ուրեմն Կովկասեան գրաքննական կոմիտեոյը կազմած է հետեւեալ կերպով՝

Նախագահ. պ. Մ. Պ. Գահէլ
Աւագ գրաքննիչ ռուսաց եւ եւրոպ. լեզուներէ իւրի Նեֆալ,
Աւագ գրաքննիչ հայոց եւ արեւել. լեզուներէ ?
Կրտսեր գրաքննիչ հայոց եւ արեւելեան լեզ. Պ. Գր. Ա. Կարախանեան.
Կրտսեր գրաքննիչ վրաց լեզւի. Իշխ. Ռաֆ. Էրխտով:
Փարտուղար կոմիտեայի Պ. Հ. Մելիք-Նուբարեան:

ԱՐՁԱԳԱՆՔԻ ՄՏՔՆՐԷ: Լոյս տեսաւ «Արձագանքը» ալս տարւալ առաջին Ձեռք, մարտ ամսի 10-ին: Բազց հետաքրքրականը ալ չէ. աւելի հետաքրքրականը սա է թէ մի թերթ, որը պատկերներէ ուժով ձգտում է ընթերցողներէ աւելի մեծ թիւ գրաւել, ինչ ողով է կեանքի մէջ մտնելու: Ալդ ոգին մենք գտնում ենք թերթի առաջնորդում, ուր հաղապիւս մարգարիտներ են շարած: Ահա մի երկու պրոքները:

I. «Արձագանքը» գիտութեան մասին՝ «Գիտութիւնը, որքան նա ծառայում է օրական եւ բնական պիտուքներին, մեզ չէ բարձրացնում, ալ ընդհակառակն, եթէ ճիշտ խոստովանենք, մի աստիճան իջեցնում է.

II. «Արձագանքը» ոչ պատկերազարդ պարբերական թերթերի նշանակութեան մասին: Լրագիրը. — «Բաղաճական հրական թերթերը աւելացնեմք մեր կողմից օրինակ՝ «Մշակ», «Նոր-Գար», Тифл. «Листокъ», «Новое-Обозрѣніе», «Իւերիա», «Temps», «Times»), գոգուում են մարդուանարկերն ուրուպէական հետաքրքրութիւնը գոհացնելով, անմիջապէս կ'օրցնում են իրանց նշանակութիւնն ու արդի, եւ նոցա վիճակն ալ գոհացման րուպէից սկսած չալտնի է ամենին՝ նոքա գործ են ածւում իբրեւ տնային տնտեսութեան համար կարեւոր թուղթ»...

Ամսագիրը եւ շաբաթաթերթը. «Միւս, ոչ պատկերազարդ, ամսագրերն (օրինակ «Մուրճ», Вѣстникъ Европы,

Revue des deux Mondes) ու շարաթաթերթերն (օրինակ Неделя, Gegenwart) իրենց նիւթերով շատ անգամ հետաքրքրում են միայն մասնագէտին, իսկ նորա դարձեալ ներդեր գրգռող մասն է միայն կարդացւում՝ դարձեալ շուտով մոռացւելու համար»։

Պատկերազարդ թերթը.—«Այլ է բոլորովին պատկերազարդ հանդիսի (օրինակ՝ «Արձագանք»), «Տարազ»-ի, «Нива»-ի (Gartenlaube-ի) ազդեցութիւնն ու վիճակը»։

Գալիս է փոստ թէ թերթում տպւող պատկերը թովշական և կախարդական, իդէալներին կենդանութիւն տւող ազդեցութիւն ունի և այլ հրաշքներ։

III. «Արձագանքի» խմբագիրը միւս հաջ թերթերի խմբագիր—հրատարակիչներին մասին.— «Մենք (այսինքն Արգար Յովհաննիսեան) բնաւ չենք ղեկավարւել նիւթական շահերի տեսակէտից... այն ինչ՝ ուրիշներին համար աչժմ լրագիր հրատարակելը ապրուստի խնդիր է դառնը»։

Եւ ինչ էք կարծում, ինչին էր հարկաւոր «Արձագանքին» այս ատիճանի մերկապարանոց լինել։ Նրեակալեցէք որ ալք բոլորը միայն նրա համար էր, որ լօղւածը վերջացնի այս պարզ փորացաւով՝

«Մեզ հարկաւոր է 1500 բաժանորդ»։

Յօղւածի բարոյականը՝ Հալեր, մի ստացէք և հարկ չկալ կարդալ մեր օրաթերթերը և ամսագրերը. դոքա միայն զրգուում են ձեր ներւերը և կամ ինչ կարգում էք՝ բոլորն էլ անմիջապէս մոռանում էք։ Ստացէք միայն «Արձագանք»-ը։ Միմիայն ալք կերպ զուք կարող էք Արձագանքին տալ 1500 բաժանորդ, որ նրան հարկաւոր է։

Բարի վաղիւրմն, bon appétit!

ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է մեզ յաւանել ի գիտութիւն, որ 1890 թ. գեկտեմբերի 16-ին ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը հետեւեալ որոշումը կապացրեց՝

1. Չքաւոր հալ գպրոցներին ընկերութեան հրատարակած գրքերի համար սովորականից աւելի զիջումն անել։

2. Ներկալ մարտից ընկերութեան անդամներին տալ իւրաքանչիւր տարւանից իրանց ընտրութեամբ 5 բուբու գիրք, ամեն մի գրքից մի օրինակ, դրա մէջ հաշւելով նաև անդամակցած տարում տպած գրքերի գինը։

ԻՆՁ-ԻՆՁ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ, ներկայ № 3-ի համար նշանակած լողածը Թիֆլիսի քաղաքապետի ընտրութիւնների մասին (Ամսաւ, քրոնիկ) և պ. Տ. Յովհաննիսեանի «Նամակ Ռուսաստանից» չը կարողացանք հրատարակել:

ՍՏԱՅԱՆՔ, բացի Գրախօսութեան վերջում լիւած 5 գրքերից՝ պ. Փիլիպպոս Վարդանեանցի թարգմանած հետեւեալ երեք թարգմանութիւնները.

6) ՏՈՒՍՏՈՅ, կոմս Լ.—«Ռուբինզոն» (փոքրերի համար): Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1891 թ., գինն է 20 կոպէկ:

7) Նոյն հեղինակ.—«Կոլումբ» (փոքրերի համար): Թիֆլ., 1891 թ., տպար. Մարտիրոսեանցի, գինն է 15 կոպէկ:

8) ՀԱՅՁԷ, Պաուլ.—«Բէատրիչէ» Թիֆլիս, տպար. Մարտիրոսեանցի, 1891 թ., գինն է 30 կոպէկ որպէս նաև

9) ՇՄԻԴՏ, Ֆերդինանդ.—«Նալ և Դամապեանթի», հնդկական առակ, Գերմաներէնից թարգմանեց Յովհան. Լալաւեան: Հրատարակութիւն Թիֆլիսի Հալոց Հրատարակչական Ընկերութեան: Թիֆլիս, տպար. Մարտ. 1891 թ., գինն է 20 կոպէկ:

III ՏԱՐԻ

„ՄՈՒՐՃ“

III ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1891

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակէի 1891 թւականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակէի ամէն ամիս 8—11 թերթ մեծութեամբ: «ՄՈՒՐՃ»-ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՆԵՐԸ ձրի կը ստանան ՏԻԿԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ «ՀԵՂԻՆԷ» վէպի 1890 թւականի «Մուրճ»-ում ապւած բոլոր գլուխները, այն է՝ վէպի առաջին հատորը, բաղկացած մօտ 200 մեծադիր երեսներից: «ՀԵՂԻՆԷ» վէպի շարունակութիւնը աւարտւելու է 1891 թ. ընթացքում:

«ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները, բացի դորանից, արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թւականների բոլոր 24 համարները 14 բուբլիով, մինչդեռ ոչ-բաժանորդներին կը ծախւի նոյնը 24 բուբլիով:

«ՄՈՒՐՃ»-ի գրականական մասը ազատհոգութեամբ և մասնակցութեամբ բաղմամբ աշխատակիցների, որոնց թիւը մինչ այժմ անդադար աճած է:

«ՄՈՒՐՃ»-ի վիպական բաժինը առանձին ճոխութիւն կը ստանայ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրի են է տարեկան 10 ռուբլի, որ կարելի է վճարել նաև մաս-մաս, ստորագրելիս առնադն 5 ռուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի, ստորագրելիս առնադն 3 ռուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրում են բաժանորդ «Մուրճ»-ին՝

1) «Մուրճ»-ի խմբագրատանը:

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Միրիմանովի:

3) Խիդեկելի պալատում, Ալեքսանդրեան աջու և Բարիատինսկի փողոցի վերին անկիւն:

4) Մակար Չմչկեանի գրավաճառանոցում՝ Վորոնցովի արձանի մօտ:

5) Եւանդուլովի «Городская справочная контора» ում, Գոլովինսկի պրոսպեկտ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԵՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Կ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թվականի, երկու կազմած հատորներով	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . .	7	—
3. ՊԻՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէպ)	1	—
4. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂԱՂԱՐՅԻ)՝ «Մանուկների մարտողութեան գործարանների մի քանի հիւանդու- թիւները»	—	05
5. ԱՏԲՊԵՏԵԱՆ, ՍԱՐԳԻՍ.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կա- թովիկների կեանքից	1	—
6. ԼԷՍ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	—	50
7. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՈՄՈՆ.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (կեանքից պատկեր)	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» .	—	60
9. ՊԻՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԵ», վէպ	1	20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բռնան. կեանքից —	—	15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը —	—	50
12. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.—«ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (սոհ- մադրական պատկեր)	—	15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» (կեանքի զծեր)	—	03
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» (կեանքի զծեր)	—	03
15. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ԵԶԻԳ ԱՂԶԻԿԸ» (կեանքի զծեր)	—	05

Վերոյիշեալ գրքերը ստանալու համար ցանկացողները թող ղի-
մեն ուղղակի՝ Вь Редацію журнала „МУРՇ“. Վճարել կարելի է
նաև պոստի մարկաներով:

ԲԱՅԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻԻՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՄՍԱԳՐԻ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

«ԱՂԲԻԻՐ»-ը կը հրատարակի նոյն ուղղութեամբ, ծրագրով և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օլէօգրաֆիա

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Խող արածացնելու

Երկրորդ պրէմիան կը լինի պ. Դէորդ Բաշինջազեանի

ԱԼԱԶԱՆԻ ՀՈՎԻՏԸ

մեծադիր և չքեղ ձիթանկարը, որը վիճակ կը գցւի բաժանորդների մէջ սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին:

Երրորդ պրէմիան 1892 թ. համար գեղատեմբերի №-ի հետ կ'ուղարկուի մի պատի տախտակ և մի գրպանի փաթեղիկ օրացույց: Բացի զրանցից, տարւալ ընթացքում կ'առաջարկեն հանելուկներ, բերուսներ, որոնցից վճռողները կ'ըստանան մրցանակներ:

«ԱՂԲԻԻՐ»-ի տարեկան բաժանորդագրին է 3 ռուբ. և պրէմիայի ճանապարհածախս՝ 28 կոպէկի փոստի մարկա:

Ապառիկ ոչ ոքից չի ընդունում:

Հասցէն՝ ТПОЛНЦЪ, редація „АГБЮРЪ“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase), rédaction de la revue AGBUR.

„ԱՂԲԻԻՐ“-Ի ՅԱԻԵԼԻԱՆ

„ՏԱՐԱԶ“

Երկրժաբանական — գեղարւեստական — գրական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱՐԱԹԵՐԹԸ

1891 թւականին հասցրած կը լինի նկարների կողմից մալրաքաղաքներում հրատարակող շաբաթաթերթերի հոխութեանը: Բովանդակութեան կողմից պատկերապարզ «Տարազ» շաբաթաթերթը նոյնպէս ճոխ կը լինի և բաղմակողմանի: Վիպական մասը, որ պատկերապարզ «Տարազ» շաբաթաթերթում նկարների հաւատար ատաջին տեղը կը բռնէ, կը տպագրեն մի չարք պատմական և ժամանակակից վէպեր, հանգուցեալ Բաֆֆիլի, Նրաթողած ձեռագիրներից, պ. պ. Աղաբեանի, Պոօչեանի, Լէօն, Վ. Փափազեանի և ուրիշների: Պատկերապարզ «Տարազ» շաբաթաթերթը լոյս կը տեսնի ամեն կիրակի օր այժմեան «Տարազ»-ի դիւրով խաբանելու համարը երկու թերթից: «ՏԱՐԱԶ»-ի գինն է ռուբլի, «ԱՂԲԻԻՐ»-ի հետ միասին 8 ռուբլի 28 կոպէկ, իսկ առանձին՝ 6 ռ.:

ՀԱՅՍՏԵՍԱՐ

Ալեքսանդր Օստրեյսկի

„ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Ճանապարհածախսով 60 կոպեկ: Յանկացողները դիմում են հեղինակին հետևեալ հասցեով՝ Москва, Газетный переулок, д. Лянозова, въ типографию М. Бархударіанъ.

„Մ Ը Ա Կ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարւանը 6 ռուբլի: Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію газ. „МШАКЪ“.

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

ВЫХОДИТЬ ЕЖЕДНЕВНО, КРОМЪ ДНЕЙ ПОСЛѢПРАЗДНИЧНЫХЪ

ПОДПИСКА НА 1891 ГОДЪ

Условія подписки: въ годъ съ доставкой на домъ 4 р., съ пересылкой по почтѣ 5 р., на полгода 2 р. 50 к. и 3 р.

Подписка принимается не иначе, какъ съ перваго числа любого мѣсяца

Подписка принимается исключительно въ г. Тифлисѣ, уголъ Головинскаго проспекта и Бярятинской ул., домъ Ротина

Принимается подписка на 1891 годъ
на общественно-политическую и литературную газету

„КАСПІЙ“

(Изданія годъ одиннадцатый)

Значительно увеличивъ съ 1 декабря форматъ газеты,
редакція наша возможнымъ оставить прежнюю подписную цѣну, такъ
что въ 1891 году газета „Каспій“ будетъ стоить:


			Р. К.				Р. К.
Съ доставкой:	въ годъ	7	—	Съ пересылкою:	въ годъ	8	50
„ „	на полгода	4	—	„ „	на полгода	5	—
„ „	на 3 мѣсяца	2	50	„ „	на 3 мѣс.	3	—
„ „	на 1 мѣсяць	1	—	„ „	на 1 мѣс.	1	50

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ по соглашенію
съ редакціей, но съ тѣмъ, однако-жъ, условіемъ, чтобы при подпискѣ
было внесено не менѣе 3 руб. для городскихъ и 4 руб. 50 коп. для
многогороднихъ подписчиковъ, 15 февраля 2 р. и 15 марта 2 руб.

КРОМѢ ОБЫЧНЫХЪ ГАЗЕТНЫХЪ ОТДѢЛОВЪ

„Каспій“ имѣетъ обширный „Нефтяной отдѣлъ“, спеціально
преслѣдующій разработку вопросовъ русскаго нефтяного дѣла.

Подписныя деньги адресуются: г. Баку, въ контору газеты „Каспій“,
д. Красильникова. Въ Тифлисѣ подписка принимается при редакціи га-
зеты „Тифлисскій Листокъ“.



„Մ ՈՒՐ Ճ“

ՓԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԲԱՑԻԱԾ Է

Հրաւեր ենք կարդում հայ հասարակութեան՝ բաժանորդ գրել մեր միակ քաղաքական-հասարակական-գրական տնտգրին և միջոց տալ նրան այս 1891 թվականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

Տարեկան գինն է 10 ռ.

ԳՐԻՆԼ, ԿԱՐԵԼԻ Է

Թիֆլիսում՝

1) Խմբագրատան մէջ:

Բաքում՝

1) Թատայեանցի գրախճատ անոցում, 2) պ. Ա. Կաթիք Գուլիանցի մօտ (Մարդասիրական Գիտելութեան ընթերցարանում):

Երևանում՝

1) Սիրական Տէր-Մարտիրոսեանցի զբօսենեակում:

Խմբագրութիւնը դառնում է Վելիամինեան փողոց, առն թանգոյեանի, պրօզիմնադի զիմաց:

Ուրիշ տեղերից պէտք է ղրմել՝ Тифлисъ. Редакция журнала „МУРЧЪ“

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue MOURTCH